



Բ Ա Գ Ի Ն

Ե. ՏԱՐԻ 1966 ՅՈՒԼԻՍ
digitised by A.R.A.R.@

ԹԻԻ 7

باکین
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية
 مدير المسؤول
 السيد آر تین کارنیک قز انجیان

•

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE
 Propriétaire
 Dr. A. KAZANDJIAN

•

բ Ա գ ի ն
 ԱՄՍԱԳԻՐ
 ԳՐԱԿԱՆՆՈՒԹՅԱՆ
 ԵՒ ԱՐԹԻՍՏՅԻ

ԱՄԻՋ ԽՄԱԳԻՐ
 Կ. ՍԱՍՈՒՆԻ
 ԽՄԱԳԻՐԱԿԵՐ
 ԵՂ. ՊՕՅԱԺԵԱՆ, Պ. ՍՆԱՊԵԱՆ

ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ
 ԱՆԴԱՄՆԵՐ
 Յ. ԳԵՂԱՐԴ
 Յ. ՈՍԿՈՒՆԻ
 Բ. ՓԱՓԱԶԵԱՆ
 Վ. ՅԵԱԿՍՆ

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

- Ն. ՊԼՇԻԿՍԱՇԼԵԱՆ
- ԵԴ. ՊՕՅԱԺԵԱՆ
- Զ. ՈՐԲՈՒՆԻ
- ԱՐՄԱՆՏ
- Կ. ՍԱՍՈՒՆԻ
- Ա. ԳԱՌՕՆԷ
- Գ. ԱԲԷԼԵԱՆ
- Ն. ՓԱԹԱՆԵԱՆ
- Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ
- Բ. ՆՈՒՐԻԿԵԱՆ
- ԵԴ. ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ
- Յ. Գ.
-
- ՆՇՄԱՐՆԵՐ
- ՄՇԱԿՈՒԹՅԱԹԻՆ ԼՈՒՐԵՐ

ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՅԷ
G. SASSOUNI
 Rue Sélim Boustany, Beyrouth - Liban
 Հեռագրային թիվ 296898

Բազմը

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

Ս. ՅԱՐԻ, ԹԻՒՒ 7

Յ Ո Ւ Լ Ի Ս 1966

ՊԷՏՐՈՒՔ

ՄԵՂԵԴԻ ՈՒՄՏԱԾՈՒՄ

Գրեց՝ ՆՇԱՆ ՊԵՏԻԿՓԱՇԼԵԱՆ

Կը դիտենք համայնապատկերը, բարձունքի մը դարտամերէն:
 Մեր ճայումը կը բարձրանայ վարէն վեր ու կ'իջնէ բազմիցս:
 Ծովացած է ամենայն ինչ վարէն վեր:
 Ծով է երկիրը կապտորակ, որուն մէջ գիւղերը կ'զգենք եմ:
 Ծով է մշուշը, որուն մէջ կ'զգենք կ'զգենք են բլուրները:
 Ովկէանացած է Միջերկրականը:
 Ծով եմ նաեւ ամպերը, որոնք բռնած են ամբողջ հորիզոնը, որուն
 մէկ բացումէն կը հոսի վերջապէս, նման կրակէ ջրվեժի:
 Ծով է նաեւ երկինքը:
 Ծովեր՝ ծովերու վրայ:
 Իսկ վերէն վար երկինքներ՝ երկինքներու ներքեւ:
 Այս ծովերուն եւ երկինքներուն սահմանները կը մնան անյայտ:
 Հանդիսական ենք սիեզերական աստուածադրոշմ խառնուրդի մը,
 որուն մէջ ձուլուած են հոգ, շահագազ, ամպակոյտեր, երկնակամար,
 յարափոփոխ ճկարչութեամբ: Այս անհուն ու շարժուն ձուլարանին մէջ,
 ինչպէս եւ լոյսը ստեղծած են յարիւրիներս մը, որուն վեհափառութեամբ
 մէջ կը մտորի մեր հոգին, սակայն կ'ունենդրէ գազաճառագայթներ
 մասնակի:

3808

Վանական մը կ'անցնի ճանապարհէն ամայի: Վանականը մերդաշնակուած է այս բնութեան, այս տեսարանին հետ:

Անտեսանելի Աշը կ'ընէ կարգազրուիւններ, զգալի Շունը կը կատարէ տեղափոխութիւններ, քառսին մէջ ու լոյսին:

Յամբօրէն կը շարժի անծայր տեսիլը, ու երկինքը իր ամպերով կը քալուի ծովուն մէջ, մինչ վերջալոյսը վերածուած է հրեղէն շատուաններու, բռնկած վարդերով...

Ի՞նչ քառսային գեղեցկութիւն...

Մթնոլորտը լեցուած է ազօքճով:

Ծաւալած է լուսիւնը իրրեւ գոհաբանական մեղեդի:

Վերջալոյսին վիշտերն ու վերջերը հորիզոնին եւ հոգիներուն մէջ կ'անհունանան ու կ'արիւնհին...

Նրազանքը կ'ուզէ յափշտակել մեր հոգին, մինչդեռ խոկումը կը գրաւէ մեր միտքը:

- ... Բալորս ալ քառսի մը մէջէն պիտի մեկնինք մէկիկ մէկիկ, պիտի մեկնինք անվերադարձ: Այս երկրագունտ մը ճարտարապետութիւնը, այս երկրագունտ մը արձանագործութիւնը, այս երկրագունտ մը նկարչութիւնը, այս երկրագունտ մը երաժշտութիւնը, այս երկրագունտ մը աստուածաստեղծ, բարբախուն բանաստեղծութիւնը, իր կապոյտ կամարով, պիտի լինի ակամայ... Եւ տակաւին երկրագունտ մը ցուն ու վիշտը եւ չարչարանքը, նաեւ արգելքներն ու սաղբակները... Բաժակն ալ հանդիմանի, որմէ տրուեցաւ մեզի կաթիլ առ կաթ...: Աշխարհը որո՞ւ մընացած է, որ մնայ մեզի... Սակայն, դարձեալ դժուար է մխիթարուիլ...: Երանի՜ անոր որ ունի հոգեհարս մեղեդի մը իր էութեան մէջ հնչող: Նրք մը անհրաժեշտ է, տանելու տառազանքը: Արդէն, ըստ յունական գիցարանութեան, ստեղծուեցաւ երգը՝ Արգոնաւորդներուն համար, որպէսզի անոնք նուագին հնչական երաշխով կարենան կրել ծովուն դժուարութիւնները, յաղթահարելով խոթերուն եւ ալիքներուն: Կեանքն ալ ծով մըն է, որով անհրաժեշտ է երգը, վերանորոգելու համար խանդն ու հոսանքը: Երգով պէտք է սահիլ փոքորիկներու մէջէն: Դժբախտ է ա՛ն՝ որ երգ չունի: Հարուստը ա՛ն է՝ որ երգեր շատ ունի: Երգը ե՛ւ երազ է, ե՛ւ իրականութիւն, ե՛ւ գաղափար է, ե՛ւ գեղեցկութիւն, մի՛շտ իմաստ է, մի՛շտ նպատակ: Հոգեկան երգն է ան: Երգ սիրոյ...

Ամբողջ երկրագունտը, ամբողջ գիրն ու գեղարուեստը երգ մըն է, լուսերգ մը, որ կը կոչուի Բանաստեղծութիւն:

Ու Լիբանանը Երգ երգոց մըն է:



Ինչպէս որ կը գգամ հոգիիս բիրաւոր լարերով կապուած ըլլալը մարմնիս, կը գգամ նաեւ էութեանս բիրաւոր լարերով կապուած ըլլալը կեանքին, ինչպէս կը գգամ բիրաւոր նար լարերով կապուած ըլլալս Լիբանանի, իր բլուրներուն ու բարձունքներուն, իր աւաններուն ու ալիքներուն, իր տուններուն ու տեսիլներուն, իր կապոյտներուն ու կանաչներուն, իր վերելքներուն ու վերջալոյսներուն, իր լեռներուն, իր երազներուն, իր երգերուն...

Քիր անգամ բիրտուր թելերով կապուած խելանի խամանիկներ ենք մենք, այս աստուածային անվիթարտունին մէջ, ու կը խազանք Գիրին մեզի վիճակուած մասը... *Մէջքի՞նչ, մէջքի՞նչ...*: Կը թրթռանք յափշտակ-եալի գերին մէջ, ու լարերը կը շարժին...: Այս բիրտուր լարերը կը կազմեն անհուն տաւիզ մը, կապուած հագարումէկ սիրելիներու եւ հագարումէկ սիրուած վայրերու: Եւ եթէ մերթ կը փրթին քանի մը լարեր, մերթ ալ կ'անկնան ճորտուր լարեր, ու մեծ մեծերգը կը հնչէ...

Լիբանանը յարալի տաւիզ մըն է:
Լիբանանը լուսեղէն տաւիզ մըն է:
Հրեշտակներ իր վրայ կը թռնեն ու կը թրթռացնեն լարերը...
Լիբանանը երկնատուր տաւիզ մըն է, կախեալ կապոյտ կամարէն...



Հիմերը կը հուստային որ երբ տաւիզ մը ինքնաբերաբար հնչէ՝ չաբազուշակ է...
Աշխարհի մէջ կան այնքան տաւիզներ, որոնք կը հնչեն ինքնաբերաբար...
Ու մահերը կը յաջորդեն մահերու...
Նայեցէտ ծնունդները, որոնք ծննդաներով կը յայտարարուին...



Գիշերը քառս մըն է,
քառս մը սովական, քառս մը լուսազարդուած...
Եւ այս քառսը մեր ալ կեանքն է:
Խորին խաւար ու կէտեր լոյսի:
Կը մտնենք քառսին մէջ...



Լիբանանը կը ճիրիէ...
Ու կը տեսնէ երազներ...
Կանցնին հնադարեան գեղուհիներ, փիւնիկուհիներ եւ անոնք, շը-ղարշներով մետաքս: ու մեղեմիկէ:
Կը գովերգեն Լիբանանը:

ՆՇԱՆ ՊԵՇԻԿՈՒՇԼԵԱՆ

20215-087

«ԴՈՒՆ»

ՄԱՐԴԸ ՆՈՐԷՆ...

- Ինչո՞ւ այս կամքը հիմա, խոստովանիլ, փախչելու,
 Ինչո՞ւ այս տենդը հիմա.
 Մենիկ հա՛հ՝
 Անպարտա՛նքը հիմա...

- Ձիս ո՞վ ինձի կը բերէ,
 Գա՞լ մը անվերջ դէպի ներս,
 Թէ ոչ փախուստ մը անհո՞ր՝
 Սրտիս քալո՞ր բաներէն...

❖

- Ըսե՛լ կու տայ հիմա զիս,
 Ըսել կու տայ քոնօրէն,
 Բան մը՝ ներսէս, խորունկէս,
 Խոստովանո՞ղ մը նորէն...

- Ձրած ոչինչ՝ որչա՞փ մօտ եմ ես ինձի,
 Անկեզծ եմ եւ ի՛մքս եմ՝ սիրտ, մտածում եւ հոգի.
 Երբոր խօսիմ՝ կ'եզծուիմ, երբոր խօսիմ՝ կը սուհամ,
 Խօսեբրն զիս կ'այլայլեն, կ'այլանդակեն, կը տանին,
 Խորք մարդ կ'ընեն ինձի դէմ.
 Կը տարագրե՛ն, կը տարագրե՛ն,
 Հիմա եւ միշտ՝
 Կը դժոխե՛ն...

- Ըսուելէ հտ՛ք, ճշդագոյն, գեղեցկագոյն իսկ թառով,
 Այ ի՛նչ եմ ես,
 Մերկ, չհաւար, խեղճ մարդ չե՛մ.
 Ըսուելէ հտ՛ք, ես գիտեմ,
 Ըստբուկ եմ քսածիս.
 Ըսածս ինձի պիտի միշտ
 Հրամայէ քրտօրէն:

- Ձրտա՛ծն է միշտ իմ հոգիս,
 Ներս մնացած, խորունկցած ու դուրս չելած բանն է ան,
 Բանն ահաւոր եւ ուժգին,
 Բանը՝ անծայր, անխոստովան...

- Ըսածս զիս չի յայտնեք,
կը պզտորէ, կ'ազտատէ,
Յանա՛խ, յանա՛խ, ես կը զգամ՝
կը պատանձէ, կը քաղէ:

••

Իմ խօսքերուս անվերջ գերին, սկսնջներուս լեզի՛ գերին,
Ու քթախառ մտածումի, ու ցուցամատ բնագրներու,
Սլա՛ք սլա՛ք սրտի շողի
Վա՛յր ազտեղի՛
Կեանքս կ'ապրիմ աշխարհ շալկած բեռնակիրի,
Ըմբոստութեան կրակներով առաջացող անազանի,
Հարագասի:

Այսուհանդերձ, բսե՛լ ինձգիմք, բսե՛լ, բսե՛լ,
Եւ բսելով ճերբագաստիլ, ա՛յ մաքրուիլ մտք խոհեքէն,
Այ մաքրուիլ քաղցր ու կծու կոյր բաներէն,
Սքտի կրակ սա ջերմերէն...

- Ոչի՛նչ իմս է.
Իմս են լոկ երբք ու հեւք,
Ծարասներ,
Ու հեռուն, միշտ փախչող հեռուի մէջ,
Խորախոր, անսպառ, ջինջ ջուրեր...

- Ոչի՛նչ իմս է.
Իմս են լոկ՝ հարցումներ, անդունդներ, անկումներ:
Բուն անձիս եւ իր բուն տանին մէջ,
Կայ դժոխք, այրող տուն ու տանտէր...

Ոչինչ իմս է, կ'երգե՞մ՝ս ես...
Խորք են բաները մտտիկ,
Խորք են ժամերը մերկայ,
Խորք է, խորք է սեփական էն ծածուկ իզճը անգամ:

••

Այս բաները իմս չեն, - բառարան են, իրի համար հանուած ճայն,
Ուղեգրներու եւ շրթունքի դպելով,
Մաշած հաց են իմաստի.
Այս բաները իմս չեն...

Ու ճայուածքս իմս չէ, - անոր հտին ես չկամ, մասնիկներ կամ Ատուծոյ,
Ու մասնիկներ կամ դուի՛.
Անոր հտին միևնչեւ վերջ,
Կը տրորէ բան մ'ինձգիմք, կը ջախջախէ, կը սպաննէ...

Ե՛ս եմ որ կամ մէջըս իմ,
Թէ կայ, քէ կայ հետապնդե՞մ մը աստիկ,

Ոստիկան մը կարծես թէ,
Որ անմեղի մէջըս դիակ մը գտած՝
Յանցաւորը, յանցաւորներ կը փնտռէ...



Օտար բանն եմ ես իմ մէջ,
Հակառակն եմ՝ զի՛ս եղած,
Թշնամիս եմ, ամէն քայլի զիս հուզած.
Ոչ ես կամ միշտ, ոչ ալ ստուտածըս իմ մէջ,
Այլ գորշ, տրտամ, հնօրեայ,
Կայ շուարք՛ւմ մը ստանծ...



- Ես եկած եմ երկինքէն,
Յո՛ւշ կայ մէջըս անհունի.
Ելած եմ ես հողերէն,
Կայ վրաս հո՛ւս խաւարի:

- Ուրկէ՞, ուրկէ՞ չծնայ.
Ու զիս սերմնո՞ւ հայրերէն, ու զիս ծնող մայրերէն,
Ինձմէ՞ բուսած՝ մարմնի, մտքի, նայնիսկ հոգւոյ բաներէն,
Ես ե՞րբ, ես ե՞րբ՝ անհունօրէն, դառնօրէն,
Զանձաբացայ, չփախայ...

- Օ՛ր, ես զիսեմ, թունդ հոգիով ես կը զգամ.-
Մնողք է ինձ ամէն բան, ու ամէն բան գերեզման.
Պէտք է փախչիմ, չմնամ,
Սառի կտոր սէրերէն,
Համակրամքէ եիմ ու բորբոս,
Պէտք է անվերջ հեռանամ.
Մորթող դանակ կարօտէն, տեղատարա՛փ, տեղատարա՛փ անցեալէն,
Դժոխքի պէս հուր ու հեռոց ներկայէն
Փախչիլ հարկ է տրտօրէն:

Ա՛յ սէրերս, լաւ ու յարի ա՛յ կիրքերու տեսակ տեսակ՝
Ոչ մէկ պիտանէ.
Զկամ ոյսի ու յարգանքի,
Անասնական ու բուսական երախտիքի,
Ի գո՛ւր, ի գո՛ւր յատկացումներ մեծագումար.
Պիտանէ չկայ՝
Ոչ յանցանքի, ոչ աղօթքի:



Զեմ ուզեր զիս պատմեն, զիս թուեն,
Եւ հոգիս գերդ պիտանէ երկնային, երկրային՝
Աստուածն ու Սատանան իրարու մէջ բաժնեն,
Տամարի, սիւնակի ու տողի մէջ դենն...

Փոխառութիւն տեսակ տեսակ եւ կնքեցի,
 Այիզրէն իսկ սնանկացած կարծես էակ.
 Փոխառութիւն աստուած բանի ու դու բանի,
 Ու կեանք բանի, ու մահ բանի.
 Փոխառութիւն՝ շուարումով ու շիտթով վնարումի,
 Պարտեքու դէմ խորունկ խորունկ զգացումի,
 Պապանճումի...



- Թմբուկ եմ եւ Յակոբժութեան շիւնէն կախ,
 Ու կայ հարսնիք, տիեզերքի խորունկ, խորունկ նոր բաներու.
 Թմբուկ եմ եւ
 Կրօնէնքու, գաղափարի, գեղեցկութեան ճակատին տակ,
 Ճօկանին տակ մերթ Աստուծոյ,
 Մերթ ալ սակայն՝
 Թանգ, սեւստանջ մաղայելի...

- Կը ծնին գիւ մերթ ալ գիրքեր՝ ինձմէ ծնած,
 Եւ բանի պէս ինձի օտար.
 Օրինակով Ադամի կաւ շաղած վարդետ եհովայի՝
 Կուգեն կղպել կանոնի մէջ, խրատի մէջ եւ կամ սիրոյ,
 Եւ կամ բառի, գաղափարի:
 Կուգուի, գիտեմ,
 Զգողութեամբ խորհրդաւոր հազար բանի, միլիոն բանի՝
 Զիս բանտարկել.
 Ապահովել ինձմէ աստուծոյ ստրկութեան, լացի, քաղցի,
 Ընել աստուծոյ՝
 Հրեշտակներ թուաւորոզ ժանգ ու ժանրի...

Ճակտիս վրայ իմ մարդկային, ի՞նչ կայ գրուած -
 Յաւիտեան մեղք, յաւիտեան բանտ,
 Ոսկոր մը որ կը վարժուի, կ'ընտրկանայ,
 Ոսկոր մը որ չստրկանար, կ'ընտրուանայ:



- Զեմ ուզեր բոյն, ջերմութիւն,
 Մտերմութիւնը երկար, կը ճանաչանէ, կը հնացնէ, կը ֆնացնէ
կարծես գիւ.
 Կուգեմ միշտ օգ մը տարբեր,
 Մուլիմ եմ եւ այլութիւն,
 Մուլիմ յայսին ու չեղածիմ:

Եւ տգեղ բան տուներէն,
 Ուր հայր կայ միշտ ու գուակ,
 Ուր մայր մը կայ հին կրակ,
 Աւանդութիւն,
 Վիզ ու ոտքի սեւ օղակ -
 Կը փախիմ դուրս լայնօրէն:

Կ'ազատանամ, կը մեռնիմ՝
 Դուռ-դրացի երկինքէն, դուռ-դրացի Աստուծմէ,
 Դուռ-դրացի դեմքէ-
 Անոնք մտան կեանքիս մէջ, անցան արեանս խորէն,
 Եւ աչքերէս ու քրտն ինկան կաթիլ գերդ արցունք-
 Ու գերդ մեծ սէր, պաշտամունք՝
 Ինկան վրան մտքի, սրտի գոյքերու,
 Մարմարներու, կտուներու ու բուզքերու:

Աւար եղայ բոլոր բոլոր գոյութեանց,
 Ու երբ առի ես փոխարժէք անոնցմէ՝ արհաւիրացայ անլի-
 Իրար կերանք, իրար կերանք յախտեան՝
 Ես ու բաներն ու Աստուած,
 Ու բոլորս ելնէն եկած մանրացանք:

Ո՞վ մեզ բերաւ, ծանօթացուց, խեղճացուց-
 Երբք խեղճեր այնուհետեւ՝ -
 Ես, ու բաներն, ու Աստուած...

Երբ չէր գրուեր վէճն երեքիս,
 Երբ չէինք դեռ այսօրան ծանօթ՝
 Հսկայ էինք տիեզերքէն շատ անլի,
 Էինք մեզմէ անդի՞ն, անդի՞ն...

Առդին եմք արդ, - ես, ու բաներն, ու Աստուած -
 Ու կարծես թէ վերջացաւ,
 Զիրար գինի մը ըրած՝
 Մենք ցմրուր խմեցինք:

•

Ինձմէ հեռու բան կ'ուզեմ, կիսամշուշ մը կ'ուզեմ,
 Գաղտնի ծրար մը յոյսի,
 Իմաստութիւն մը որմէ՝
 Գիտութիւնները բոլոր անգէտ տղու պէս շիկնին,
 Հեքիաթ մը որ կը պատմեն նայնիսկ խորունկ մեռելիքն՝
 Դարե՛ր տուջ հեռացած...

Երկմի բոլոր ծայրերէն անհունաչափ խոյս տուած
 Տարածութիւն մը կ'ուզեմ,
 Իմ յոյսերու ու հաւատքիս գերդ կայուած,
 Ես հոն պիտի շուարումիս նախիրն ամբողջ արձակեմ,
 Պիտի նուէր ընեմ գայն
 Օր մ'ալ ծերուկ աչքերէ իջնող կաթիլ մ'արցունքի:

Անդեմական մը կ'ուզեմ, անդեմական հազար հատ,
 Անդեմական անհամար,
 Հազիւ այդքանը բաւէ իմ այստեղի տաղտուկներու, վերջերու

Հիւանդանոց վայր ըլլալ.
Անդեմական բիւր աշխարհներ ես կ'ուզեմ
Եւ աստուած մը՝
Որ անհնար ըլլայ զնեւ ւատեանի մէջ ու մտքի:

••

- Ի՞նչ եմ ես...
Քաղաքներ, համբաներ, գերեզման, քուական.
Ի՞նչ եմ ես...

••

- Անտակ որդի՞, հանդէպ Աստուծոյ...
Ոտներս իմ ունեցան ընտանիքէս դուրս գալու,
Տան ջերմութիւն լինելու արարչակից այստ մ'իրենց.
Ոտներըս իմ եղան ինձ փախուստի գիւտ մը կարծես,
Գործիք՝ հեռուն մեկնելու,
Համբողջելու ձրի գէնք:

Անտակ որդի՞...
Բայց ինչ գա՞նձ գտայ ես տունէն հեռու.
Տունս գտած եմ ես միշտ ալ հեռու,
Ես սունս գտայ, - ջերմութիւնս բուն -,
Մէջը հեռացման ու մեկնումներու ստոյգ բաներուն:

Անտակ Որդի...
Բայց հարկ է փրփիլ տունի չումնէն,
Հովանիներէն,
Պաշտպան բաներէն.
Քմբութիւն բերող, նաև յոգնութիւն, նաև ծերութիւն,
Մօր նայուածքներէն, հայրական բառէն,
Տախուկ օճակի ջերմ անկիւններէ խուժող ու կարծես
Քեզ թունաւորող ջերմութիւններէն:
Պէտք է տեսնել դեռ մեր առջեւ չըսուած,
Հայրական սիրոյ աստեմ մոռցուած եւ այդպէս լքուած՝
Պարտէզն այն գաղտնի,
Կռակներու մէջ երբեք չյիշուած,
Եւ չխոստացուած մեզի ոչ մէկ կերպ...

Երբքալ, լիանալ՝
Անօքի բանով:
Բուն ծարաւներով:
Բուն խաղաղութեամբ, ու կռիւներով:
Գտնել ու գննել՝ տունէն, ծնողքէն անհունով հեռու,
Խոր ոչնչութեան քարտէսներն ամբողջ, ուղղուած կեանքին դէմ:

Տունը տուն է, մէն մի սեմեակը անար՝
Գերեզման խոր.

Նայնիսկ եթէ վերադառնամ,
Տուն գամ կրկինն ես մէկ օր,
Պէտք է մեկնիմ ես վերստին, մեծ բաղձամքի եւ փորձութեան
նոր գէնքերու տիրանամ:

Պէտք է հաստատուիմ,
Հօր հեռու այգին, կալուածը գաղտնի,
Ջոր ինք իսկ մոռցաւ,
Որ զիս ծնելով պէտք է որ գտնէ...

Ձիտ չէր ծներ ան,
Եթէ կալուածն իր չմոռնար, յիշէր,
Ան զիս ծնելով, կը կարծէ գտած իր յուշը ըլլալ, -
կալուածը քաղցր, կալուածը գաղտնի, կալուածն անսպառ...

Եւ կամ այ կարծես իմ մէջէս գալով՝
Հայրս կը հասնի իր ժամադրութեան,
Իր եւ չես գիտեր որո՞ւ հետ եղած...

Բայց ի՞նչ վտանգ եմ, քող մէջէս չանցնի,
Ուղեգիս տիպէն երբ հայրքս անցնի,
Ջուրեր խոհերու, պղտոր, տպառատ, գայն հոն կը խեղդեն-
կ'ազեղախորի,
Հայրն իր գաւկին մէջ կ'երբայ, կը մեռնի:
Իմ ազեղիս մէջ, - տեղ վտանգաւոր, անեղ, սոսկալի -,
Անին կայ չըսուած, անհաշիւ բանի...

Ամէն ակնբարք, աստուած մը կու գայ
Ուղեղիս լամբին ներքեւ կը մեռնի,
Հին մետաքսի պէս ստուերս շալկած,
Ստուերս շղարշ, ստուերս մարմաշ:

Գանկս կը ցաւի
Ծնունդի ցաւով ու դժգոհութեան,
Ու պառակտումի,
Դաւանանութեան եւ սպաւ մահուան:

Կ'ըսեն գիտ Աստուած ցնխէն ստեղծեց.
Ոչ ոք է ըսած նման ցնխտա բան.
Մենախօսած է իմ հոգիս այդպէս,
Արձագանգած է ուղեղըս հրկէզ:

Սա է միայն ճիշդ...
Ուղեղի ցնխով ու հոգուով երկչոտ՝
Ես եմ ստեղծած աստուած մը քշուառ,
Շինած եմ կարծես ժանգոտ երկաթով, խառնութի մէջ հիմ՝
Տեղատարափի, սեւ անձրեւներու ընդդէմ հովանոց...

✽

Ես չեմ հերքեր Ձինք. Սէրս է առաջին եւ սէրս վերջին.
 Կը խոստովանիմ պայծառ ժամերու արարքս ազգասի.
 Ձեզայ ես միայն հին դրամանեց,
 Այլ եզայ օր մը (եւ հիմա կու լամ)
 Ես աստուածանեց:
 Ձեաւոր օր մը, անգէն եւ դողող՝
 Աստուած անունով ես դրամ շինած ու գէնք մը շինած՝
 Մտայ պինդ ստեղծ Անհունի շուկան, ամէն ցաւ լուծած,
 Հարուստ, ապանով, դժօխիմ յագրած ու գերերջանիկ.
 Ելայ ես մարտի, մեռնելուն ընդդէմ երաշխաւորուած:

Ես չեմ հերքեր Ձինք. կայ միայն, գիտեմ,
 Իսկ ասկէ յետոյ ես ինչ ալ ընեմ,
 Կը վախճամ սաստիկ, թէ կ'ազաւազեմ,
 Կը յարմարցնեմ փոքր բաներու եւ կը մանրացնեմ...

Բայց որչափ սառ էմ, եւ միշտ որչափ խեղճ,
 Ճակատով, սրտով, մթին կողմերով, անյայտ տեղերով.
 Որչափ կարօտ եմ օժանդակութեան ու խորունկ սիրոյ...

ԵՒՈՒԱՐԿ ՊՅԱՆՃԱՆ



ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

Զ. ՈՐԲՈՒՆԻ

Կրակը որ ծնունդ տուաւ մտածող մարդուն (հոսօ սարիկն) շնորհապարտութեան ուրիշ պատճառ մըն ալ կուտայ մեզի: Այն՝ որ թափառաչըմիկ մարդը նստակեաց մարդու վերածեց: Մարդը բոլորուեցաւ կրակին շուրջ, կրակարան շինեց քնակարանին մէջ ու անոր պահպանութիւնը յանձնեց իր կողակիցին: Ինքը զնայ արտերը հերկելու: Այսպէսով հասաստեց աշխատանքը, իսկ աշխատանքը պատճառ եղաւ որ հիմնուի մարդկային ընկերութեան առաջին ընթացք, ուրիշ կը սկսի քաղաքակրթութիւնը:

Այսօր երբ Հպարտութեամբ կ'ըսենք մարդը ընկերային էակ մըն է, երբեք չենք խորհիւր թէ ինչ բանի պարտական ենք:

Ինչպաշտութիւնը, եթէ բնապաշտութիւն կայ, երբեք առանց իրապաշտ պատճառարանութեան չէ:

Ճ

Ոստիլ պաշտամունքի վրայ, կը նըշանակէ առնուազն ծիծաղելի ըլլալ: Մարդը պաշտամունքին մէջ ինքզինքին նուաստացումը կը տեսնէ այսօր, բայց ան Հպարտ է երբ կը պաշտէ կին մը կամ նոյնիսկ թեւաւոր մը: Կան որ դաղտնի պաշտամունք կ'ընեն ուրանալով հրապարակին վրայ իրենց պաշտամունքին առարկան:

Եթէ պաշտամունքը երախտագիտութեան նշան է, է՛ նաեւ ուրիշ բան մը, շատ աւելի կարեւոր քան թէ առաջինը:

Ընդհանրապէս մենք զոհերն ենք բառերուն, մեր անոնց տուած իմաստին որ յաճախ չէ ան որ կը սպասենք իրմէ, որովհետեւ բառերն ալ կը մաշին ու

ինչպէս ամէն բան՝ անճանաչելի կը դառնան: Բառերը բազմապիսի գոյութիւններ ունին, ինչպէս մորթ փոխող օձերը: Բացէք բառարան մը, փնտեցէք բառի մը իմաստը եւ զիսի տեսնէք թէ անոր գիմացը տրուած բազմաթիւ բառերը չեն համապատասխաներ ձեր փնտրուածին: Դժգոհ էք, անհանգիստ էք, որովհետեւ անհազորդ կը մնաք անոնց: Կոխ կայ ձեր մտքին մէջ: Կարդացէք պաշտամունք բառին գիմացի բացատրութիւնը, եթէ զոհացաք, կը նշանակէ որ դժուարահաճ չէք: Ձեր միտքը մեքենական է եւ ոչ թէ մտածող: Պաշտամունք բառին իմաստը պէտք է ուրիշ տեղ փնտռել, Հոն՝ ուր դրուած է խաղաղութիւն բառը, որ պաշտամունք բառին միւս անունն է:

Պաշտամունքի մէջ եղող մարդուն հոգին խաղաղ է եւ այդ խաղաղութիւնը գերազանցապէս անհրաժեշտութիւն մըն է առողջ եւ հետեւաբար երջանիկ ապրելու համար: Հոգեկան խաղաղութեան մէջ ներքին գործարանները երանաւէտ աշխատանք մը կը տանին, պիտի ըսէի՝ երգելով կ'աշխատին, ինչ որ կը փրկէ զինքը հոգեկան անհանգստութեան պատճառած մաշումէն, աւելորդ, յաւելիալ ճիգէն, ինչպէս նաեւ ներքոր դեղձերու գերարտադրութեան վնասներէն:

Անիկա աչքկապն է լուստեսութեան:

Հոս պէտք է փնտռել ներկայ մարդկութեան անծանօթ եւ սահմակեցուցիչ հիւանդութիւններուն դիմաւոր պատճառներէն մէկը:

Ճ

Իրիկուն մը, Երեւան, 1946-ի աշնան, լեզուական հարցերու շուրջ կը

խօսէինք: Մեզի հետ էր վարպետը, Հայաստանի բանաստեղծութեան կաթողիկոսը՝ Ա. Իսահակեան, որ խօսքի մէջ մտնելով առաջարկ բերաւ:

— Պէտք է փոխել նաեւ խաղաղութիւն բառը, էլի՛, սա ինքնին մի ամբողջ պատերազմ է: Ես առաջարկում եմ անդորր բառը գործածել:

Եւ ուժ տալու համար իր առաջարկին, սկսաւ ճարտասանել բառը, անշուշտ չարտասանելով, ինչպէս միշտ՝ երբ պէտք կ'ըլլայ թէ՛ դ մը պաշտպանել:

— Խա-խա-խութիւն:

Այո՛, բայց երբ պէտք ըլլայ ըսել: «Խաղաղութիւն ամենեցուն»:

Չմայլելի գեղեցկութիւն եւ աստուածային խաղաղութիւն:

Կ'երեւի Անարէ Սիւսթոս հայերէնը նկատի չէ առած, երբ Փրանսերէնը քաղաքակրթութեան լեզու կը դառնի ի մտի ունենալով մանաւանդ գերմանական լեզուն:

Եթէ աչքով տեսնենք ճերմակի վըրայ սեւ, Փրանսերէն խաղաղութիւն բառը, կը վախնամ որ պակնով չհասկնանք այն միւս բառը որ գինքնին մի համազարկ է»:

❖

Առենք եկած է, եթէ նոյնիսկ ուշ չէ, պէտք է վերստին սերտել հին ճըլ-ճարտութիւնները: Դուրս բերել զանոնք բառերու մոխրակոյտին տակէն, վերագործնելու համար անոնց իրենց սկզբնական կուսութիւնը:

Եւ այս՝ ի շահ մարդկութեան:

Վասնզի մարդկութիւնը կը կարօտի խաղաղութեան, բայց այս բառը չի նըշանակեր միայն զէնքերու լուսութիւնը, այլ՝ լուսութիւնը հոգիներուն մէջ: Ահա թէ ինչո՞ւ համար հիները զգնաց բարոյքի տեղ կ'ըսէին զապէք խաղաղութեամբ, «խաղաղութիւն ամենեցուն», ինչ որ ըսել կ'ուզէ՝ «խաղաղութիւն ամէն մէկուն»:

Վասնզի, տրամաբանականօրէն, եթէ ամէն մէկուն հոգին խաղաղ է, խաղաղ է նաեւ գութը:

❖

Խաղաղութեան միակ թշնամին վախն է: Իսկ վախը պատճառն է պատերազմին:

Ու վախը անղաղար կը սլքոտայ մեղմէ ներս, մեր շուրջը, անտեսանելի՝ ուրուականի նման, ու ներկայ է ամենուրեք եւ ամէն պահ, նոյնիսկ երբ բարկութիւնը կը բռնէ մեր կողորդէն, նորէն վախն է պատճառը:

❖

Իժևիութիւնը պատերազմ յայտարարած է միջբողոքներուն առանց պաշտօնապէս լուր տալու անոնց, վատաբար, գոհհիլ չիթիչի մը պէս, երբ անոնք անմեղօրէն, ընթացք աւելով մեղմէ ստացած հրաւերին, եկած նստած են կոյունքի փառաւոր սեղանին առջեւ:

Արդարեւ, ինչո՞ւ համար այս խաղաղասէր անասունները, որոնք միշտ եւ անգողար կ'ապրին համերաշխութեամբ, անմիտոս եւ խաղաղ գոյակեցութեամբ մեր շուրջը, մեղմէ ներս, յանկարծ կը սկսին վախառուններու նման յօշոտել մեզ, լափլիզելով մեր բլիթները, որ խօսքը մէջերնիս, դերագանցապէս համեղ կերակուր մը ըլլալու է կոչեցնալներուն անյազուրդ ախորժակէն դատարարով, առանց գիտակցելու սակայն թէ ինչոյցը՝ որուն հրաւիրուած են, համոզուած՝ առանձնապէս որ չարիք մը գործելու նպատակով չէ որ եկած են:

Միջբողոքներուն գործի անցնելէն առաջ, օրկանիզմը արդէն տկարացած, յոգնած, ու հիւանդութիւն կոչուելու համար կոչ ըրած է միջբողոքներուն, որոնք բարեմտարար վազած եկած են սկսուած գործը ամբողջացնելու համար:

Ուրիշ խօսքով, հիւանդութիւնը հասարակչութեան խախտումն է: Միջբողոքները կամ ինչպէս կ'ըսեն անոնց նոր սերունդը, վիրիւսները, պարզապէս պատրաստ հող մըն է որ կը շահագործեն: Եւ հազործման կը դնեն պիտի ըսէի:

Չանոնք հեռացնել կողոպտտի վայրէն կամ բնաջնել, չի նշանակեր հի-

անդուլթեան յաղթահարած ըլլալ: Պէտք է գիտնալ թէ ուրիշ՞ կ'ու գայ Հաւասարակշռութեան խախտումը:

Յ

Օրուան ամէնէն գեղեցիկ պաշար առաւօտն է: Արեւածագը: Մարդկութիւնը, որը ձգած, արագաբայ կամ հանդարտ, կը դիմէ աշխատանքի վայրերը շինելու, կառուցանելու, ստեղծելու համար:

Գաղաքներուն, դաշտերուն արահետներուն մէջ, մարդը, ճակատաբաց գործ կու տայ երկիրն:

Բայց կէտօր թէ իրիկուն, սեղաններուն ուղիւ, տե՛ս, ինչպէ՛ս ճակատար պնակներուն վրայ ծռած, ան ակուններով - մահուան այս գործիքը, կը յօշոտէ կեանքը: Կը քանդէ:

Ամօթալի բան մը կայ այդ տեսարանին մէջ: Ատոր համար է որ ան կը մեկուսանայ, որովհետեւ դիտէ որ կը տգեղնայ:

Կը քանդէ, կը սպաննէ անմեղ գոլթիւնները - ոճրագործը - մահը կեանքի փոխելու համար:

Կեանքը սպաննելով, մահով միայն կ'անը կը ստեղծուի:

Յ

Երեխան, հազիւ ծնած, ըսցն ու պոռչտուըը դադրեցուցած, ատով ան ոճրագործի իր բնազդը կ'արտայայտէ, ինչպէ՛ս կը յարձակի մօրը ստինքին վրայ ու թուի պտուկը իր տղրուկի բերնին մէջ կը ծծէ, կը ծծէ ազահօրէն, Հելլտանքով, անմահական կաթը զոր մահուան կը վերածէ:

Փոքրիկը ոճրագործ է արդէն իսկ:

Յ

Ամէն ապրող էակ, ամէն մարդ ոճրագործ է, մինչ ամէնէն մեծ ոճրագործը՝ ուրիշ մը սպաննողը: Ամենամեծ, ամենեւին աններելի ոճրագործը Հիւանդն է, ան որ ինքզինքը կը սպաննէ եւ որ արդարացումն անգամ չունի միւսին, որ

ինքնապահպանութեան համար կը սպաննէ:

Ատիկա այնքան ճիշդ է որ եկեղեցին պատարագ չունի անձնասպանին համար:

Յ

Ուրիշ՞ կու գայ գիտակցութիւնը:

Երբ դեռ նիւթը գոյացութեան մէջ է, աթոմներու կազմութեան շրջանին եւ իւրաքանչիւր աթոմ՝ դրադուած իր կատարելութեամբ, յանկարծ նեղութիւն մը կը զգայ: Կը զգայ որ ուրիշներ, միւլիտներով նոյն գործողութեան մէջ են եւ իրեն արգելք կը հանդիսանան կարծես անհուծօրէն անհուն տիեզերքին մէջ բաւական տեղ չըլլար շարժելու, գործելու: Այդ պահէն գիտակցութիւնը կը ծնի ու կը զարգանայ Հետզհետէ նիւթին ու կեանքին կազմակերպութեան ընթացքին:

Այդ է յետին պատճառը որով կեանքը վերէն վար, ամէն ձախ նեղութիւն է: Յաւ:

Յաւը կեանքին Հիւսկէններուն մէջ է:

Յ

Արե՛ւ, արե՛ւ, սուկեմասներդ զըրկեր եռ երկիր՝ պատրաստելու համար հարսանիքը վազուան: Ահա հրաշագործ մասներդ կը կաթկթին ջոթններ բոյսերուն ծոցին մէջ, հրաշալի արհեստանոց՝ ուր կը պատրաստուի հարօր վազուան, կիներ կանայագարդ, օրիորդ էլնորովիլը:

Վաղը հարսնիք կայ երկրին վրայ: Մոլորուն տղան, պարոն Աղը պիտի աճուանանայ արեւին աղջկան՝ օրիորդ Քլորոֆիլին հետ, որպէ՛զի աշխարհ գայ կեանքը, զաւակը երկուութեան՝ որուն անունը պիտի դրուի Արիւն:

Արիւն Արքան:

Այսպէ՛ս՝ որպէ՛սզի յայտնուի օրէնքը երրորդութեան: Կեանքը:

Մարդէն առաջ բնութիւնը բլամուարած է իր արտադրութիւնը: Բնութիւնը՝ անիլլանութեան այս թշնամին:

Ճ

«Աղուորն այն է յաւիտեան որ ան-
ցաւ օր մը քովէդ»:

Ո՞վ կրնար բացատրել տառապանքը
բանաստեղծին, այն պահէն սկսեալ ուր
սիրտը փրթաւ կուրծքէն ու վազեց, վա-
զեց աղուորին ետեւէն: Ու դեռ կը վազէ
արծարծելով տառապանքը անդադար եւ
անվերջ: Որովհետեւ այդ տառապանքը
տառապանքն է գեղեցկութեան: Աղուորը
կը շարունակէ, անցնելով, առատօրէն
բաշխել տառապանքը, որպէսզի փրկուի
կեանքը:

Տառապիլ՝ յաղթել մահը գեղեցկու-
թեամբ:

Ճ

Երբ դէմ դիմաց նստանք իր տանը
պարտէզին մէկ տնկիւնը, ուիսէի՞ գա-
ւաթնեկրուն առջեւ, հարցուցի Աւեբաանդ
Գլճեան բարեկամին.

- Ինչո՞ւ, Աւեբ, ինչո՞ւ չես գրեր:
Ինչպէ՞ս կը ցար ապրիլ երեսուն տարի
չգրելով:

- Ձեռքիդ այդ մտտին, ըսաւ իմ սի-
րած բանաստեղծ բարեկամս, երեսը տն-
դին դարձնելով եւ վճռական:

- Ձէ՛, այսօր պիտի պատասխանես
հարցումիս: Այս տեղէն չեմ շարժիր ա-
ռանց այդ պատասխանը ստանալու: Փա-
րիզէն անցած ատենդ թեւերդ շարժեցիր
օդին մէջ ու անցար, գացիր: Բայց այ-
սօր, ոչ անկողին կրնաս երթալ, ոչ ալ
գործի: Ենթացք գրեց՝ քրիստոսը Էգրիթ
Է Էնտիմորը, դո՛ւն, դուն ի՞նչ բացա-
տրութիւն ունիս:

Այն տունն պատասխանեց, հակա-
ռակ բարեկամներու հաստատումին թէ
Աւեբ չ'ուզեր պատասխանել այդ հար-
ցումին:

- Սիրելիս, ըսաւ Աւեբ, ինծի հա-
մար բանաստեղծութիւնը շատ մեծ բան
է: Այն օրէն որ զգացի թէ չեմ կրնար
ըլլալ ինչ որ կը կարծեմ թէ է՛ բանաս-
տեղծը, դադարեցուցի:

Լուսթիւնը լախտի պէս ինկաւ վը-
բաս:

Պահ մը վերջ ինքզինքս գանձելով,
ըօ՛ի:

- Պատասխանդ կ'ընդունիմ: Ան շատ
հասկնալի է ինծի, որովհետեւ ես ալ
ասկէ անցած եմ, բայց այն օրէն ի վեր
որ, ես ալ, երբ զգացի թէ չեմ կրնար
ըլլալ ինչ որ կը կարծեմ թէ է բանաս-
տեղծը, փորձեցի արձակը, փորձեցի
արձակով բանաստեղծութեան պատրան-
քը ներշնչել:

Ինչո՞ւ: Հիմա ես ինծի հարց կու
տամ: Ինչո՞ւ գրել: Ինչու յամառիլ:
Նստեր եմ սեղանիս առջեւ ճերմակ թուղ-
թերու դէղը վրան: Կէս դիշերը շատոնց
անցեր է: Դեռ կը փորձեմ, կը փորձեմ:
Ինչո՞ւ: Կարծես կեանքի մերժումը ըլ-
լար գրելը:

Ու կ'ըսեմ ես ինծի՛ ե՛լ, զնա՛ պառ-
կէ, զնա՛:

Ճ

Երբ կը գրեմ, ամբողջ ժողովուրդ
մը նստած է դիմացս: Ամբողջ մարդ-
կութիւն մը: Կը զգամ անոր ներկայու-
թիւնը որ սակայն բացակայութիւն է ու
երբ կը խօսիմ անոր հետ զրիչիս ծայ-
րովը, բացակայութիւնը կ'ըլլայ ներ-
կայութիւն եւ ես կը հաղորդուիմ անոր:
Իմ բացակայութիւնս որ իմ միմակու-
թիւնս է, ինքն ալ կը փոխուի ներկա-
յութեան: Այսպէս, երկու ներկայու-
թիւնները իրար կը խառնուին, իրարու
կը զօդուին:

Արուեստը մենութեան տուամն է:
Ոգի է բռին, ոտը ճանկերս լարած,
կը կառչիմ ներկային, երբ ժամանակը
ամէն մէկ երկվայրկեան զիս կը գահա-
փիժէ անցեալին մէջ: Անցեալին մէջ
մարդկութիւն չկայ: Կայ միայն անոր
յիշատակը: Ան զոյութիւն ունի մեր յի-
շողութեան մէջ: Անցեալը միմակութեան
դժոխքն է: Ատոր համար կը կառչիմ ներ-
կային, տառապանքով, արիւնտաժ
ձեռքերով:

Արուեստը՝ ներկային կառչելու,
ներկայով յաւերժանալու փորձ է:

2. ՈՐԲՈՒՆԻ

ՀԱՅԵԼՈՒ ՄԻՋԻՑ

Իր արծաթեայ սառած ջրում
 Ամէն առտու
 Փայլում են խոր շիրերն իմ,
 Որոնց խորքից
 Երկուորեակս նայում է ինձ
 Ու որոնում հոգուս հորում
 Ինքն իրեն...
 Այս բիւրեղեայ սառած լճի բեկում ակիւն,
 Մի քարացած լոյսի շեղում վեճէ քաժանուած՝
 Ե՛ս եւ իմքա՛
 Նայում ենք խոր իրար երկա՛ր
 Ու զարմանում, որ այսքա՛ն մտ
 Անժանօք ենք մենք զեւ իրար...

ՅԵ՛Տ ԴԱՌՆԱԼ ՆՈՐԷՆ

Եւ փարձառութեան ռոմանտիկերով
 Յե՛տ դառնալ նորէն
 Դէպի պարտէզը անփորձ մանկութեան՝
 Որտեղ նա անհոգ ու ստաբոպիկ
 Թաշկատում էր յար
 Անմեղ պարգութեան ջրերում մախար:

Յե՛տ դառնալ նորէն՝
 Գառնացած ցրտով՝
 Դառն փարձառութեան ռոմանտիկերով,
 Ու գտնել կրկին
 Անհուն հաւատքի մանուկը կորած,
 Եւ կեանքի առած հսկայ աւարից
 Փրկած՝ ափիս մէջ՝ միայն իմ հոգին,
 Ծիծե՛ղ այն ինչպէս կնդրուի ու գոռոռ
 Արդար մանկութեանս լուսէ սնարին:

ԱՐՄԱՆՏ

Գ. ՍԱՏՈՒՆԻ

ՍԱՐԵՐՈՒ ԱՍԼԱՆԸ

Բ.

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՆԱՊԱՐՀԻՆ

152-26990

Այդ օրերուն խորհրդաւոր նամակ մը, շրջանէ շրջան ու մեռքէ մեռք կ'անցնէր ու զայն կրողները պատասխանատու սուրհանդակներ էին, որոնք բացառիկ գործեր կը ստանձնէին:

Կորտի Կեղրոնական Կոմիտէն, ազատ ճրագի մը տակ, կը կարդար Հրայրէն եկտն նամակը:

— «Ախրեղիք, այս օրերուն Տարօն պիտի մտնէ Դաշնակցութեան լիազօրք, որուն մեկն հանդիպեցանք Շամի շրջանին մէջ, ու ան կու գայ բնատուրանցաւ պատասխանատու մարմնի, Կեղրոնական կա՛միւսէի եւ շրջանի քաղաք մարմններուն հետ ազատագրական շարժման գեկավարութիւնը: Հազարէցէ՛ք այդ մտալի՛ք բար կայաններուն, որ ապահովութեամբ ընդունին լիազօրք եւ գայն փոխադրենք Բարձրաւանդակի կեդրոնը: Հակաազգրական փառքարիկը կը մօտենայ: Մեկն տակաւին պատրաստ չենք: Զինակուն թարաւորու կը սպասենք, որոնք առեմաններէն թերս պիտի մտնեն, երբ ճանապարհները ապահով գտնեն: Եւ ալ շատով կ'ըլլամ մեր մօտը»:

Համբարներով
ՀՐԱՅՐ-ԴԺՈՒՍԻՔ

Կեղրոնական Կոմիտէն խանդավառութեամբ կարգաց տես խորհրդաւոր նամակը, եւ անմիջապէս «Ներկայիս» խումբին յանձնարարեց, ձա՛մակը գրկել Ստանն:

Ժողովականները կը գզացին թէ յեղափոխական մեծ շարժումներու կեղրոնը կը գտնուի Տարօն, եւ թէ իրենց ուսերուն վրայ կը ձանրանայ առեղք մեծ պատասխանատուութիւն մը, հարանական մեծ փոփոխիկներու պիտայ:

— Գարծը մեծցաւ, ազա՛ր, — կ'ըսէր Համազասպ, որ Կեղրոնական Կոմիտէի ամէնէն ուշի՛մ եւ ամէնէն խոնձ անբայացողներէն մէկն էր, — Հիմա ընդամենը է թէ ինչո՞ւ Համայն-Քոմիտէի քննարկը կը կուտակուին Մուշ

1898

քաղաքին մէջ: Եթէ կարելի ըլլայ խօսք հասկցնել Գէորգին եւ Անդրանիկին, որ ժամանակաւորապէս Հեռանան Սասունէն, մենք պիտի կրնանք թուրքերու ուշադրութիւնը ուրիշ վայրերու վրայ կեդրոնացնել, եւ ապա-հովել Սասնոյ խողաղութիւնը:

- Եթէ Ֆետայիները Հեռանան Սասունէն, բոլոր խառնաձուռ ուժե-րը կը յուսալքուին, եւ այն եռուն աշխատանքը, որ սկսած է, կը դադրի: Սասուն բերդ մըն է, ուր կրնան ապաստանիլ մեր զինական ուժերը, - կըսէր Գոլէի Մճօն, - ամէն օր կրնայ դէպք մը պայթիլ որեւէ տեղ, ու մեր մարտական ուժերը ծուղակը կ'իյնան: Ծիշդ է, որ մենք Հարուածին դէմ աւելի պօրաւոր Հարուած մը կ'ու տանք, թշնամին կորուստներ կ'ու-նենայ, սակայն մեր կորուստները սրբան ալ քիչ ըլլան՝ անդարձանքի են: Մեզի Համար Հինգ Ֆետայիներու նահատակութիւնը Հաւատար է Հինգ Հա-րիւր թրքական զինուորի կորուստին:

- Բայց Հրայրի հրահանգը պարզ է: Անշուշտ վտանգ մը կը տես-նէ ու այդ պատճառաւ կը թելադրէ ցրուած պահել Ֆետայական ուժը, - աւարկեցին Կեդրոնական Կոմիտէի միւս անդամները:

Մճօն, որ մարտական խնդիրներուն եւ գաղտնի գործերուն մասնա-գէտ դէմք մըն էր, պնդեց իր տեսակէտին վրայ:

- Կ'ընդունիմ թէ կարելի է Անդրանիկը կամ Գէորգը ժամանակա-ւորապէս ուրիշ շրջան մը փոխադրել, թրքական ուժերու ուշադրութիւնը այլ կողմ լարելու Համար: Բայց Սասունը որպէս յեղափոխական շարժում-ներու կեդրոն, այսօր դարձած է անձեռնմխելի: Այս դիրքը պիտի պահենք մեր մարտական ուժերով: Բոլորս ալ Համոզուած պիտի ըլլանք, որ այդ լեռնաշխարհէն դատ, ուրիշ յարմար դիրք մը չ'ունինք՝ ազատազրկան դործը ծաւալուն շարժումի մը վերածելու Համար: Մեր բոլոր ուժերը, զինամթերքը, արքունտի պաշարը Հոն պէտք է փոխադրենք ու պատրաստ ըլլանք ապագայ մեծ փոթորիկներուն դիմաց: Այդ բոլորը պիտի կատա-րենք ամէն օր, գաղտնի եւ անշուշտ:

- Մեզի Համար մուտք մնացած կէտերը պիտի լուսարնուին, երբ Հրայրը ու նոր ժամանող պատասխանատու անձը Բարձրաւանդակ Հաս-նին, - ըսաւ Համազասպ, վէճը փակելու Համար: - Սպասենք Հրայրին: Գիտէք արդէն որ երեք ամիսներէ ի վեր շրջանէ շրջան կը պտտի: Երբ դադանի գործ մը կայ, ան ուրուականի պէս կ'անցնի ու գործերը կը կար-գազրէ գաղանապահ եւ Հաւատարիմ ընկերներու միջոցաւ: Հիմա թերեւս շատ մօտիկ տեղ մըն է, բայց միայն Աստուած գիտէ թէ ուր է:



Գիւղէ գիւղ անցք մը կար ոգեւորիչ:
Ու դիշերը, այդ անցքի ճամբուն վրայ, արթուն եւ պատրաստ՝ սըր-բազան պարտականութիւն մը կատարելու, վարակիչ յուզումով:

Խորհրդաւոր շարժում մը կար Մշոյ Դաշին մէջ:
Գիշերային ճամբորդը Ախլաթի շրջանէն կը մտնէր Տարօն:

Մարտական խումբերը խաւարը կը ճեղքէին խանդավառութեամբ ու կայան հասնելէ յետոյ, կ'անհետանային մութին մէջ: Անոնք իրենց պաշա-պանութեան տակ՝ գիւղէ գիւղ կը փոխադրէին Դաշնակցութեան լիազօրը, Վահան Տողրամաճեան, գրագէտ, մտաւորական ու անձնուրաց որ Գորմէն կը Հեռանար Հայկական լեռները քայքայնայու Համար:

Վահան, խոհեմ բայց վճռական գործիչ մըն էր, ամբողջովին հա-

մամիս Հրայրին, որուն հետ երկար խորհրդակցութենէ ետք, նամբայ ելած էր Վանէն, Տարօնի աշխարհի փոխորկայի յեղափոխութեան իր մտանակցութիւնը բերելու:

Հրայր իր ստեղծած ծաւալուն կողմակերպութիւնը շարժման մէջ դրած էր, որպէսզի խանդավառ ու խորհրդաւոր ընդունելութիւն մը ստրգեն Վահանի ժամանման ատթիւ: Վահանի փոխադրութիւնը տեղէ տեղ, լիազօրի իր հմայքը կ'առելցնէր ու հմայքը անհրաժեշտ էր ո'չ միայն կազմակերպութիւնը խանդավառ պահելու, այլ նաեւ կարգ ու կանոնի մը մէջ համարդելու բոլոր ուժերը:

Մարտական խումբերը Վահանը կ'առաջնորդէին մութ ճամբաներէն, յատկապէս ու յետասպան դատաւորումով: Վահան կը հիանար այս կորովի Ֆեռայիներուն վրայ, որոնց հետ գտնուելու երազանքն ունէր, Պոլսոյ մէջ, երբ Բարզէն Սիւնիի եւ Արմէն Գարոյի հետ կը խորհէին Պանք-Օթօմանի հարուածի մասին:

Ան կ'առաջնորդէր մարտական խումբին հետ, մտածումներու ծովուն մէջ ինկած, դազանի գործին ամբողջ հմայքը ապրելով:

Խումբը կը հասնէր որոշուած գիւղ մը ու գիւղին եզրերը գտնուող տան մը առջեւ կը կենար: Խմբապետը շշուկով՝ մնաս բարով կ'ըսէր լիազօրին ու կ'անհետանար իր խումբով:

Մութին մէջ Վահան կը մնար շտաբած: Նոյն պահուն, տան դրան առջեւ աղօտ լոյս մը կը սլուլար, ու մարդկային շուքեր կը մօտենային իրեն, ուրախ ու մտերիմ, հրաւիրելով որ առաջնայ գէպի այն փոքրիկ սեղանը, որուն վրայ աղ ու հաց կար դրուած: Հոն անմիջապէս կը շրջապատուէր մարտական խումբի եւ դիւրի ազդեցիկ անհատներով:

— Պարոն Վահան, բարով եկաք, մեր գլխուն եւ աչքին վրայ եկաք: Կը ինդրենք որ կտրէք մեր աղն ու հացը, Տարօնի յեղափոխական նշխարը: Լիազօրը, ժողովուրդի հաւատքին ծանրութեամբ, կը մօտենար սեղանին, պատահ մը հացը տղին կը թաթիէր, ու կը հաղորդուէր մատուցուած սեղանէն, որպէս ուխտ ու հաւատարմութիւն հայ յեղափոխութեան: Ապա, հիւրը կ'առաջնորդէին գիւղ, ուր ժողովուրդը մեծով ու սղըտիկով կը սպասէր յեղափոխութեան առաքեալին:

Ձեկուցում ու զրոյց, ուժի ցուցադրում: Մարտական պահակներու հսկողութիւն՝ որ ապահովութիւն կը ներշնչէր:

Հեքիաթային այս աշխարհին մէջ, դարիս մտաւորականը դիւցադնական աշխարհ մը փոխադրուած ըլլալու յուզումը կ'ապրէր:

Յաջորդ օր, գիշերային ճամբորդութիւնը կը շարունակէր: Ֆեռայիներու տարբեր խումբ մը Վահանը կ'առաջնորդէր ուրիշ կայան մը: Գիւղին եզրերը մինակ պիտի մնար, գիտնալով որ դիմացի տան առջեւ, աղօտ լոյս մը պիտի վառուէ:

Յեղափոխութեան լոյսն էր այդ, որ զինք պիտի առաջնորդէր դէպի Բարձրաւանդակ, որուն ձայնը հետաւոր աշխարհներուն մէջ կը հնչէր ադատութեան զանգի մը նման:

Քանի մը օրերու այս խորհրդաւոր անցքը, յուզումով ու խանդավառութեամբ յեցուցած էր ամբողջ Մշոյ Դաշտը:

Մասնոյ լեռներու ստորտը, այն վերջին կայանը, ուրկէ լեռ պիտի բարձրանային, Վահանը դիմաւորելու եկած էին թիկնեղ Ֆեռայիներ:

ինքնաշարժով, որոնք երկաթե մարզու սպառաբանները մշն-
ցին անոր վրայ:

Կուրտիկ լերան կողին, ժայռերուն փակած գեղօքի ստորադը շո-
նակուն էր, սարբեր սրտիկ Հայրաթին մը, որ ուշադրութիւն կը գրաւէր:
Շարժուն, մարտական արամազութեամբ առչցուն երիտասարդութիւն մը
չըջարտուած էր գինք ու տնոնք շունակուններու առաջին պատկերը կը
պարզէին իր աչքին:

Յաջորդ առաւօտ, արշարտին, Ֆետայինքով շրջապատուած՝ Վա-
հան ճամբայ ելաւ ու Կուրտիկի բարձունքներէն գիտեց շունաչխորհր, որ
իբ գաղափները փրան էր երկինքին մէջ, ու մինձ ստացաւ իր անոնց
վրայ, Հակոտակ ամառուայ ստիկն Ազրիբունկն ու գետակները խորտակ
մտերը երաժշտութեամբ թնայած էին: Երկնակարգուա Բարձրաւարտի
կարուած էր կարծես սոխարական աչխորհէն, նքր Մշոյ Գալար, Կարաթիկի
ստորունըուն տակ, կիսամշուշ ծովու մը կը նմանէր: Անոնք, Հասարակ
հարկուններէն Միգանն ու Նեմրուքը կ'երեւէին, երկրէն առկախ, խոր-
հուրդ խորին աւելցնելով Տարծի յեղափոխական մեհաւնին:

Շէնփի գիւղի առջեւ Մասնոց երեւելիները եւ Ֆետայինքուն ամբողջ
բոզնուր գրկարաց շնագունեցին զեղափոխական զխորհր:

Հրայր ու Վահան զրկախանուած մնացին սրտ մը:

Ոտքը աւելորդ էր: Չգացումներն ու մտածումները աչքը կու տային
սրտերուն մէջ:

Վահան սրժանադատութեամբ եւ երկիր դատութեամբ կը Թան-
թանար անցնելի փոռքերը կրող Ֆետայինքունն ու իշխաններուն, որոնք
տնկարի հոցքներէր մը կ'արկը կերտած էին այս թեոնաչխորհին մէջ:

Հիացումով ու զորովանքով կը դիտէր Մարեղու Յալանը, ստրա-
կաք ու ջահակէք աչքով: Անգրանիկը՝ մնասկան ու մարտական իր կեր-
պարով: Մակարը՝ թիկնեզ, իշխանն ու Ֆետայի, պատմական հերոսներու
զիմագծով: Գալին ու Չար Մանուկը թզուա ու գեղեցիկ, շնորհալոյս յինն-
քը հեւտիսկան ցեղին: Իշխաններ, առնական ու ազատութեան նախորտած,
իրենց թուցարութեամբ: Կինք, ազատ ու անկաշկանդ իրենց շարժումնե-
րուն մէջ, տանք ստաշայ, տանք զեղծուն՝ արմենական նրաթեամբ:
Ու երիտասարդներ, երիտասարդներ խունկազուա ու փարբատակող զեմ-
քով, որոնց հիացիկ արտաբայութեանց մէջ Վահան կը ըտէր ցեղին մայ-
նը, որ անոնց հապնեւուն մէջ կը քանդակարէր:

Տ

Հրայր արգէն Մշոյ գաշուն էր:

Ունդաղապարթիւն կար հարկաբար գիւղերու մէջ:

Անձնաքահութեան պատրաստ հաւաքական կամքը կը պայտուէր ամէն
տեղ:

Հրայր եւ Վահան զեկազարը կը հանդիսանային այս մեծ շարժումին,
որ աչքը կու տար շրջանէ-շրջան, գիւղէ-գիւղ, մինչեւ Մասուն:

Վահան Բարձրաւարտակի կեդրոնին մէջ շրջաններէն Հան Հասնոց
պատգամաւորները կ'ընդունէր որոնք կու դադին ամէն կողմէն, կ'երկնակի
աւառ մը եւ Հասարակութեան մը փոքր սալու հայ ազատագրական շար-
ժումին:

Հայոց ներքնաչխորհր իշխան էր ու աչքերնորդ փրկիւած էին դէպի
Մասնոց բարձունքները:

Այդ օրերուն շուկը կը հասնէր Վառանձի ականջին, թէ Գէորգը ազատանացած է Ա. Յովհաննէս Վանքի վանահօր, տեղբուրուած կնոջ մը հետ մտքով վարդան վարդապետի եւ Մշտրօկեղորոնական Կոմիտէի կողմէ այդ շուկը փոխանցուած էր Վահանի, առ ի գգուչութիւն, Կոմիտի աննկոյժ Սարգիս Ասլանի բնակարանինը, այդպիսի պարագաներունը Բոլորի մտքին մէջ տակաւին թաքմ էր ա՛յն անակնկալ հարուածը, որուն զօ՛հ կ'երթային Գէորգի հօգեղարայրը եւ փոխուած կ'ինը:

Սնկարոյ տոարկան Յուսամբն էր, որ Ա. Յովհաննէսէն փոխադրուած էր Ա. Կարապետի վանքը, Վարդան վարդապետի հեղադրութեան տակ:

Ոչ ոք ժաբէն անցուցած էր, թէ երկուր տաքիներու սիրոյ հրոյճ մը կար լեռնական մարտիկին եւ իր առնը լքած այս կնոջ միջեւ: Բայց Գէորգի պաշտպանութիւնը ու ազդարարութիւնը Մհրատէ վարդապետին՝ մտահազուժեան կը մտանէր կարգ մը ղեկավարները:

Վահան, Հրայրի ծրարէրը մասամբ իրականացնելու համար, վճռեց Գէորգը զբէլ ղէպի Վան:

Ճետայինները, այդ օրերուն, արդէն համոզուած էին, որ իրենք մեծ կազմակերպութեան մը մարտիկներն են, անձուրաց բանակ մը:

Սարգիս Ասլանը առանց առարկութեան հետացաւ Ստանոյ լեռներէն: Միւրտը կտոր, բայց մարտական անձնագրոն իրան պատրաստ, մտածեց թէ Տարօնէն անդին ալ լեռներ կան ու ինք պիտի կարենայ, ժայռի մը ապաստան՝ իր շէշտակի հարուածը ուղղել թշնամիին:

Գէորգն ու Վարդապետն սրտառուչ հանդիպում մը ունեցան: Վարդապետ հրացաններով գրկեց լեռներու այս ստիւծը, որուն մակնչիւնը այնքան տաքինէր է վե՛ր կը լսուէր երկրէ երկիր:

Մարտական հով մը կը զաւարուէր Վանայ ծովու արեւմուտքը:

Գէորգ, առանց մեծ ճիշդի, իր մարտական շարժումներով եւ վճռական քայլերով՝ մարտունակ նոր սերունդ մը կը ստեղծէր Սիփանի ստորոտներուն:

Անոնք իր անունով պիտի երդուէին իր մահէն ետքն ալ:

22

Տարօնի աշխարհին մէջ պայթումներ չկային:

Բայց ամէն ժառը կը զգար, թէ մօտալուտ է հրաբուխի ժայթքումը:

Ձմեռը կը փակէր 1902-ի տարին: Համատարած ձիւնը դինազադաց կը պարտադրէր բռնակալութեան ու Ճետայիններուն, պինդադար մը ճերմակ կնիքով կնքուած:

Յուրա այդ աշխարհքին մէջ, հայ ժողովուրդի տաք սիրտը կը բարախէր:

Հրայր եւ Վահան գլուխ դրին կը խորհէին զայլք օրերու աշխատանքներու մասին:

1903-ի դարունը ղեռ չէր բացուած:

– Գարնան խուճեր պիտի մտնեն երկիր, բայց փոխադրութեան ճամբաները տակաւին ամուր կազմակերպութիւն մը չունինք, – ըսաւ Հրայր: Վարդապետին գրեց որ Վանէն մինչեւ Պարսկական սահման անելի վատահիլի շղթայ մը ստեղծէ: Ախլաթ ու Սիփան ըստ կազմակերպուած են: Հոն է Գէորգը, մեր վճռական բազուկը, Հոն հասած է Աշոտ Երկաթ Հեռուար Մեծքիկայէն: Մեծ արդէն անդամ է մեր պատասխանատու ժողովին: Մանօթ է այդ շրջանին եւ որպէս մատուցական եւ մարտական օտ, ամէ-

նուն համակրանքը կը վայելէ: Եթէ դինատար խումբը հասնի մինչեւ Ախլաթ, զէնքերն ու մարտիկները ապահով կերպով կը տեղաւորուին Տարօնի կազմակերպութեան մէջ: Զէնքերու մեծ մասը ճամբաներուն վրայ կը հալի, Տարօնի սահմանները հասնելէ առաջ: Իսկ մենք զէնքի շատ պէտք ունինք:

Վահան, որ արդէն «Փաշա» տիրոջը ստացած էր Թուրքերու կողմէ, կը դիտակցէր թէ լաշնածաւալ այս կազմակերպութեան ղեկավարութիւնը խօսքով չի դառնար: Լուրջ ու համակարգ աշխատանք անհրաժեշտ էր, բունկած այս ժողովուրդը զինելու համար: Մտիկ կ'ընէր Հրայրի ղեկուցումները եւ կը զգար թէ առաջադրուած զորքերը որքան շօշափելի եւ որքան հրամայական էին:

- Հրայր, դուն այս շրջաններուն ծանօթ ես: Մեր մարտական ուժերն ու մարմինները քու անմիջական աշխատանքով ստեղծուած են: Անհրաժեշտ զորքերը պիտի կարգադրես ու ընթացք տաս անոնց: Գործին համապատասխան մարդիկ դուն միայն կրնաս ճարել, զորքի տակ մարդոց նկարագիրը դիտես եւ անոնք քու հրահանգներդ կը կատարեն ճշգրտութեամբ ու սրբութեամբ: Դուրան-Բարձրաւանդակի պատասխանատու մարմինը, որ կազմուած է քեզմով, ինձմով եւ Աշոտ Երկաթով, ամուր յենարան մը ունի: Այդ յենարանը ձեր ստեղծած կուտ կազմակերպութիւնն է: Դուն յատուկ ջանք թափեցիր, որ կուսակցութեան հմայքը մարմնաւորուի իմ անուան շուրջ: Իայց յեղափոխական զորքի գլխաւոր սիւնը դուն ես: Մենք այդ հմայքը պիտի օգտագործենք կազմերը խանդավառելու եւ մարտական կարգապահութիւնը աների պահելու համար: Զէնքի փոխադրութեան գիծերը ստեղծելու կամ ամբացնելու գործին ինչ ընթացք որ տաս եւ ինչ որ կարգադրես, ինձի համար ընդունելի է: Ես նոր կը ծանօթանամ երկրին եւ շատ մը շրջաններու ինքնաշարժ պայմաններուն ծանօթ չեմ:

Հրայր Վահանի նկարագրին մէջ կը տեսնէր իրապաշտ մարդը, ցուցամուտութենէն զերծ եւ հաւաքական աշխատանքի ընդունակ՝ ղեկավարը: Խորհրդակցութիւնը փակեց քանի մը խօսքով:

- Պիտի ընենք ինչ որ անհրաժեշտ է: Մէկին ըրածը հաւաքականութեան ճիղն է, իսկ հաւաքականութեան յաղթանակը՝ անհատ զորքիչին պարծանքը:

Երբ պատասխանատու այս ղեկավարները հանդարտօրէն կը խորհրդակցէին, դուրսը մարտական բանակը նոր բռնկումներու կը սպասէր:

Փախստականները շատցած էին ու ապաստանած Մասուն: Այլեւս խօսք չկար Փետայիները Բարձրաւանդակէն հեռացնելու մասին: Անոնք շատ էին ու միայն լեռնային ամրութիւններուն կրնային ապաստանիլ:

Թուրք կառավարութիւնը արդէն գիտէր թէ յեղափոխութեան կեդրոնատեղին Մասունն է: Հրայրի ձայնը այդ լեռներէն կը լսուէր ու Անդրանիկ Մովսաքըր առած էր իր օտքին տակ: Հայ հպատակ ժողովուրդը յանձին Վահանին եւ Հրայրին ազգապետութիւն մը ունէր Մասնոյ կեդրոնին մէջ:

Թուրքերու եւ Գիւրտերու աչքին Մասուն ազատ ու անկախ շրջան մը դարձած էր, անմատչելի լեռնաշխարհ մը, ուր մօտեցող թշնամին մահացու կրակի պիտի հանդիպէր:

Թրքական բանակի բազմահզար զօրամասերը կուտակուած էին Մուշ: Երգնկայնէ, Էրզրումէն եւ Պիթլիսէն նոր զօրամասեր կը հասնէին, եւ գիւրք կը գրուէին Դաշտի գլխաւոր անցքերուն վրայ:

Հրայր կը դպար թէ թուրք իշխանութեան եւ բանակի սուիները ուղղուած էին ըմբոստ Սասունին :

Լեւնաշխարհ մը ցցուած էր արիւնարբու թշնամիին դէմ : Ու ուրբ թանակն ստուար բանակ մը վիշապի պէս կը գալարուէր ազատ լեռան ստորոտներուն վրայ :

— Վահան, — ըսաւ Հրայր մտածկոտ, — երկու տարի ճիւղ թռփեցի որ մեր մարտական ուժերը չկեղորոնանան Սասուն, բայց իրերու հարկադրանքը Սասունը զարծուց ապստամբական բերդ մը : Թրքական բանակի կեղորոնացումը ցոյց կու տայ այն վտանգը, որ կը սպառնայ այս կիսանկախ բոյնին : Մենք տակաւին պատրաստ չենք ընդհանուր ապստամբութեան : Իմ ծրարիքս էր մեր մարտական ուժերը ցրուած պահել Մուշ, Մըշոյ Գաշա, Խնուս ու Ախլաթ, միշտ այն մտածումով, որ ընդհանուր վըրտանդի պարազային՝ անոնք բոլորը պիտի բարձրանային Սասուն եւ վըրճուական ճակատամարտին նախաձեռնութիւնը ստանձնէին : Գարունը կը մօտենայ ու ճամբայ էլլող խումբերը պիտի ուղղուին դէպի Սասուն, ուր բաւարար պաշար ունինք, եւ առնուազն ժամանակաւոր ապահովութիւն : Միտք ունիմ քանի մը շարաքով անցնիլ Խնուս, Բասէնի եւ Կարսի փոխադրական ճամբան կաղմակերպելու : Եթէ ձիւնը հալի այս լեռներէն, մեր ամբողջ ուժերը պիտի արամադրենք լեռնանցքներու պաշտպանութեան, որպէսզի թրքական զօրքը ճամբայ չստենայ Սասուն մտնելու :

Վահան ուշադրութեամբ կը հետեւէր Հրայրի մտածումներուն եւ մտահոգութեանց :

— Ստացուած նամակներէն յայտնի է, թէ այս գարնան ստուար խումբեր Կարսէն երկիր պիտի մտնեն, — ըսաւ Վահան, — Ո՛ր միայն քաջակորով մարտիկներ են անոնք, այլեւ ծրարած են իրենց հետ բերել յաւելեալ զէնքեր եւ ռազմամթերք, ինչ որ մեծապէս պիտի զօրացնէ Սասնոյ բերդը : Խնուսի եւ Բասէնի ճամբաներու ապահովութիւնը կենսական է :

Երբ Հրայր ու Վահան իրենց խորհրդակցութիւնը վերջացուցին, ժողովի Հրաւիրեցին մարտական ուժերու ղեկավարները եւ զանոնք տեղեակ պահեցին այն աշխատանքներու մասին, որ տեղի պիտի ունենային դարնան : Նոր խումբերու հաւանական ժամանումը կ'ողեւորէր Փետայիները : Ծակատադրական կռիւն էր որ կը պատրաստուէր :

Այդ հաւաքոյթի ընթացքին Մակարն ու Յակէն յայտնեցին թէ Տաւուրիկի ժողովուրդը մեծ փափաք ունի իր մէջ տեսնելու Մարբու Աւլանը : Վահան առանց պատասխանելու այս բաղձանքին, ըսաւ .

— Քանի մը իշխաններ նոյնպէս ինծի դիմեցին, որ ետ բերենք Սասնոյ Հիւսուարց Հեքոսը :

— Ուրիշ լեռներու մէջ չի պարտկուիլ Գէորգը, — ըսաւ Հրայր, — Լաւ կ'ըլլայ որ գրեմք Վարդգէսին, որ ետ ճամբէ զայն : Հիմա տնօր ներկայութիւնը այտուղ այլեւ անհրաժեշտ կը դառնայ :

Հրայր այդ օր պատրաստուեցաւ եւ իր խումբով իջաւ Մըշոյ Գաշա, Խնուս երթալու համար : Վահան պիտի հողորդէր Վարդգէսին պատասխանատու Մարմնի որոշումները :

Հին Ֆետայիները զոհունակութեամբ լսեցին Սարբու Աւլանի վերադարձի մասին եղած որոշումը :

Սասնոյ լեռները, տոանց Գէորգի, կարծես կորսնցուցած էին իրենց վեհութիւնը :



Սարերու Ասանը պիտի վերադառնայ...

Շուկը հասած էր բուրբին:

Աշխատանքը կ'ետար Մշտյ Դաշտին մէջ: Միւս գաւառներն ալ մտնին վրայ հակած՝ հայրենի երկիրը կը հերկէին ու ծուխ կը քարձրանար դարաւոր շէնութիւններէն: Յնցող դէպքեր տեղի չունեցան, բայց միջուորտը լիցուն էր թուփոյ ամպերով, որ ստէն վայրկեան կրնար օրաստամի փոխուիլ:

Քրքական բանակը կը վարանէր դինուած լեռան դէմ խորտակելու: Իսկ կտուաժարական արշաւանները խողազ ժողովուրդը նպահու եւ կողպատելու կլած էին: Պակաս մնացածը կը լրացնէին ատրքերու դանձմամբ կտուարող ժանսարմաները, որոնք դիւղերը քայքայելու ձրուղիք ունէին:

Հայ ժողովուրդը խուլ մանչումով, բայց պիտակից համբերութեամբ կը հանդուրժէր այս դաժան կեանքին, դադանորէն շուսփելով իր զէնքը, որ կեանքի ու մոհտան պայքարին համար սւնէր իր ձեռքին տակ:

Սանճարձակ արշաւանները դադրած էին: Գիտակցող դիտէին թէ չիմաղքութեան պիտի հանդիպին, ու ստիկանները կը պուշանային արեւնոս բոնութիւններէն:

Սասուն ինքնիշխան էր երկու տարիներէ ի վեր, ու այդ իրադրութիւնը յոյս կը ներշնչէր միւս գաւառներուն:

Հրայր վերադարձած էր Խնուէն, յուսալից ու ամուր կազմակերպութիւն մը ստեղծելէ ետք: Փոխադրական ճամբաներու մասին տեղեկութիւններ հազորդեց ու աւելցուց:

- Վահան, զինական խումբերը պատրաստ են երկիր մտնելու: Պարսէն մեկնողները պիտի անցնին Բասէն ու Խնուսի վրայով առաջնան դէպի Տարօն: Արարատեան դաշտէն մի քանի խումբեր Մասիսի բարձունքներէն պիտի անցնին Քաղբեւանդ, բռնելով Մանազկերտի եւ Ախլաթի այն ճամբան, ուրկէ անցած էին Սերոբ, Առաքել եւ Մուշեղ: Երբորդ ճամբայ մը Խոյնն ու Մարմատէն պիտի անցնի Վան, կամ Արճէշ, սղղուելու դէպի Սասուն: Այս երեք ճամբաներէն ամէնէն դիւրին անցքը Բասէնէն Խնուս ուղղութիւնն է: Բայց այդ շրջաններուն մէջ թրքական բանակը զէրքեր գրաւած է եւ կրնայ վտանգել անցնող խումբերը: Միւս փոխադրական դիւծերը վտանգուած են քիւրտ քաղմաթիւ ցեղախումբերէն, որոնք ստէն վայրկեան կրնան կտրել խումբի ճամբան: Մարտական այդ ուժերուն ժամանումը նթէ տեղի ունենայ անվտանգ, մենք շուսփելի ուժ մը կ'ունենանք ընդհանուր ապստամբութեան համար:

- Կովկասէն անցած օրերուս չ բառ Վահան չ ետուն աշխատանքի մէջ էին Վանանդի, Մրդաստանի եւ Վրէժի կեդրոնական կամիակները: Մաքտիկներու եւ ժարմիներու աչքը յառած է Բարձրաւանդակին, աք պալատութեան դրօշակիրը կը հանդիսանայ, ահա տասնեակ մը տարիներէ ի վեր: Այն զէնքերը որ պահեստներուն մէջ տեսայ, բաւարար չափով կրնան գիտնել մեր մարտիկները:

+ Խումբերու թիւը ստուարացած է ալտուք, - բառ Հրայր, - զինուորական դասաւորում մը անհրաժեշտ է: Ստեղծինք հրամանատարական կազմ մը, որ կարողանայ հարուածող բանակի մը վերածել մեր խումբերը: Խմբակներու գործունէութիւնը այլևս սժանդակ ձեռնարկ մը պիտի չառնայ, երբ կռիւները ծաւալին:

Ու անոնք որոշեցին զինուորական լայն ժողով մը գումարել, երբ մարտական գեղազարները կեդրոնական Սասունն ։

Վարդգէսէն յուր ստացած էին, որ Գէորդ շուտով ճամբայ պիտի ելլի Սխլաթէն՝ Մշոյ Դաշտ անցնելու ։ Հրայր Սարեբու Սալանի մտովի ընկերներէն ետքը հողինոց խումբ մը զրկեց զէպի Ախլաթ, Գէորդը գեղաւորներու եւ անոք ընկերանալու մինչեւ Սասուն ։

Ճ

Համազարկերու ձայնը լսուեցաւ Մեղրագետի ափին ։

Հրացաններու խուլ որոտը ոտքի հանց Վարդէնիս զիւղը, գեղադրելու քրտական յարձակումի մը, որ ընդհանրապէս համազարկերով կը սկսէր ։

Մուտա Բէկին զրացի էին, ու զիւղը աչքի փուշն էր այս աւազակապետին ։ Վարդէնիսը ինքնապաշտպանութեան դիրքերու վրայ էր ։

Կոմիտէն եւ խմբապետը մտահոգ էին ու սպասողական ։ Անոնք երբ-տասանը մարտիկներու խումբ մը զրկած էին զէպի Նեմրութ, Ախլաթէն ժամանոց Ֆետախիները գեղաւորելու ։

Մարտական առաքելութեամբ խանդավառ, Վարդէնիսի երիտասարդները Նեմրութի ստորուար, Մեղրագետի ափին՝ Մաքերու Ասլանին կը սպասէին ։ Ու երբ Զեհաախիներու խումբը զիւղը ճեղքելով երևցաւ, հարգախօսը հնչեց ։

Ազատութիւն... ։

Ազատութիւն, գոչեցին Վարդէնիսցիները ։ Ու ամէն զգուշութիւն մէկ կողմ գրած՝ Համազարկով արտայայտեցին իրենց ուրախութիւնը ։

Անոնց առաջնորդութեամբ էրր խումբը մտաւ Վարդէնիս, զիւղը ցնծութեամբ ընդունեց զինուառ Ֆետախիները, ու վախը փութատեցաւ անոնց հողիէն ։

Սումբը անդադրուեցաւ Կոմիտէի նշանահամ տան մէջ ։ Գիւղի մարտահան խումբերու խմբապետ Հարութը ժտեցաւ Գէորդին ։

— Վերադարձդ բարի, Սարհատ սիրելի, մեր մարտիկները սուրիէ մը ի վիճ Քու ճամբուն կը սպասեն ։ Ես ներեցի այն երիտասարդներուն, որ Համազարկով գեղաւորեցին զեզ, կը խնդրեմ, որ զուն ալ ներես անոնց ։ Գիտեմ, որ յեղափոխական գաղտնի կեանքի մէջ, զէնքի ձայնը վտանգ մըն է, բայց երբ սիրտերը ուրախութեամբ կը պայթին, զէնքերն ալ կրակ կ'առնեն ։

Գէորդը ներուամիտ ահնարկը զարձուց Հարութին ։

— Դուն որպէս խմբապետ ներած ես արդէն այդ սոցոց ։ Խմբապետին խօսքը չեն կոտորեր ։ Երիտասարդական խնթութիւնը օրէնքի չ'ենթարկուիր... ։

Քանի մը կարճ տեղեկութիւններ ։ Քանի մը թելադրանք՝ զառութեան եւ զգուշութեան ու, խօսակցութիւնը վերջ կը գտնէր ։

Մինչ անպիս զիւրն ամառը հառաքելի մէջ էր ։ Մաքերու Ասլանին Հեքաական զրոտողները կը սպասէին խանդավառութեամբ ու անքաթներ կը հիւսէին գալիք օրերու խմբաներու մասին ։

Երիտասարդները անմտազուժեան գիտովութիւնը կ'արդէին ։



Յաջորդ կէս գիշերին, Գէորգ իր խումբով Բերդակի բարձունքին էր ու գինջ գիծաւորողները, մեծ զգուշութեամբ, ապահով թաքստոց մը կ'առաջնորդէին խումբը, որ անցեալին բազմաթիւ անգամներ Բերդակի մէջ կռուի բռնուած էր թուրք սասիկաններու եւ զօրքին հետ: Գիւղին մէջ ուստիկաններու ջոկաս մը տեղաւորուած էր, հսկիւու Բերդակի անցքերուն վրայ, Սասունի եւ Գալստի հաղորդակցութիւնը կտրելու համար:

Գիւղի մարտական ուժերը, Գէորգի խումբի թաքստոցը շրջապատած, մինչեւ լոյս պահակ կեցան: Գիւղն ու սասիկանները քունի մէջ էին, երբ արշալոյսը չբացուած, տեղական խումբի առաջնորդութեամբ, Գէորգ կը հեռանար Բերդակէն ու կը բռնէր Մովսասարի ճամբան: Բերդակէն անդին Գէորգին հարազատ վայրերն էին, ու ամէն ժայռ ու ծառ, յիշատակ մը ունէր հին օրերու կռիւներէն:

Միւրին կասարի բարձունքին, Գէորգ լիտթօց կը շնչէր Մովսասարի օդը ու հեռաւորութիւններու վրայ, Մովսասարի, Անասիի ու Տարկոշի գագաթները կ'ընդգրկէր աչքով, պատանեկան խորունկ յուզումի մասնուած: Ու իր ետեւ, Մշոյ Դաշտէն մինչեւ Սիփանն ու Նեմրութ, այնկոծ ու խանդավառ ժողովուրդ մը կը տեսնէր, որ գինովցած էր ազատութեան բազմանքներէն, ճիշդ այնպէս, ինչպէս տարիներ առաջ, ինչ պատանի մը, կը գինովնար Հայոց Ազատութեան զաղափարով, Լեր Արարոյին կը հանդիպէր Գաւթի քարի շուքին տակ: Իր գինովութիւնը ամուր հաւատք դարձած էր, մինչդեռ ժողովուրդը նոր կը գինովնար անզուպ խենթութեամբ մը, խենթութեամբ մը, սւր Գէորգ կը տեսնէր ազատութեան ձգտող այս ժողովուրդին արհամարհանքը մահուան դէմ:

Այս մասնումներէն ազատելու համար Գէորգ դարձաւ Գալէին.

— Գալէ', կը յիշե՞ս Բերդակի կռիւը: Այն վարի ձորին մէջ, գուն վիբաւորուեցար ու մենք յուզուեցանք, կարծելով թէ վտանգաւոր հարուած մըն է: Բայց դուն քու ձեռքով փաթթեցիր թեւեղ վէրքը ու մեզ ապահովեցիր թէ բան մը չէ:

— Դուն ալ, կը յիշե՞ս Գեւօ', — մէջ մտաւ Յակէն, — որ այդ ձորին մէջ յոգնած էիր, չէիր կրնար քայլել, ու ես ստիպուեցայ շարժել քեզ բաւական տեղ, որ յոգնութիւնդ առնես:

— Տեսչէն, մէկ անգամ շարժեցիր, ամէն օր պիտի պատմե՞ս, — ըսաւ Գէորգ:

— Ալ պիտի չպատմեմ, եթէ դուն ալ, ամէն տեղ իմ դօտիէն կախուած մտքի պատմութիւնը չընես:

— Աղէկ, ես խօսք տուի:

— Իմ ալ խօսք է, — ըսաւ Յակէն, — բայց եթէ երեքով մասնք միանակ, ուզեմ չուզեմ այս պատմութիւնները պիտի կրկնեմ: Ատիկա մեր Հեքիաթն է, մեզի հետ ալ մինչեւ գերեզման կ'երթայ:

Պումբը ուրախ ու զուարթ կ'իջնէր Կուրաիկի բարձունքներէն դէպի Շէնիկ ու Սեմալ, ու անոնք կ'անցնէին ապահով, ազատ Սասունը իրենց ոտքերուն տակ:

Գէորգը ընդունուեցաւ մարտական համագորկերով: Իշխանները ուրախութեամբ գրկեցին իրենց լեռներուն առիւծը ու հին քննադատները՝ Անդրանիկ, Մակար, Կորիւն ու իրենց ընկերները, անհուն կարօտով զբրկախառնուեցան դէնքի հին ընկերոջ հետ, աշխարհք նոր եկողի մը անբացատրելի հրճուանքով:

Վահանն ու Հրայր գուրգուրանքով ընդունեցին Գէորգը, դրուատեցին անոր կարգապահութիւնը եւ կտարած գործերը Արճէշի շրջանին մէջ: Աւզեցին որ անոր հոգին մեղմանայ: Գիտէին թէ Գէորգ սրտակրտոր հեռացած էր իր սիրած սարերէն:

— Գէորգ, դուն բարով վերադարձար մեզի, — ըսաւ Վահան, — անձնազոհ երիտասարդները քու անունով կ'երգնուն. ուզեցինք որ ատեն մը Վարպաւրականի շրջանը մնաս, որպէսզի թուրք կտառվարութեան ուշադրութիւնը ուրիշ կողմ գարձնենք: Եթէ դուն մարտիկներու սիրելին ես, թրքական կտառվարութեան ալ աչքին փուշը կը հանդիսանաս:

— Պարոն Վահան, ամէն տեղ մեր ժողովուրդին ցաւը շատ է: Աւր ալ գանուիք՝ մեր կռիւր ազատութեան կռիւն է: Ես յեղափոխութեան պարզ գինուորն եմ: Ազատութեան ճամբուն վրայ մենք մատուցու ենք: Ինչ ունիմ այս արիւնոտ աշխարհին մէջ, բացի այս զէնքէն: Տասնըհինգ տարիներէ է վեր այս լեռները շափեցի Ազատութիւնը գտնելու, ու Խաղաւիս չգտայ: Հարկաւ օր մըն ալ մեր արեւը կը ծագի...

Հրայր հոգեկան հրճուանքով կը հետեւէր խօսակցութեան: Գիտէր Գէորգի հերոսական արարքները, ակնհասեա եղած էր անոր խիզախութեան երևուն եւ կռիւններու ընթացքին՝ անոր անդուսպ վճռակամութեան:

— Վահան, — ըսաւ Հրայր, — շխարհիս Գէորգի համեստ խօսքերէն. ան միշտ Սարերու Աւանն է: Կարգապահ եւ համեստ է, երբ կռիւ չկայ, իսկ երբ ազատամարտը սկսի, անդուսպ առիւծն է: Յեղափոխութեան հրամանը սքրութեամբ կը գործադրէ, բայց զիմացը նստող գտնուիկ մը չէ... Բարով եկար, Գէորգ, մեր լեռները ուրախ են այսօր:

— Պարոն Հրայր, — ըսաւ Գէորգ ակնայտնի յուզումով, — կանչեցիք՝ եկայ: Արճէշի գործս վերջացաւ: Երբ հրաման մը ունենաք, ես միշտ պատրաստ եմ...

Ծանր զէպքերու նախօրեակը կ'ապրէին: Ճետայինները եւ Սասնոյ ժողովուրդը ուրախ էին: Սարերու Աւանի ներկայութիւնը ազատութեան բերդը կ'ամրացնէր: Ատիւծը լուռ էր, բայց Սասնոյ լեռները լեզու ելած էին...

Յ

Զինեալ խաղաղութիւն մը կը շարունակուէր հրաբուխէ բռնուած Տարօնի շրջաններուն մէջ:

Գէորգ եւ Անդրանիկ տաք խօսակցութեան մէջ էին: Անոնք յենած էին մեծղի ընկուզենիի մը բունին, Սասնոյ գետի երկերէն, ու հակառակ գետի գոտում-գոյումներուն՝ անոնք կը շարունակէին իրենց զրոյցը:

— Զէնքերը որ անցան Արճէշէն, — ըսաւ Գէորգ, — թէեւ քիչ քանակութեամբ, բայց նոր զէնքեր են, տասնոց տարճանակ եւ մասին: Գիւղական մարտիկները ընտելացած չեն այս զէնքերուն: Տեղական խումբերը վարժեցնելու պարտականութիւնը դնենք Կորիւնի ուսերուն:

— Բասէնի ղիծով ալ զէնքեր կը հասնին, — ըսաւ Անդրանիկ, — Ամէնէն մեծ քանակը տաս զէնք եւ հարիւր փամփուշտ է: Զինավարժութիւնը անհրաժեշտ է քանի մը կեդրոններուն մէջ: Ընդունակներ կան այս գործին համար: Տեղական խումբերը երբեմն տեղափոխելու է ուրիշ շրջաններ, որպէսզի չարքաութեան վարժուին, այլապէս, ծաւալուն ընդհարում մը մը պարագային, անոնք բեռ մը կը դառնան ճետայական խումբերուն:

ձիւղ ալք պահուան, ընկուզնիին ասկ եկան Կոտայի Հրօճին եւ Կո-
րիւն: Կոտայի միւր շարունակուեցաւ անոնց ներկայութեան:

Կորիւն, որ ծանօթ էր բոլոր խնդիրներուն, ժողովուրդի նիւթական
կացութեան մասին խօսեցաւ:

- Մեր ժողովուրդը, Հիմա, մոլեռանդ ձգտում ժը ունի զէնք ունե-
նալու: Բայց նկատի ունեցէ՛ք որ մասին հրացանը շատ անգամ յիսուն հըն-
չին օսկիի կը ծախուի, իսկ պիրտան եւ այնպիսի՝ քսան օսկիի: Ետեքը
իրենց աստը եղբ կը ծախեն հրացան ժը ունենալու համար: Զար մը Բոս-
հելու է: Աշխատաւոր ուղքատն ու միջակ գիւղացին անկարող են արդար-
սի դումարներ պանել:

- Այո խնդիրը զիս այ մասնադամ է: Կ'առաջարկեմ զէնք ասորք
զնել Մուշ քաղաքի եւ Դաշախ ունեւորներուն վրայ: Անոնք պարտաւոր են
զնել երկու կամ երեք հրացան, մէկը իրենց ինքնապաշտպանութեան, իսկ
միւս երկու զէնքերը պիտի տան կռուի ընդունակ երիտասարդներուն, զի-
դի ու քաղաքի պաշտպանութեան համար:

Գէորգ եղբայրացուց:

- Միտոն երթանք Վահանն ու Հրայրը տեսնե՛ք եւ անոնց հարցը-
դենք մեր մտածանքը:

Պատասխանատու մարմինը լսեց մարտական ղեկավարներու ասա-
լարկները, համամիտ եղաւ անոնց եւ հրահանդեց Կորիւնին եւ Մնոյին որ
լծուին այդ աշխատանքին:

Երբ անոնք կը հեռանային, Վահան ուեցրուց:

- Ձէնքի այդ պարտադրանքը պէտք է ըլլայ խոհեմութեամբ եւ
հասկացողութեամբ: Սպանալիք ու պատիժ ոնքնդունելի է այս պարտ-
դարին: Ներկայիս յեղափոխութեան ազդեցութիւնը բարձր է: Այդ խան-
դավաութիւնը օգտագործելով՝ մեր հետապնդած նպատակին կրնաք
հասնիլ:

Ազգայնաբարութիւնը պարզ էր: Պարտականութիւնն ասանձնողները ա-
ւելի քան խոհեմ էին:

Ձէնքի ասքածումը, մարտական ուժերու վարժութիւնը, դադանի
փոխադրութիւնները, ամէնօրեայ կեանքը կազմեցին, այդ օրերուն, Տա-
րօնի ժողովուրդին:

Մուսալուն ուս կազմակերպութիւնը, Արլաթէն Սարնաձոր, Պլա-
նուի-Մանազկերտին Խնուս, Մշոյ Դաշաին Սասուն, Յեղափոխական
փոթորկալի կեանքի մը լծուած էր, փոթորիկ մը, որ զիշերները կատաղ-
րէն քափ կ'առնէր ու աստուները հանդարտ աշխատանքի պատկերը կը
զգենուց:

Ճշմտմամբ կը մօտենար:

Թրքական բանակը Մուշի մէջ արդէն քսան հազարի կը հասնէր:
Երզնկայէն Խոք հրամանատարներ հասած էին: Ահիյարտի էր որ Թուրք
կառավարութիւնը Սասունը հարուածելու կը պատրաստուէր:

Սասնոյ մարտական ուժերու ղեկավարները անհամբերութեամբ կը
սպասէին ասուար խուճիկու ժամանումին: Ձէնքն ու ասզմամբերը պի-
տի զար Վանէն, ուր կը կռտակուէին Սասնոյ յարկադեալ զէնքերը:

Հրայր իր մասնադրութիւնները կը պարզէր Վահանին եւ մարտական
ղեկավարներուն:

- Մուշ կեղբոնացած թրքական բանակը կրնայ մէկ օրէն միւսը
յարձակողականի անքնել: Մենք ասկաւին պատրաստ չենք: Զիտ պիտի

Թափենք ջրաբորենի ոմանք մեզի դաշնակից դարձնել: Խոհեմ թուրքերուն քով ալ բարեկամներ կընանք ճարել:

— Յիշ ուղղութեամբ դուն բուսական աշխատանք կատարած ես, — ըսաւ Վահան, — Վարդան վարդապետն ալ մեծ դեր մը ունի ջիւղա զեւրա զեղախումբերը կանդարտ պահելու: Այս անսահման բռնակալութեան մէջ, երբ խաւովան մտեռանդութիւնը կատաղութեան վերածուած է, ջու կատարածդ հրաշքի մը հաւասար է: Հրա՛յր: Այսօր ձեզ պահան ցեղախումբը, Բիւրակնեան Բարձունքներուն վրայ, արդէն Հ. Յ. Գ. Դաշնակցութեան Կոմիտէներէն մէկը դարձած է: Տեղապետ Չայնայր թուրքին դէմ է եւ Չերձօրէն բարեկամ մեր Ֆետալիան յարժուածին: Կարժիք կընքով վկայական զրկեցիք այդ Կոմիտէին, ինչ որ մեր յեղափոխական շարժման մէջ պատմական պիտի մնայ: Մուսալուն աշխատանք կատարենք այդ ուղղութեամբ:

— Քիւրտերը եթէ թուրք կառավարութեան չօժանդակեն, — ըսաւ Հրայր, — մեզի համար յաջողութեան առաջին երաշխիքը կ'ըլլայ: Իսկ եթէ զէժ ելլեն մեր թշնամուն, մենք անպարտելի կը դառնանք:

Ու անոնք հրահանջ զրկեցին պատասխանատու գործիչներուն որ մէկն ջանք թափեն բարեկամներ դռնէլ ջրաբոր արջ ցեղախումբերուն մէջ, որոնք նոյնպէս կը հարածուին Օսմանեան բանակներէն:



Առաւօտները տարօրինակ էին այդ օրերուն:

Արեւի ճառագայթներուն հետ նոր լուր մը կը հասնէր Սասնոյ կեդրոնին:

Այդ հանդակներ կու դային Տիգրանակերտէն, Էրզրումէն, Վանէն ու Սասնաձորէն: Ուրախութեան եւ խանդավառութեան լուրերուն մէջ պըլլուած կտր ցաւալի դէպք մը, — ձերբակալութեան, նահատակութեան ու կախաղանի...

Այդ օրուան արեւի ճառագայթները տարբեր դոյն ունէին: Հուրն ալ որ դարձանքի կը մատնէր լեւ ապստոսանած Ֆետալիները, անակնկալ մըն էր:

Պահակները բռնած էին չքո թուրք զինուորները, որոնցմէ մէկը եւ թասալայ, որոնք եկած էին միանայու Սարեբու Աւազին եւ Անդրանկի Փալային:

Վահան եւ Հրայր իրարու երես կը նայէին հարցական:

Անդրանիկ դուրսը կրկնեցրով ըսաւ.

— Տեսնեա ի՞նչ ջու սարքելու պաշտօն տուած են յա պիճեալ գալախատակներուն:

— Լուրը բարձր է, — ըսաւ Գէորգ, — Չերձօրէն ընդունինք պանծք: Թո՛ղ անոնք իրենց զէնքերով ներկայանան:

Կէս ժամ հետոյ անցած էր, երբ անոնք Ֆետալիներու ղեկավարութեամբ կը հասնէին կեդրոնի շէնքին առջեւ:

Փուրք զինուորները իրենց զէնքերով ներկայացան Պատասխանատու Մարմին: Ենթասպան առաջ անցաւ ու զինուորական բարեօք կեցաւ:

— Մենք եկած ենք միանայու մեզի, որպէսզի բռնակալութիւնը տալալի ու մենք բոլորս ազատ ապրինք այս երկրին մէջ: Համոզուած ենք որ մեզի պէս դժգոհներ շատ են, բայց չեն համարձակիք ըմբոստութեան

դրուակը պարզել, ինչպէս դուք կ'ընէք ձեր կեանքի գնով: Մենք կը հիւսնանք ձեր հերոսութեան վրայ: Ահա՛, մեր զէնքերը ձեզի կը յանձնենք:

— Ձեր զէնքերը վար պիտի չդնէք, — ըսաւ Վահան, — մենք կ'ողջունենք ձեր յեղափոխական քայլը:

Գէորգ անդիէն.

— Բարով եկաք այս լեռները. սակէ ետք մեր զէնքերը ձեր կուրծքին պիտի չուղղենք: Դուք մեր ընկերներն էք: Ազատութեան պայքարը սուրբ է ու այդ ուխտով՝ մենք եղբայրներ ենք:

Թէյով հիւրասիրեցին փախստական Թուրքերը: Անոնց զրոյցներէն յայտնի եղաւ որ բազմաթիւ սպաներ դժգոհ են Կարմիր Սուլթանի անզուրբ բռնակալութենէն:

Չանոնք անդաւորեցին խումբերուն մէջ: Գէորգ եւ Հաճի Յակոբ անոնց հետ պիտի յարարերէին եւ ընտելացնէին փախստական շարքաւ կեանքին:

Թուրք զինուորները հիացմունքով կը նայէին հայ մարտիկներուն, անոնց պարզ կեանքին ու անձնուիրութեան: Երջանիկ էին որ իրենք ալ ազատութեան օնաւայիններ դարձած էին: Մարդու արժանապատուութեամբ լեցուած էին անոնք, երբ քանի մը օր առաջ, թրքական զօրանոցներուն մէջ, պարզ գործիք էին, կոպիտ եւ անիմաստ հրամաններուն ենթակայ:

Փետայիները շուտով մտերմացան անոնց, ու համոզուեցան անոնց անկեղծութեան: Ազատութեան ջերմ զրացումը զանոնք գուրու հանած էր կոյր ատելութեան մութ մթնոլորտէն:

Նոր ճեղք մը կը բացուէր բռնակալութեան կառոյցին մէջ: Յոյսի նշով մը որ սակայն վարակիչ չդարձաւ:



Կեանքը իր սովորական հունէն ելած էր ու վարարուն գետի մը նըման կը ջրվիժէր շրջանէ-շրջան:

Հրայր մտահոգ էր:

Յնցող լուրը կու վանէն: Վարդգէս ծանրօրէն վիրաւորուած ու ձերբակալուած էր: Ճշմարտամային այդ օրերուն Վանի կեդրոնը կը զրկուէր իր քաջակորով զեկավարէն:

Ընդհանուր ապստամբութեան մը համար, Վասպուրականն ու Կարին պատրաստ չէին, իսկ Տարօնի ժողովուրդը, որ շարունակական զէտքերու մէջ տապալակելով, դիմած էր ինքնապաշտպանութեան եւ ընդունակ էր նետուելու յուսահատ դոյնաբարձի մը մէջ, տակաւին բաւարար զէնք չունէր: Բարոյական անսահման ուժ մը կը կրէր այս ժողովուրդը եւ իր վճռական եւ խուճեմ ընթացքով՝ երկու տարիներէ ի վեր պատկառանք կ'ազդէր տիրապետող բռնակալութեան: Քիւրտ անսանձ ցեղախումբերը, որոնք ատկէ առաջ ամէնօրեայ չարիք էին շրջաններուն մէջ, հարկադրուած էին դադարանալ օնաւայիններուն հակահարուածներէն:

Կազմակերպական աշխատանքն ու սպառնալից վտանգը, իրարու պլլուած՝ հոռացած կաթնայի մը վերածած էին Տարօնի աշխարհը:

Ձինուած խաղաղութիւն մը, արտաքին վարազոյրի նման, կախուած կը մնար հրարուխէ բռնուած Բարձրուանդակին վրայ:

(Շար.)

Ս. Կ.

ԹԷ ԻՄԱՍՏՈՒՆ ԼԻՆԵՍ...

ժամանակը հիմա կայտառ է ու հասու,
 Շարժում եւ լրջութիւն միացել են հիմա.
 Եղի՛ր գգոյշ, գգո՛յշ ժամանակի քափից,
 Ագո՛յշ եղիր նրա շեշտ հարուածից քափում.
 ժամանակը հիմա հեփաք չի պատում:

Խորն ու ձիգ չի փշում իր չիբուխը նախկին,
 Զի՛ր յօրանում, ոչ էլ նրմիկտում է ծոյլ.
 ժամանակը հիմա սրնթաց է վազում,
 Եւ ծանրաբեռ է նա իր գանձերով անգին,
 Եւ բիրտ, կռայիտ է նա, գայրացկոտ ու տնգուսպ:

Բայց մի՛ վախիր մոլար արշաւանփից նրա,
 Թէ՛ ողջախոհ լինես, թէ՛ հասկանաս նրան,
 Նա քա ստրուկն է բոլոր մամբաներում,
 ժամանակը ժպտում կը կանգնի քա դրան,
 Թէ՛ իմաստուն լինես եւ լինես միշտ արթուն:

Դու կարող ես նայն իսկ իշխել նրա վրայ,
 Տատկել ոսկէ քամբին, կտորել քափը նրա,
 Հզովի, քամել նրան, լուծել ուղեղիդ մէջ,
 Թաքթիչներին ցանցում բանտել, պահել նրան,
 Թէ՛ իմաստուն լինես՝ հրապուրել նրան:

Դու կարող ես նրան իր ողջ բեռովն մէկտեղ
 Քո բուռի մէջ առնել, ծեփել փարին, քզթին,
 Զուլել հոգիդ նրա անհատնելի հագում,
 Ու բազմած սապատին անցնող ծերուկ գաբի՝
 Յաղթանակով դիմել դէպի անմահութիւն:

ԱՐԱՄ ԳԱՌՕՆԷ

ԵՐԳԻՄՈՎԿԱՆ

ԿԱՐԳՈՒԵԼՈՒ “ՄԵՐՈՏ” ՄԸ

Ինչպէս դուք բուրդ պիտէք, Քէ-սասպէ մէջ շատ մը սովորութիւններ հինն է վեր կը յամենան տակաւին: Օրինակ, հակառակ բազմաթիւ վարչակարգերու փոփոխութիւնաց, տակաւին հայ ու կը մնայ մեր մուրթարին ակփ-տե ու ճօճուն շարուարը: Գահուէհի Մինս-սին սազը: Մեր ակումբներուն մէջի համբիներուն անակիւր եւ անձախան մեղիդին կը շարունակուի ալիքաւորութիւ ու հոսիւ, Մայր Աքաթի պրիս պէս: Եւ այս բոլորէն ետք, կայ տակաւին շատ դեղեցիկ սովորութիւն մը, որ սերունդէ սերունդ փոխանցուելով անսած էր մինչեւ 1966-ի Յունուար 3-ի կէս դիւրը:

Քերեւս իմ նրբանշուկ ընթերցողներուն նուրբ ականջներուն խորթ հնչէ, բայց ըստ ինծի, սովորութեանց աւելի դեղեցիկը կարելի չէ գտնել, քան այն ինչ որ մենք կը պահենք: Պը ներքէջ, տակաւին չըսի, թէ ի՞նչ դեղեցիկութիւն է այդ, կամ ի՞նչ սովորութիւն: Մենք այդ գործողութեան հաստունք փախչուցն անունը:

Անշուշտ քաղաքական տեւանդում չէ այս ըփախցուցը, այլ աստուածային սրբազան պատուէրի մը համաձայն է որ կը կատարուի արք փախցուցը, այսինքն կարգուելու, տուն տեղ ըլլալու եւ, բնականաբար, բազմանալու համար:

Անշուշտ նկատեցիք թէ «աղջիկ փախցնելու» սովորութիւն չըսի, որովհետեւ ըփախցուցին ենթական կընայ

երկու սեռին ալ պատկանիլ: Հակառակ մեր շրջանը գիւղական շրջան մը ըլլալուն, կիները շատ հոնուխէն մարդոց հետ համահաւասար իրաւունքներ ընկած են վաբիւ: Վայելած են նաև տղայ փախցնելու իրաւունքը:

Եւ մեծ մայրս, Հօրս մայրը, լիուլի օգտագործած է այս հանգամանքը, եւ տղս հարցին մէջ փոխանակ սեռի խնդիր ըլլալու, եղած է ենթակայ... մեծ հայրըս փախցնելով:

Մեծ հայրս, զորեպան մարդ, օր մը Անտիօքէն վերադարձին, տուն հասնելէ ետք, կին տանեալ ախորժակը բուրբորժին կը կորսնցնէ, եւ հետը բերած անուշեղէնները ընտանիքին հետ հաշակելէ, վրան ալ պաղ ջուր մը խմելէ ետք, կ'իլէ քանալու:

Թ՛վ ար ալ ըլլար մեծ հօրս տեղը աղապէս պիտի ընէր: Մէյ մը նկատի առէք թէ հետաւոր նամբորդութենէ մը վերադարձին, երբ կը ծրագրէք այդ դիւրի իսկ մեք նշանանին այցելել, տեսակ տեսակ անուշեղէններով բեռնաւորուած, տուն հասնելէ ետք կ'իմացնեն ձեզի թէ՛ զնշանանք փախցուցին... թող Յոտուած միջիմարէ քեզ: Բնականաբար կին առնելու ախորժակներ կը կորսնցնէք, չէ՞:

Մեծ հօրս ալ այդպէս ըրեր էին: Սերգօ տղային մարդիկը փախցուցեր էին խեղճ մեծ հօրս նշանածը: Մեծ հայրս ալ փախցուցեր էր կին առնելու իր ախորժակը:

Դժբախտաբար ես ալ հոն չէի, կա-

բննայի՜ հոն ըլլալ, կը ջանայի բան մը ընել, եւ մխիթարել խեղճ մեծ հայրս:

Բարբախտաբար ախորժարեր դեղահաւոր չ'ուշանար: Միեւնոյն Աւրգօ աղային մարդոցմէ մէկուն նշանածը, դեղեցիկն Աննան, այնպիսի ախորժարեր լուր մը կը գրկէ մեծ հօրս, որ սեւէ մէկուն բերնին ջուրերը կրնար վաղցընել: Շքանի այդ Սերգօ աղային մարդիկը նշանածդ փախցուցած են, դուն ալ եկուր եւ փախցուր իրենցմէ մէկուն նշանածը, այսինքն... դրս: Այս էր եղած չեղածը:

Անշուշտ նկատեցիք թէ անսւս եւ տգէտ գիւղացի աղջիկ մը, ինչպիսի առողջ տրամաբանութեամբ մը օժտուած է, որմէ զուրկ են շատ մը հին եւ նոր փիլիսոփաներ:

Անտարակոյս անուրանալի է նաեւ այն, որ խեղճ մեծ մայրս ինծի պէս չէք շնորհքով թոռնիկ մը ունենալու մարմաջէն տարուած ըլլալով է որ, այդպիսի իմաստուն քայլ մը առած է: Սակայն մեծ մայրս, զիս տեսնելու դժբախտութիւնն իսկ չէ ունեցած: Հասկնալի է չէ՞, թորքը Քէսապէն եւս անցած է... եւ յանդուգն մեծ մօրս հիւլէները խառնած Հոմար անծայրածիր դաշտերու հողին մէջ:

Ինչ եւ է: Մեծ հօրս լեզուն քի՞ճին փակած էր այդ օրերուն, եւ կաթիլ մը իսկ ջուր չէր կրնար վազցնել իր բերնէն, ի տես այդ ախորժարեր լուրին: Բայց Աննիկ, խօսքով օրօրուողը չէր, եւ դրական գործ կը պահանջէր: Իսկ մեր մեծ հայրն ալ իր կարգին գործի աէր մարդ չէր: Ինք չէր կրնար այդպիսի պատգամ մը գործի լեզուով մեկնաբանել: Այսինքն չէր կրնար աղջիկ փախցընել... Հակառակ ջորեպան մը ըլլալուն: Աւելի արդար ըլլալու համար, մարդը չէր կրնար փախցուիլ... որքան ալ պայմանները ձեռնառու ըլլային:

Բայց ողջ ըլլային մեծ հօրս ընկերները: Արդէն մարդ ըստածին ընկերաւորութիւնը այսպիսի ճակատագրական

առիթներով է միայն որ կրնայ լուսազոյն ապացուցանուիլ...

Անմիջապէս «յեղափոխական խորհուրդ» մը կը կազմուի, նախագահութեամբը ապառնի մուխիթար նշանին եւ անդամակցութեամբը խուլ Աբրահամին, եւ ներկայիս միակ վերապրողը գալատուրանցի կապուտաշեայ Մինասին: Երիտասարդ, յանդուգն եւ այսպիսի հարցերու մէջ թրծուած խումբ մըն էր սր պիտի ի գործ դնէր... Հակառակ մեծ հօրս բեւեռային պաղտութեանը...

«Յեղափոխական խորհուրդ»ը գործին մէջ կը մխրճուի: Նախնական խորհրդակցութիւնները կը սկսին: Օպտագործելի առագականոց դիրքերը կը ճշգրտին: Աննիկին եւ խորհուրդին միջեւ կապ հաստատողը Մինասը կ'ըլլայ: Բոլոր մանրամասնութիւնները մի առ մի կը ճշդուին: Մեծ զգուշութեամբ եւ այնպիսի գաղտնապահութեամբ, որ նոյնիսկ մեծ հայրս տեղեակ չ'ըլլար անցուղարմէ:

Աղջիկն ալ իր կարգին պարտ ու պատշաճ ձևով կը վարուի իր բուն նշանածին եւ պարագաներուն հետ: Օր մը երբ Գալատարը, այսինքն իր կնուորհայր ըլլալիքը, աւելի ճիշդը բնաւ չ'ըլլալիքը, իրենց բակէն կ'անցնի, շարաճըճի հարսնցուն, որ ըստ օրուայ պատշաճութեանց պէտք էր անմիջապէս ներս փախչէր, պատշաճէն վար հանդիցուցած ոտքերը կը խաղցնէ: Խեղճ մայրը ինքնիրմէ դուրս ելած, ներս կը վազէ եւ գլխուն զարնելով կը գոչէ...

— Այ հայեւոր, հայեւոր, խնամին կ'անցնէր եւ աղջիկը էշու տեղ իսկ չ'ըրթաւ դիմք:

Ծեր Անտոնը, չիրուիք քաշելով, եւ ծուխը պառաւին երեսին փչելով — թո՛ղ քաբ ըլլայ եւ դուրսը պատռէ — կ'ըսէ:

Ո՛վ մարդկային արդարութիւն, թող որ պաղնեմ եւ շոյնմ ճակատդ... Աղջիկը որ կ'ըսէր այս խօսքերը, ալ աւելի մեծ համարձակութեամբ կը նետուի գաւաղբական աշխատանքին մէջ:

Երբ նշանածը այցի դայ, մեր Ան-

նան կա՛մ կը «հիանդանայ» եւ կա՛մ «կաշխատի»: Խեղճ փեսացուն բերած նուէրները, սեւ շալուարը, նոփ նոր կարձիբ ֆէսը, լամբակին վրայ հանդուղ վարդերը, քառասուն կանգուն շուխայէ ճերմակ դօտին, կարծիք ճիգճէն, մետաքէ թաշկինակը, սատաֆ համբիչը, մանուպներու պէս ուրբուած նուրբ պեխերը, սիինչով կրնային աղջկան համակրանքը շահիլ:

Իսկ մեծ հայրս... կարծէք ընա՛ւ այդ աշխարհէն չըլլար: Որպէս թէ իրեն համար կաղմուած չըլլար այդ Վեդափոխական խորհուրդը, իրեն համար ղէրոյէ իջած չըլլար հէ՛ք Գալամտարին ին՛դն աղուն արժէքը: Պարտաճանաչ մարդ, առանց ղոյն թերութեան, ջորեպանութիւն կ'ընէր, կ'երթար Անտիոք, կուզար Անտիոքէն... կուզա՛ր ու կ'երթա՛ր...

Ինք ոչ մէկ ձեռով հետաքրքրութիւն ցոյց չէր տար արզէն իսկ հասունալու վրայ եղող հարցին հանդէպ: Նոյնիսկ պաղած էր կարծէք իր ընկերներէն:

Այնքան պաղ կերպով կը մօտենար հարցին որ, զործի լծուած մարդիկը շատ յաճախ յուսահատութեան կը մատնուէին: Յուսալքուծի այդպիսի վայրկեաններու ընթացքին, ամբողջ ծրարները կրնար ջուրը խնայլ, եթէ կրբէք մէկ կողմէ չըլլար մեծ մայրիկցուիս, իր սեռին յատուկ յամառութիւնը, իսկ միւս կողմէ «ապօրինի» կեսուր մայրիկցուիս խանդավառութիւնը:

Չափազանց նեղուած մեծ հօրս պաղութենէն, օր մը կը կանչէ պինք եւ կը սկսի խրատել...-

- Եւսմբուս, Գերոր, երկինքէն ինկած պարզեւ մը այսպէս քիթով հրեյր ամօթ է, մեղք է: Խելքդ զլուխդ հաւաքէ. ես հարա կ'ուզեմ, թոռնիկ պիտի խաղցնեմ, օրօրոց պիտի օրօրեմ, հասկըցա՞ր:

- Բայց մայրիկ, ես կինը ի՞նչ ընեմ, պատասխանիր էր մեծ հայրս, ամենայն պաղութեամբ:

- Ինչպէ՛ս թէ ինչ պիտի ընես կինը,

որզողեր էր ինքնիրմէ ելած պտուռ Պոյմուշազը: Ուրիշին ըրածին պէս պիտի ընես դուն ալ: Վա՛յ Աստուած, այս մեր լակոտը մեր սերունդը պիտի փրճացնէ...

- Բայց մայրիկ...

Ո՛չ մէկ խօսք, կա՛մ այդ աղջիկը կ'առնես, եւ կա՛մ աուն չես մտնել: Ես թոռնիկ կ'ուզեմ, հասկցա՛ր...

Ինչպէս չհասկնար մայրը, բայց կարելի՞ բան էր...

Ճ

Շատ կարեւոր խորհուրդներու մէջ խորասուզուած էր այդ օր: Երբ տուն հասնէր, պիտի հանգչէր այդ գիշեր, իսկ ասուտաուն խուլ Խաչոյին քով կարել տուած կարմիր ճիգճէն պիտի առնէր: Յետոյ Մխաթ եւ Ասատուր աղանկը Անտիոք պիտի փախադէր: Այդպէս որոշուած էր. ուստի շարունակ կը խթանէր ջորիները, վայրկեան առաջ տեղ հասնելու եւ հանգչելու համար:

Բայց խորհուրդ մարդկանց, կամք Աստուծոյ կ'ըսուի շատ յաճախ: Սակայն Գերորին համար ինչեր կը պատրաստուէին այդ օր: Ինչէ՛ր պիտի անցնէին զլիսէն... Եւ տակաւին ինք, Մխաթ աղա, Ասատուր աղա կը մտմտար: Երբե՛ք մտքն իսկ չէր անցնի թէ այդ աղանկերէն առնելիք մէկ քանի մէծիտիները յաւիտեանս պիտի չկարենար առնել, որովհետեւ ոչ յաջորդ օրը եւ ոչ ալ յաջորդոց օրերուն պիտի կարենար փոխադրել պիտեք: Այդ գեամանն Աննիկը այլ բան կը պատրաստէր իրեն համար:

Այդ օր որբա՛ն բաղմապաղ եղած էր խեղճ աղջիկը: Խնամիները եկած էին, առաջին եւ վերջին անգամն ըլլալով: Բաղմաթիւ ծրարներով ծանրարեանուած եկած էին, Տան բոլոր ամանները, կաթսաները, տաշտերը անուշեղէններով, ընկոյզով, չամիչով եւ այլ համով բաներով լիցուած էին:

Այդբա՛ն ծրարներ, այդբա՛ն անուշեղէններ: Այդ բոլո՛րը, բոլո՛րը Աննի-

կին սիրոյն բերուած էին: Այդ ճարպիկ աղջիկը բոլոր խնամիններուն ձեռքերը համբուրած էր: Իսկ անոնք ալ իրենց կարգին իր կարմիր այտերը համբուրած էին, եւ աղջկան արհեստն մէջ լեցուցած էին աւելի քան քսան «մէճիտ»: Այդ էր սովորութիւնը, ձեռք պահելու ատեն, հարանցուն ձեռքին մէջ դրած կը գետեղէին:

Քեզ կեսուր մայր չբայից Գալստարին պատուը... Որքան ուրախացեր էր, որքան պարեր, որքան ծափ զարկեր, զգրտներ էր: Եւ խօսք կարգեր էր աղջկան ծնողներն հետ, թէ դասերի ձեռք ծախելուն պէս կեսուր մայր պիտի դառնար:

Ինչ էրանութիւն, առաջին անգամն էր որ կեսուր մայր պիտի դառնար... պիտի խնայեալար պարելէն եւ ճոռուղիէն...

Բայց խորհուրդ մարդկանց, կամք Աստուծոյ, ինչպէս զիչ առաջ կ'ըսէր, հեշ մի ըսէք թէ այլ կին մը, առանց կանխօրօք պարելու, հարանցուն առանց ծրար բերելու, կեսուր մայր պիտի դառնար այդ իսկ գիշեր...

Կարելի՞ քան էր որ թիթեռնիկի պէս Աննիկը կարենար երկու ամիս համբերել եւ այն ալ իր շտրածին հետ առաջատու մտնելու համար: Ո՛չ, երիցս ոչ, այդ իսկ գիշեր ինք առաջատու պիտի մըտնէր...

Գացին խնամինները... խեղճ բարով եկած շրջալիս: Իրենց այցելութեան այդ մէկ քանի ժամերը տարիներ թուեր էին Աննիկին:

Ճ

Երեկոյեան, երբ կինները տակաւին «ժողովրդ» լրտուղ հաց կ'եփէին թոնրիին մէջ, քնաւ ուշադրութիւնը շարժուցին քանի մը երիտասարդներու, եւ իրենց ընկերակցող «Արար» մը: Արդէն ուշացեր էին կինները, խնամիտեան զայցեր էին, պէտք էր վայրկեան առաջ հասցը հփել եւ տուն ելլել: Արդէն իսկ աշուն էր եւ օդը սկսած էր ցրտիլ: «Ա-

րար» ու իր ընկերներն ալ կ'աճապարէին, հակառակ պարագային, կրնային առջ հաց ալ ուղել կլիներէն: Պէտք էր վայրկեան առաջ տեղ հասնել, այսինքն լեռ բարձրանալ: Ի՞նչ կ'ըլլար, ինչ չէր ըլլար. կեանք էր:

Անշուշտ հարկ չկայ թերեւս, բայց նորէն ըսեմ թէ այդ «Արար» ալ մէկը չէր եթէ ոչ մեծ մայրիկս ըլլալիքը... Ծերունի Անտոնը աղջկան ճակատը համբուրած էր, ապա պիտիբը շոյիլով, խըղարած էր որ աղջիկը զիչ մը անուշեղէն բերէր իրեն եւ տղուն համար: Ի՛յ, խընամի բլլալը պղտիկ բա՞ն էր. պէտք էր անուշալ խնամիններուն բերած անուշալը... Աննիկ անմիջապէս մտան վազած էր եւ խոշոր աման մը անուշեղէն դրած էր հօրը եւ եղբօրը առջեւ. համբուրած էր հօրը ձեռքը եւ դուրս ելած էր: Կտոր մըն ալ անուշեղէն ինք վերցուցած էր:

Ախտին մէջ սպասող Մինասը, հասը բերած արարական տարապը տուած էր Աննիկին, իսկ հաղուտեղէնի ծրարները խուրճիկի մը մէջ գետեղած էր: Այն օրերու կայտաւ Մինասը, խուրճիկը ուսին նետած, ախտէն դուրս ելած էր, Արարին հետ, եւ միացած զիչ անդին սպասող միւս երկու ընկերներուն: Ծտապէր էին դէպի դիմացի լեռը՝ Միլտրէնը, ուրկէ գիշեր տան պիտի իջնէին Փօրքիւնէ, մեծ հօրս գիւղը... ուր մեծ հայրս արդէն իսկ քնացեր էր:

Անտոնն ու իր տղան կը շարունակէին անուշեղէն ուտել եւ մտանոր լիպել...

Իսկ մեծ հայրս, կամ աւելի ճիշդը տակաւին ըլլալիքը, շատ կանուխէն զընացեր էր այդ գիշեր: Գնանալէն առաջ, լուր դրկեր էր Միտաք եւ Ասատուր աղաներուն, որովհետեւ առտու կանուխ կազմ ու պատրաստ ըլլային ճամբորդութեան համար: Կարմիր նոփ նոր ճիզմէն, խուլ ինչչոյն ջովէն առեր եւ ճիշդ բարձին քովիկը դրեր էր: Զէր կըցեր մինչեւ ստաւոտ սպասել:

Շատ չանցած՝ մայրը եկած էր ու

կը ջանար արթնցնել տղան: Կ'երեւի տը-
ղան կ'երազէր ճիշդ այդ պահուն, եւ բը-
նակաւարար ջորիներուն մասին կընար
երազել միայն

- Հայտէ, աղաս, Գերոս, ելի՛ր,
ելի՛ր, ես թոռնիկ կ'ուզեմ:

- Հը ր ր ր ր - ձգէ որ ջնանամ:
Ջորին փրթած էր, ելի՛ր կ'ապէ. տոտու
կանուխ կեր տալու է ջորիներուն... զիս
կանուխ արթնցուր...

- Ելի՛ր, ելի՛ր, ջորիներուն ալ Ան-
տիոքին ալ: Ատոնցմէ դատ ուրիշ բան
չմնաց:

- Ջրէ ջորիները, շո՞ռնա՛ս, զարին
չա՛տ աւար:

- Մօ, ճէճանամ երթան ջորիները,
Հարսը բերին, շու՛տ ելի՛ր...

- Որո՞ւն Հարսը, - Հարց տուաւ յոգ-
նած սատկած Գերոսը, այնպիսի շեշտով
մը, որ կարծէք չբարտ Հասանի մը Հար-
սը բերած ըլլային այդ պահուն:

Երկար կընար տեսել այս նրբին սա-
կարկուծիւնը, եթէ Լրբեք ներս չմտնէր
քրտինքներու մէջ խեղդուող Նշանը, եւ
Հրացանին կոթովը չմխթէր Գերոսը...

- Հայտէ պիտէ չէրի՞ք, ամբողջ դիւ-
ղը իրար անցած է, եւ դուն սատկածի
պէս պատկած ես...

- Ի՞նչ կայ որ, - Հարց տուաւ ջնա-
թաթախ փեսան...

- Գէ անխելք, Աննիկը բերինք, ել եւ
յանձն առ:

- Ես պիտի ջնանամ, բան չեմ ու-
զեր, դուք առէք զինք...

Հաստատեցիք որ բնաւ չեմ չափա-
զանցեր: Եւ իրաւունք ալ կուտամ մեծ
հօրս, ոչ թէ անոր համար որ մեծ հայրս
է, այլ պարզապէս, այդքան յոգնելէ
ետք, քունը կիսատ թողո՞ւլ, կնիկի մը
համար... ճիշդը չէր արժեր:

Նշանածին մտքէն ինչեր չէին անց-
նէր. հասպա՛ եթէ այս անպիտանը մեր-
ժէր աղջիկը առնել... ետ տանիլը կար:

Ուրեմն լաւ կից մը մեծ հօրս յե-
տոյքին ամէն բան կարճի կը կապէր,
եւ վերջապէս մեծ հայրս կը յօժարէր...
փեսայ դառնալ:

Է՛յ, Տմարը! Հանոյին զէ՛ֆին զէ՛ֆ
չկար: Աշխարհը նեղ կուգար իրեն, Խո-
շոր-խոշոր մտերուկներով, ոսկեզոյն
խաղողի կողովներով, պնակի մեծու-
թեամբ լօրիկներով կը յորդեցնէր սեղա-
նը: Արդէն դուրսը, տղաքը, Հանոյին
ուլիբէն երկու երեք հատ մորթեր էին,
եւ երկար շամփուրներով խորոված կը
մատակարարէին...

Է՛յ, առաջին գաւազն էր որ կ'ա-
մուսնանար, եւ այն ալ դեռ փայտուե-
լով...

Իսկ պատաւ Գոյմուշազը, խենթը-
ցեր էր: Մերթ մէճիտիկները կը թափէր
նորապսակներուն վրայ, մերթ կը պա-
րէր, մերթ զիւ մայնը ձգած կը զզղըր-
տէր... Է՛հ թոռնիկ պիտի օրօրէր...
պզտիկ բա՞ն էր այդ:

Ամէն կողմէ ձմէշալահներ, ամէն
կողմէ կենացներ, «չար աչքերու կու-
րուծիւն», տարոսներ կը լսուէին:

Մտտակայ գիւղերէն ալ մարդիկ
փութացեր էին, Հրացաններու ձայնը...
վտանդ կարծեւում:

Յեղճ Գերոսն ալ այլ կերպ չէր դը-
տած, բացի համակերպութենէ... Ինք
եւս մասնակից կը դառնար զէ՛ֆին...

Երբ բոլորը կերան կշտացան,
գուրս ելան շուրջ պարի: Կը պարէին ու
կ'երգէին: Խուլ Խեչոն մէկ ձեռքը ա-
կանջին դրած, իսկ միւսով թթենիի
ճիւղ մը ճօճելով, իր սուր մայնովը,
տեղւոյն վրայ կը շարազրէր երգեր, իսկ
ժողովուրդը կը մայնակցէր իրեն:

Ութ օր վերջ, մէկ ջորիին վրայ
զանազան նուէրներ բոցած, իսկ միւսին
վրայ ալ Աննիկը նստեցուցած, խուճի
մը դինոսած երիտասարդներ Գերոսին
ընկերակցութեամբ, աղջկան տունը դա-
ցին:

Բարձրաձայն բարեկեցին Գալամ-
տարին, որ բազմութիւնը տեսնելով հե-
տաքքորուած դուրս ելած էր: Գալամ-
տար թուրք կլլեց, պեխերը կրծոտեց,
եւ ջթին տակէն Հայհոյիւնով... գոմ
մտաւ...

ԳԵՈՐԳ ԱՅԵԼԵԱՆ



Իմ ապական շարժում

ՔՍԱՆԱՄԵԱԿԻ ՄԸ ԿԵԱՆՔԸ

ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ի քնն անկայուն ու յարափոփոխ կեանքին մէջ, երբեմն, փոխանցումը վիճակէ մը ուրիշ վիճակ կը դառնայ ցայտուն՝ յատուկ կարեւորութեան կոչելով մասնաւոր պարագայ մը բազմաթիւ ուրիշներու մէջէն: Այս երեւոյթը ուշագրտա կը դառնայ չլիսաւորարար ամէն անգամ որ հաւաքականութիւն մը կը հասնի հոլովոյթին ճակատագրական անկիւնադարձերէն մէկուն վրայ:

Ճակատագրական անկիւնադարձ: Այսօր, երբ Մեծ Եղեռնի յիշումեայ սուղը տօնած ենք արդէն՝ պատշաճ լըրջութեամբ, կ'անդրադառնանք սփիւռքահայ կեանքին, ուր, յանկարծ, մշակոյթը կը ստանայ յացալայտ կարեւորութիւն մը, աւելի մեծ՝ քան տաննակ տարիներ շարունակ ունեցած է ան:

Մտահէ սրահ, խմբագրատունէ խմբագրատուն եւ մարդէ մարդ համահայր կական կարգախօս մը կը շրջի:

- Չարէ տանք հայ մշակոյթին:

Կը տեսնենք: Դարձեալ կը հանդիպին իրարու հինն ու նորը: Մերն ու երիտասարդը կ'ողջագուրուին: Կը հանդուրժեն զիրար: Կը ներին իրարու եւ ձեռք ձեռքի կու տան հայ մշակոյթին համար:

Այսօր, մենք, վերջին քսան տարիներու երիտասարդ սերունդ, կը նայինք մարդոց աչքերուն մէջ, ու մեզի կը թուի

թէ հոն կը տեսնենք խոշոր հարցական մը: Կը թուի թէ այդ աչքերը դիտած են սփիւռքի անցեալը եւ հիմա հաշիւ կը պահանջեն:

Ո՛ւր է վերջին քսան տարիներու սփիւռքահայ գրականութիւնը:

Տրուած է սփիւռքահայ կեանքը, վերջին քսան տարիներունը՝ անոր գրականութեան մէջ:

Եւ ազդահար, ու կակապ՝ հարցումներուն կը հակադրենք հարցումներ:

Ի՞նչ է գրականութիւնը:

Ի՞նչպէս կը ներկայանայ սփիւռքահայ գրականութիւնը:

Ի՞նչպէս է վերջին քսանամեակի մեր գրականութիւնը:

Այսպէս ուրեմն: Կը փնտռուին վերջին քսանամեակի կեանքը եւ անոր գրականութիւնը: Ո՛չ թէ այդ շրջանի ընթացքին լսյս ընծայուած գրական երկերը:

Ինչո՞ւ սակայն բացառիկ պայմանադրումը վերջին քսանամեակին: Ինչո՞ւ քսանամեակ՝ եւ ոչ աւելի կամ պակաս: Ի վերջոյ միեւնոյն ժողովուրդին կեանքն է եղեռնէն ի վեր՝ օտար սփերու վրայ:

Ո՛չ:

Միեւնոյն ժողովուրդը՝ անկասկած: Բայց միեւնոյն կեանքը՝ բնաւ երբեք:

Պատմութեան մէջ չենք յիշեր որեւէ պարագայ, ուր սերունդները իրարու յաջորդեն այնպիսի արմատական կերպարանափոխութեամբ, ինչպէ՛ս պատահեցաւ սփիւռքահայութեան՝ 1946-ին: Մինչև իսկ աշխարհացունց պատերազմը եւրոպական մշակութիւն մէջ շատաջաց շեղբի պէս կտրուկ փոխանցում: Հոն, նախապատերազմեան եւ յետպատերազմեան բեւեռներուն միջեւ դարձեալ գտնուեցաւ պատերազմի փոխանցման սերունդը. այնպէս որ Հոլովո՞յթը շարունակուեցաւ անընդմէջ:

Նոյնը չպատահեցաւ մեր պարագային: Մեր մօտ, Հայրենադարձը, շատը եկած ու անցած, կատարեց ուղիղ անփոփոխութիւն մը նախորդ երեսնամեակին եւ փերջին քսանամեակին միջեւ:

Բնականաբար: Եղեանով սկսող պատմաւորներ իր ժամկէտին յանգեցաւ Հայրենադարձով: Հոն, սերունդ մը տարապայման ապրեցաւ երեսուն տարիներ, նորակազմ զառութիւնը դարձանցներով: Այդ սերունդը, ջարդ ու բռնադատութեան սած աչքերուն մէջ ցոլացուց երկիւղը մահուան եւ արիւնին: Իրաւազրկուած հողին մէջ պահեց պատկերը Հայրենիքին: Մանկութենէն ու պատանեկութենէն բաժին ստացաւ զրկանք, սով ու թշուառութիւն: Մարդկային գութէն ողորմութիւն ստացաւ պատսպարան մը որբանոցներու մէջ: Յետոյ ճանչցաւ պայքարը պատառ մը Հացի եւ պուտ մը ջուրի համար: Դառնացաւ: Անոր կիրքին մէջ եւ շրթներուն վրայ բոյն դրին անէծքն ու ատելութիւնը: Անոր սիրոյն եւ աչքերուն մէջ ապրեցան Հաւատքն ու յոյսը, կարօտն ու բաղձանքը:

Տակաւին, դեռ նոր Հայրենադարձ փշրանքներ, անոնք չունէին միայն կարօտ, լուտանք ու Հաւատք: Անոնք, այս նոր ակերտուն վրայ Հաստատեք էին առժամեայ կայքեր. Հիւզաւաններ եթէ կ'ուզէք: Այս երկինքներուն տակ կը զգային ու կ'ապրէին իրար հիւրեր: Անոնց համար դաղթարեակութիւնը անցման Հանդրուան մըն էր միայն: Սպասողական ձիգ վիճակ՝ որ Հոգեպէս չրիւ

չրջանը բոլորեց ու յանգեցաւ 1946-ին: Ներգաղթին:

Անտարակոյս՝ այդ սերունդը ձեռնածալ չսպասեց: Երկնց: Տուն ու բոյն Հաստատեց: Աշխատանքի բնասուր կորովը բեղմնաւոր դարձուց: Բայց սպասեց եւ յուսաց:

Արդ, ի՞նչ պատահեցաւ 1946-ին:

Այս թուականը սփիւռքահայութեան առջեւ նոր պատմաւորական մը բացաւ: Ստեղծուեցան նոր պայմաններ: Այդ օրերուն Հասուն սերունդի ենթագիտակիցին մէջ յամեցող տարտամ զգացումներ յանկարծ պիտակից տրամադրութիւններ դարձան: Յառաջ եկաւ նոր Հոգեբանութիւն մը: Նոր սերունդ մը իր կէտքը պատուեց: Նոր ներաշխարհներու մէջ ծաւալեցան նոր սէրեր ու տտելութիւններ: Նոր աշխարհահայեացքներ ուսուցանեւ նոր մտայնութիւններ զարգացան:

Այդ թուականէն սկսեալ ինքնաճանաչման եկող կամ դիմաշրջուող մարդը որբ չէ այլեւս: Այս սերունդը չի գիտեր թէ ի՞նչ կը նշանակէ ջարդէն մազապուրծ փրկուիլ: Օտար երդիքներու տակ, ընդհանրապէս տանուաէր է եւ ոչ թէ հիւր: Ան չի ճշմիր պատառ մը Հացի ու պուտ մը ջուրի համար, այլ թիրեղ զարձուցած է Հեռատեսիլ ու առնետրան: Ան չ'ըմբռներ տարողութիւնը զըրկանքին, նուաստացումը որբանոցին եւ դժնդակութիւնը զհարձրութեան: Վերջապէս չի գիտեր թէ ի՞նչ է այբբենարան մը տնեկալու երջանկութիւնը: Այս սօրուայ մարդը ունի տուն, ատելտուր կամ պաշտօն: Ունի պիւտճէ՝ իր զուարճութեանցը յատուկ: Ունի ուսում, գիրք եւ գրադարան:

Հիները, առանց տարիքի խաբուութեան, այս նոր մարդուն մէջ այլասերում կը տեսնեն, նուազումը՝ Հայրենի աւանդութեանց. ժխտումը ազգային առհաւական նկարագրին:

Նորերը, նոյնպէս առանց տարիքի խաբուութեան, հիներուն մէջ կը տեսնեն զգացական ու փաթեթիք մարդեր. քաղաքականորէն ահա սերունդ. Հայրենասէրներ՝ անկասկած, բայց ապրումով

լով, բնաւ երբեք զխտակցութեամբ կամ իրատեսութեամբ:

Ո՞վ իրաւունք ունի: Հնարաւոր է ըսել: Գուցէ ոչ մէկը, եւ ոչ ալ միւսը: Արդարը թող առաջին քարը նետէ: Բայց մենք, մոռնանք ցեխարձակումները պատնէշին մէկ կողմէն միւսը կատարուող, եւ փորձենք աւելի ծառայել զիտել սփիւռքահայ քսանամեայ կեանքն ու անոր մարդիկը:

Վերջին Հաշուով այս պատմաբանները կը պատկանի նոր սերունդին եւ ասոր յաջորդը՝ նորագոյնին: Որքան խեղճ ու ողորմելի պիտի ըլլար պատկերը, եթէ նոր սերունդը միայն հակապատկեր մը պարզէր բազումաթիւ իր նախորդին: Այս սահմանափակ էջերուն մէջ, մենք մեզի դժբախտաբար հաղի իրաւունքը կը չընորհենք հպանցիկ ակնարկ մը պատշնհու աւսոր միմիայն քանի մը կերպարանքներուն վրայ:

Ներգաղթը ընդունեցինք իբրեւ մեկնակէտ: Դիտենք ուրեմն մեր քսանամեակի Հայրենասէրները:

Հոս կը հանդիպինք ժարդոց, Հայու տիպարներ, որոնք Հայրենադարձին հանդիսատեսները հղան քարափէն, եւ իւրովի խօսեցան:

- Գացէ՛ք: Գացէ՛ք Հայրենիք եւ ընպատեցէ՛ք: որովհետեւ մենք ալ պիտի գանք:

Բայց այս մարդիկը չգացին. եւ կեանքը շարունակեց իր ճամբան:

Ահաւաստիկ ուրիշ տիպար մըն ալ Հայու: Այս ալ դիտեց կարաւանները եւ սրտին խորէն մըմնջեց:

- Գացէ՛ք: Բարի ճանապարհ: Շէնցուցէ՛ք մեր Հայրենիքը: Օր մը որդիս կամ թոռս ալ կու գայ:

Դեռ կան ուրիշ Հայեր ալ: Ասոնք եւս տեսան ներգաղթը, եւ երջանիկ՝ ցնծացին:

- Գացէ՛ք: Յաւելտ ապրի մեր Հայրենիքը: Շէն մնայ Հայաստանը: Թող ծաղկի, ուռնանայ մեր երկիրը...: Բայց մենք... այդ ուրիշ խնդիր: Մենք զեռշատ գործ ունինք հոս: Մենք տեստուր,

դրամ ու կաշուած ունինք: Որո՞ւ պիտի ձգենք այդ բոլորը: Յետոյ, մենք ոչ բանուոր ենք եւ ոչ ալ մշակ: Իսկ Երեւանի մէջ պիզընիս շիտ... բայց ապրի Հայաստան: Կեցցէ՛ Հայաստան:

Ներգաղթէն յետոյ սփիւռքահայը սպասեց: Սպասեց որ Հայրենադարձ եղբայրը, ջոյրը կամ ազգականը խապրիկ մը ուղարկէր: Խապրիկը եկաւ ծածկապիտ, մատնեց թշուառութիւնը Հայրենի Հողին վրայ. եւ Հայրենասէր սփիւռքահայը ա՛լ հաւատակորոյ՞ աւազախրեցաւ. ուժացումին համակերպեցաւ:

Այսուհանդերձ, նոր սերունդին մէջ կան որ կը սիրեն Հայաստանը՝ կարծէք թէ ան իրենց Հայրենիքը ըլլար: Միայն այդպէս կը թելադրէ իրենց: Բայց դիտեն նաեւ որ արտասահմանի մէջ արդէն իսկ խոր արձատներ արձակած են: Այս Հողերուն վրայ պատուաստուած են իրենց թերան սովորութիւնը, բարբերը, աւանդութիւններն ու պատմութիւնը: Սփիւռքը կը սիրեն կարծէք թէ ան իրենց Հայրենիքը ըլլար: Սիրտը այդպէս կը թելադրէ իրենց:

Մտքի Հայրենիք... Սրտի Հայրենիք... բայց մանաւանդ շուար սերունդ:

Ո՞վ է ըսեր Հայրենիք ու չէ տեսչուցեր Ազգ:

Ա՛զգ: Դիտեցէ՛ք, առամը: Դիտեցէ՛ք ողբերգութիւնը որ կը կատարուի այս սերունդի կեանքին մէջ: Ի՞նչ էին երէկ Յորդանանը, Սուրիան, Եգիպտոսը կամ Իրաքը: Հո՞՞ն Հայութեան օճախներ: Մշակոյթի հնոցներ: Շէն ու բարգաւաճ դաղութներ: Հապա՛ ախօ՞ր: Ի՞նչ կը մնայ անոնցմէ բացի քանի մը խլեակէ: Տեսէ՛ք, ինչպէ՛ս Հայերը կը չուեն անդարձ՝ երամ առ երամ: Անոնք կ'երթան Առաքալիա, Գանատա, Միացեալ Նահանգներ...: Ի՞նչ անուն տալ այս գաղթին: Ապառիկ ցեղապատմութիւն մըն է սա, որուն գոյժը պիտի հասնի վաղ քան ուշ ծուէն ծուէն լուսթեամբ:

Օտարերկրեայ քաղաքացիներ եւ Հայրենասէր Հայեր: Ի՞նչպէս պիտի հաշտեցնեն երկու անձնաւորութիւնները

իրենց միակ անձին մէջ: Ի՞նչպէս պէտք է ընեն որպէսզի երկու տէրանց շտառային: Հասցա՞ւ եթէ, սեւ օր մը, պատահի որ մէկ անձնաւորութիւնը հակադրուի միւսին: Հասցա՞ւ եթէ, չար օր մը, ստիպուին մէկը անոնցմէ սպաննել՝ միւսն ու իրենց գլուխը պահելու համար:

Այս խեղճերը դիտեն՝ թէ յայտ մարդկութեան հայրենադաւ պիտի նըկատուին, եթէ հակադրուին իրենց քաղաքացիի հանգամանքին:

Գիտեն նաև թէ հայրենադաւ պիտի նկատուին, դէ՞՞ իրենց սեփական աչքերուն, եթէ հակադրուին առհասարակ հայրենիքին:

Վերջապէս, այս սերունդին զաւակները արժանապատուութիւնը ունին իրենց ծագումին: Գիտեն մանաւանդ որ Հայր չի կրնար, բնաւ չըլլար հայրենադաւ:

Ուրե՞մն...

Ըսինք արդէն: Այս նոր հայն ալ զաղթական է նախորդին պէս: Բայց երկուքին միջև տարբերութիւնը շատ մեծ է: Հակադրաբար առաջինին՝ վերջինս չէ հազած իր կացութիւնը իբրև բռնաշակի: Այլ պարզապէս ստացած է զայն: Միւս կողմէ, ըսինք նոյնպէս թէ օտար երգիքներու տակ ան հիւր չէ: Տանուակ է այլեւս, քանի որ քաղաքացիութիւնը չէ ընդունած որպէս շնորհ, այլ վաստակած է զայն իբրև երաւունք՝ միջազգային օրէնքներով նուիրապետութեամբ: Սակայն դիտէ ան թէ Ազգ մըն է ինք, եւ ոչ թէ հայաբարբառ ժողովուրդ: Ազգ մը, աւա՞ղ, որ հանգամանք չունի: Ազգ մը՝ որ կուսակցութիւն է, դպրոց, եկեղեցի, համայնք, թերթ ու գիրք: Բայց բնաւ երբեք այդ բոլորին համադրոյթը, այսինքն՝ Ազգ: Որովհետև չունի պատմութիւն, չունի ազգային ու հասարակական կեանք, եւ ինքնուրոյն անհղուութիւն: Բայց մանաւանդ կը տառապի քողաքական ընդհանուր բեւեռումի մը պակասէն:

Նոր սերունդին մէջ, անկասկած կը հանդիպէ խաւի մը որ ալ դպրոց չի լինար եւ ոչ ալ եկեղեցի: Հայրը աքնոր է

արդէն եւ չինիք է իրեն համար: Ինք՝ հիմա անգործ, կը մահճարանայ, կը յորտնի: Այս խաւին մարդը գործ կ'որոնէ: Աւելին՝ ան կը սպասէ որ ընկիւթը բարեհաճօրէն մատուցուի իրեն:

Հոս չիտեսնէք ազգային կեանքի նորափթիթ ելեկներուն եւ պիթնիքներուն մասին: Զիտեսնէք սոփեստ այլասերներուն մասին. որովհետև պէտք է դիտենք զանգուած մը՝ բազմամարդ ու երիտասարդ:

Այս բազմութիւնը նոր տաղանակներ ունի: Ան սերունդ մըն է որ հարցումներու հրայրքովը կ'այրի եւ հազիւ կը յաջողի գլուխը պահել օւսերուն վերայ: Անոր ներաշխարհը կը տառապի ցնցումներու եւ շղթայազերծ պայքարներու հոսանքներէն:

Կուսակցական է: Կուսակցութիւնը կը զգայ առաքելութիւններէն եւ իտէալներէն ալ անդին՝ իր հոգիին եւ ապրումներուն մէջ: Մանաւանդ ան կը մտածէ: Կ'ուզէ ճանչնալ իրբոու զի՞նչն ու զի՞նչ չո՞ւնն: Կ'ուզէ հաստատել սահման մը՝ իտէալականին եւ իմացականին միջև. իրականին եւ վերացականին միջև. տեսականին եւ տեսլականին միջև: Գիտէ թէ տեղ մը, բայց ո՞ւր, միտքն ու հոգին դիբար կը ժխտեն. եւ ուրիշ տեղ մը, նոյնպէս անձանթ, անոնք դիբար կը լրացնեն:

Այս նոյն երիտասարդութիւնը ինկեր է համաշխարհային մշակութիւններու համայնակուլ յորձանքին մէջ: Կը դիտէ անոր աճն ու օր աուուր զարգացումը: Կ'ուզէ կոնկակոթս հետելի անոր. առնել համամարդկայինին տարեքն ու ընդերքը: Բայց նաև իբր, պակենական ժառանգութիւն, կուրծքին վրայ ամուր կը սեղմէ, նախանձխնդիր՝ զայն պահելու հարազատ, անաղարտ եւ ինքնուրոյն: Այս իմաստով, մինչև իսկ բանաձեւեր կը հնարէ: Ինչպէս օրինակ, դէ՞՞ զբահանութեան անշուքիմմը. «Չեւով ազգային՝ եւ խորքով միջազգային» բացարտութիւնը: Յանախ կը թերաղնահատէ, երբեմն ալ կը զերտողնահատէ հայկականը: Բայց հաղուադէպօրէն կը դի-

տէ զայն իր իսկական արժէքին մէջ։
 Կնանքի բնականօն թաւալքին վըայ ուռնացող հայը կը գտնուի քաղաքա-
 կրթութիւններու խառնարանի մը պէրկը, ուր արժէքները, ի՛նչ բնոյթ ալ ունենան, շուտով խնդրական կը դառնան։ Գաղա-
 փարական ու բարոյական ըմբռումները կը խողխողուին։ Պատեհապաշտութիւնն ու քմահաճոյքը կը դառնան նորարարու-
 թեան օրէնք։ Դասականը կը յորընդմեջ ճիւղն կամ ապայմով։ Հիմա, նոր եր-
 դերու բանաստեղծներ կը յանդգնին հայրենիքն անպամ զոհել սիրուհիին մէկ նայուածքին։ Բազմախառն ամուսնու-
 թիւններն ու հաւատափոխութիւնները կը դառնան համապարօտեայ երեւոյթներ։ Այլեւս ոչ ոք կ'ընդվզի. ոչ ոք կը զար-
 մանայ։ Մինչեւ իսկ օտարին բնական կը թուի այս պատկերը. որովհետեւ անոր պարագային բնական է ոն։ Կորսնցնելիք կամ շահելիք չունեցողին համար բնական է ամէն բան, Միեւնոյնը չէ մեր պարա-
 զային։ Մենք տակաւին կրնանք հսկայ գրականութիւն մը մշակել Արարատը ներքողելու, օտար անունները ձաղկելու, կամ զմայր լեզուն յմոռանալը պատ-
 ուելիքը համար։ Դասական պայման-
 ներու նուազագոյն խախտումը, զեւ եւս գիշում մըն է, կորուստ մը մեր պարա-
 զային։ Այս երկուութիւնը չէ խուսա-
 փած նոր սերունդի սշաղթութենէն։ Ա-
 նոր համար ալ կը տառապի։ Կը տառա-
 պի իրբեւ հանդիսատեսը այլասերումին որ իլլիթրդի նման կը տարածուի, կ'անի մահացու բազմապատկութեամբ եւ որուն զէմ միակ ազդու գարմանը՝ հաւաքա-
 կան գիտակցութիւնը տակաւին անշա-
 փական կը մնայ։

Հիմա որ քիչ մը, շատ քիչ չափով մը Ծանօթ ենք նոր սփիւռքահայութեան մէկ կամ երկու խաւերուն, նայի՛նք ա-
 նոնց աչքերուն մէջ։ Տեսէ՛ք, ինչպէ՛ս լուծում կը փնտռեն իրենց հարցերուն։
 Ասոնք կ'ուզեն իրաւ կապ մը հաս-
 տատել սփիւռքի բոլոր գաղութներուն միջեւ։ Կ'ուզեն ճանչնալ իրագրութիւնը տարբազարուող եւ նորակազմ զու-
 դութներուն մէջ, որպէսզի անոնց ճա-

կատաղիրն ալ լծակից՝ իրենց սեփական ճակատագրին, իրբեւ հայու ընդհանուր ճակատագրին՝ յանձնեն կենաց պայքա-
 րին այսօր, վաղը, մինչեւ յաւիտեան։
 Ասոնք կ'ուզեն ունենալ սփիւռքահայ կազմակերպուած մշակոյթ՝ այնպէս ինչ-
 պէս ունին արդէն գիրենք շըջապատող եւ հիւրընկալող քաղաքակրթութիւնները որոնք պետականութեան բարեքները կը վայելեն։

Ասոնք կ'ուզեն կազմակերպուիլ։ Դասնայ քաղաքական հաւաքականութիւն եւ ազդակ։ Տեսեսական սւտ։ Ասոնք կը պահանջեն իրենց հանգամանքը, իրենց զէմքը։

Վերջին հաշուով նոր երիտասարդու-
 թիւնը կը ձգտի դառնալ — միշտ անօթ-
 մարտ անտարակոյս — զաղութահայութիւն մը փոխանակ սփիւռքահայութեան։ Այսինքն՝ կ'ուզէ ըլլալ հաւաքականու-
 թիւն մը, միասարբ, եւ ներդաշնակ միա-
 տոր՝ Տէք ու Պահանջատէր Հայկական Դատին։

Հայկական դատը դիտարկէր։ Որով-
 հետեւ հայրենագործի հայութիւնը, ջար-
 քանչ մեծամտնութեամբ արեւմտահայ, ալը դատին թրջական երեսը արդարօ-
 բէն կը նկատէ իր սեփական հարցը։ Ա-
 ուանց արեւմտեան Հայաստանին սփուր-
 ւած հայութիւնը պիտի մնայ իրաւա-
 գուրդի եւ անհայրենիք՝ մինչեւ իսկ այժ-
 մու Հայաստանի հարազատ հողին վը-
 քայ։ Այս ըսելով, անշուշտ չինք մտա-
 ծեր երկու անջատ Հայաստաններու մա-
 սին. կոպիտ թիւրիմացութիւն մը պիտի ըլլաք այդ, որովհետեւ, — հասկցողին շատ բարեւ — Վանեցի բարեկամ մը սո-
 վոր էր ըսել — Հայաստանը՝ Վանն է։

Վերջապէս, վերջին քանամեակի հայերը կ'ուզեն... կ'ուզեն... կ'ուզեն հասարակապէս՝ կարելին ու անկարելին ցնորականն ու իրականը, իտէպլն ու ջո-
 շափելին։

Տուայտանքներու, երկուութիւննե-
 րու, բարդոյթներու եւ անելներու ընդ-
 հանուր մթնոլորտին մէջ քանամեակի սերունդները պահանջեցին ու դեռ կը շարունակեն պահանջել իրենց դիմադի-

ծը, իրենց էութիւնը, իրենց գոյութիւնը, իրենց ճանապարհը:

Տակաւին չգտան: Այսօր երբ Յիսնամեակը նոր անկիւնադարձ մը կը հաստատէ մեր հասարակական կեանքին մէջ, կը տեսնենք նորագոյն սերունդի մը խլրլըրտումը: Ան շուտով բաշէրը պիտի ցնցէ եւ իբրեւ ուղղակի ժառանգորդ՝ հաշուեկէիտ պիտի պահանջէ քանամեակի սերունդէն: Վստահարար, այսօրուան երբտասարդ սերունդը՝ արդէն իսկ ծեր, պիտի ներկայանայ զլիտիւր, ամօթապարտ ու անվաստակ: Պիտի բերէ մեայն իր սաղնապնէրը այնպէս անլոյծ, անտեսուած ու արհամարհուած ինչպէս որ մնացին շարունակ:

Արդ, ըսէ՛ք խնդրեմ, վերջին քսանամեակի գրականութեան մէջ գոյութիւն ունի՞ր սփիւռքահայ կեանքը: Այսինքն՝ այդ պատմաչըջանին մէջ գոյութիւն ունի՞ն նոյնինքն ժամանակաշրջանն ու իր մարդիկը:

Ի՞նչ է արդէն կեանքը: Որո՞նում: Որո՞նումը մարդուն ու անոր ճակատագրին:

Ո՞ր է այս որոնումը սփիւռքահայ գրականութեան մէջ:

Իայց նախ եւ առաջ ո՞ր է վերջին քսանամեակի սփիւռքահայ գրականութիւնը:

Անկասկած՝ կրնանք մտածել, թէ՛ կուզ պահ մը, թէ՛ գրականութիւն է ամէն գրութեանը որ սեւեռվ կը յանձնուի ճերմակին: Այս ըմբռնումով, մեր ակնարկը կը դարձնենք մեր ետին բարձրացած թուղթերու, թերթերու եւ գիրքերու հսկայ լեռան մը վրայ եւ ուրախ կը բացազանչենք: Գրականութիւն մը ունի՞նք. վաստակը վերջին քսանամեակին: Հոն ներկայացուած է հայուն կեանքն ու կենցաղը, վարքն ու բարքը, հոգեբանութիւնն ու հոգեփոխութիւնը, ընտանիքն ու տաղնապնէրը:

Իայց, չլիտիւնք ցորենն ու դարին: Կարճատեւ է մեր ուրախութիւնը: Կասկած մը լուռ՝ կը սողոսկի մեր հոգիներէն ներս: Արդե՞օք, հարց կու տանք իւրովի, արդե՞օք գրականութիւն է այդ

ըլորը: Գրականութիւնը, կարծէք ճայն մը կը շնչայ ներսէն, նուաճում է: Գո՛րծ: Ամբողջութիւն մը՝ մեծ ու փոքր բայց ապրող էակներու: Գրականութիւնը, կը շարունակէ ան, ժամանակն է: Վկայագրութիւնն ու կենդանապատկերը այն ժամանակին ուր կը ստեղծագործուի:

Ճշգրէ վերջին քսանամեակի գրականութիւնը, կը նշանակէ այլ խօսքով, ճանչնալ նոյն այդ ժամանակը եւ անոր վկան:

Հիմա նոր ակնարկով մը կը խուզարկենք մեր ետին կանգնած լեռը: Հոն կը տեսնենք դէմքեր ու գիրքեր: Մարդիկ ու գործեր: Հետեւարար՝ հոն կեանք մը կ'ապրի: Կեա՞նք: Անտարակոյս գոյութիւն ունի նաեւ գրականութիւնը:

Իայց լաւ դիտենք մեր տեսած դէմքերը: Խորագնենք անոնց գործը: Ակնբերել է, այդ մարդիկը վերջին քսանամեակի վկաները չեն: Անոնց գրականութիւնը չի պատկանիր վերոյիշեալ պատմաչըջանին: Լաւ նայեցէ՛ք լեռան: Կը տեսնէ՞ք: Հազիւ քանի մը դիտենք գուրս կը ցցուին անկէ: Մէկ ձեռքի մատներն անգամ շատ են զանոնք հաշուելու համար: Արդ, չենք կարծեր թէ ատան ու անհեթեթ վերադրում մը կ'ըլլայ հաստատելը թէ՛ վերջին քսանամեակի գրողները ունին ուրոյն կեանք մը, մինչ անոնց գիրքերը՝ ուրիշ կեանք: Ոչ մէկ բոպէ չենք կասկածիր թէ այդ գիրքերը իրենց տեղը ունին հայ գրականութեան մէջ: Ձենք ժխտել անոնց արժէքն ու վաւերականութիւնը: Այլ կը պնդենք թէ անոնց ժամանակը նահանջինն է: Այս գիրքերը կեանքի կոչումն են իրենց ժամանակէն դուրս՝ լուսանցքի վրայ:

Վերջին քսանամեակի սփիւռքահայ գրականութեան մասին խօսելէ առաջ, զուցէ աւելորդ չ'ըլլար ուրուագիծ մը՝ գրականութեան մեր ընդհանուր ըմբռնումէն:

Ընդունուած է միանգամընդմիջտ որ Գրականութիւնը, անկախ երկի մը ու երկերու որակական արժէքէն, ընդհանուր իմացում մըն է ուր հանդէս կու

գայ տուեալ ժողովուրդի մը զբաղանքն
բովանդակ ստեղծագործութիւնը, մէկ
կողմէ նախասահմանեալ ժամանակաշրջ-
անի մը մէջ, եւ միւս կողմէ տուեալ ժո-
ղովուրդի պատմութեան մէջ:

Գալով զբաղանքիս արժէքին,
ան կը շտապուի:—

Ա.— Ընդունուած ժամանակի մը
ընդհանուր վաւաստեմէն բխող նուաճում-
ներուն որակով ու քանակով:

Բ.— Յարաբերաբար ժամանակագրա-
կան եւ ազգային սահմանները ակնա-
հարող այն նուաճումներուն, որոնց հա-
րազատ տեղը կը գտնուի համաժողովուր-
դին եւ յաւիտենական ծիրի մը մէջ:

Գ.— Յարաբերաբար տուեալ պատ-
մաշրջանին եւ անոր մարգուէն զեղար-
ուեստական ու վաւերական վկայագրու-
թեան:

Վերջիւստեալ հանգանակն ու չափա-
նիշը հաստատելով, չենք մոռնար զբա-
ղանքն արժէքը յուշագրութիւններուն:
Չենք ժխտել կարեւորութիւնը անցեալը
ստեղծագործող վիպագրութիւննե-
րուն: Եւ ոչ ալ կ'ուրանանք միմիայն
գեղեցիկին ծառայող զեղարուեստական
զբաղանքի մը:

Վերջին հաշուով, կասկած չկայ որ
զբաղանքիս ամէնէն ճշմարիտ հան-
գանակը կը մնայ վերաբերմունքը զբա-
ղանքի հանրութեան մեծագոյն զանգուածին
որը, երկի մը առջեւ կրնայ կամ ոչ ինք-
զինքը գգալ զբաղանքի միջոցով մէջ,
եւ զանէլ զբաղանքիս ներկայութիւ-
նը:

Հասկնալի պատճառով զուտ զեղար-
ուեստական զբաղանքիս անհրաժեշտ հան-
գանակը մեր խորհրդածութիւններու ծիրէն:
Մեր մտահոգութիւնը, տեսակ մը ինք-
նահանալման ճիգ՝ կը ձգտի մեր կեանք-
ի որոնումին: Այսինքն՝ կը փորձենք
ստուգել թէ քանամեայ զբաղանքիս
մէջ ճշգրտած է նոր հայտնի զիմադրիչ:
Պեղումն է անոր հոգին: Հարցապնդը-
ւած է անոր միտքը, Հետեւած ենք անոր
օրն ու տարին: Պիտի ուզէինք կարենալ
ըսել թէ նոր սերունդին կեանքը վաւե-

րակոն եւ ամբողջական կերպով ներկայ
է այս շրջանի ստեղծագործութեան մէջ:
Իայց ո՞չ է ան: Կը վնասենք զիրք մը
կամ զիրքեր՝ զորս կարգաւով մեր երե-
տասարդները բացազանչեն:— ՔԱՆԱԿ-
ՍԻԿ Ե՛՛՛՛՛:

Որովհետեւ, ըսենք թիչ մը շարա-
շահութեամբ, ի՞նչ կ'արժէ զբաղանքու-
թիւն մը անանց այս «ես»ին: Ի՞նչ ճշը-
մարտութիւն է այն՝ ուր չկամ ես:

Նոյն մօտեցումով զանց կ'ընենք
յուշագրութեանց այն սեռը որ պատ-
մութեան կը վերաբերի: Ան կը ձգտի
կենդանի դարձնել շփացած անցեալ մը,
բայց հազուադէպ պարագաներուն միայն
ազերս կը պահէ յորդահոռ ներկային
կամ ակնկալուած ապագային հետ:

Ինչ կը վերաբերի պատմական վի-
պագրութեան, բնականաբար ան կը
պատկանի նոր պատմաշրջանի զբաղա-
նութեան, պայմանաւ որ հնադարեան
նիւթը արծարծուած ըլլայ նոր մտահո-
գութիւններ ու նոր խնդիրներ կենդա-
նադրելու համար:

Այս գրեթէ հասարակ տեղիք ճշը-
դումներէն ետք, այլեւս կրնանք հե-
տեւեցնել թէ կեանքը զբաղանքիս
մէջ ուրիշ բան չէ, եթէ ոչ կեանքը հե-
ղինակներուն բայց ժանաւանդ կեանքը
անոնց պատմաշրջանին՝ իրենց բովան-
դակ ստորագրութիւնով: Նոյնիսկ հնա-
դարեան անցեալը կենդանացնող զբա-
ղանքիս մէջ կ'արտացոլայ հեղինա-
կին պատմաշրջանը: Առէ՛ք օրինակ
Բաֆֆիի ու Մերենցի վէպերը, կամ ա-
մէնէն մօտիկը՝ Դ. Դէմիտրեսի «Վար-
դանաքը»: Ինքնին պերճաբոս է այն
յարաբերակցութիւնը որ գոյութիւն ու-
նի Վարդանանքին եւ Դ. Դէմիտրեսի
սովետահայ պատմաշրջանին միջեւ:

Արդ, վերջին քանամեակի սփիւռ-
քահայ զբաղանքիս անհրաժեշտ հարց
կու տանք մենք մեզի:— Ո՞ր պատմա-
շրջանին կը պատկանի այն զբաղանքու-
թիւնը որ սա քսան տարիներուն մէջ
մշակուելով հանդերձ, կը վկայէ նախորդ
երեսուն տարիներու տարազիւր հայուն
փորձին, հոգեբանութեան, ապրումնե-

րուն եւ պայմաններուն մասին :

Այսօր, ոչ մէկ գրադէտ պիտի չփորձէր մինչեւ իսկ աւելի գեղեցկօրէն մը շահել նոյն նիւթը միեւնոյն մօտեցումով որ Հրանդինը եղաւ : Մինչդէռ, բոլոր ալ գիտենք թէ Հրանդը վերցնել հայ գրականութենէն, կը նշանակէ հոն մեծ բաց մը արձանագրել : Ինչո՞ւ : Որովհետեւ, նոյնպէս հանրածանօթ ճըշմարտութիւն է որ, Հրանդին պանդուխտները կը պատկանին իրենց պատմաշրջանին :

Գուցէ տուարկէք որ Համաստեղ, քսաներորդ դարու կէսերուն, Ամերիկայի մէջ նստած, մեր գրականութեան կը յանձնէր պատմուածք պատմուածքի ետեւէն, նկարագրելով հայրենի գիւղը այնպէս՝ ինչպէս եղաւ. եւ հայ գիւղացին որ ապրեցաւ բայց այլևս չկայ : Գուցէ արդարացի կերպով ընդգծէք նաեւ որ հակառակ նիւթին, միջավայրին ու մթնոլորտին ապայմէութեան, Համաստեղի «Գիւղն» ու «Անձրեւը» կը կարողանք իրաւ վայելքով ու յափշտակութեամբ : Կը զգանք թէ կը գտնուինք իրաւ գրականութեան մը մէջ : Տակաւին, առանց շարժանցիլու Համաստեղը կը դասենք մեր ինստ սակաւաթիւ ու ընտրելագոյն դրողներու առաջնահերթ շարքին :

Ինչո՞ւ :

Արդեօ՞ք այն է պատճառը որ Համաստեղ հարազատ նկարիչը կը հանդիսանայ իր տեսածին ու ճանչցածին : Հակառակ որ այդ տեսածն ու ճանչցածը կը պատկանին անդարձ, անկրկնելի երէկին :

Արդեօ՞ք անոր համար որ այդ դիւղը հայկական է. ու հայկականը՝ ո՞ղջ թէ մեռած, անցեալ կամ ներկայ, մօտիկ է մեր սրտին, հետեւաբար՝ սիրելի :

Ո՞չ :

Անկախ արուեստին պահանջած արժանիքներէն որոնք շատ մեծ են Համաստեղի գրականութեան մէջ, ան գրապէտ է եւ արժանաւոր դրադէտ՝ երկու հիմնական պատճառներով :

Առաջին՝ անոր համար որ կրցած է Հոլին եւ Մարդուն միջեւ բանել այն սերտ կապը որ հաստատուած է նստակեաց մարդուն պատմութեան առաջին օրէն, ու պիտի շարունակէ մնայ թերեւս աշխարհարեակ մարդուն մինչեւ վերջին օրը : Ժամանակին ու միջոցին մէջ չը պարփակուող այս ճշմարտութիւնն է կորիզը Համաստեղի «Գիւղին» ու «Անձրեւին» :

Երկրորդ՝ անոր համար որ այդ պատմուածքներուն մէջ գիւղն ու դիւղացին կը մարմնաւորեն հայրենիքին ու հայրենարդձութեան գեղեցկագոյն արտայայտութիւնը :

Համաստեղի գործերէն հանեցէք մարդկային եւ համամարդկային այս երկու զգայարանները ու կը ստանաք, դուցէ դեղեցիկ լուսանկար մը, բայց հնարօր գիւղագրութիւն մը՝ ապայտմէ ու անշահ :

Գծախտարար սակայն, բոլոր գործիչներուն տակ չ'իյնար ընդհանուրը, մարդկայինը, մասնաւոր կամ մասնակի նիւթի մը առիթով : Սփիւռքահայ գրականութեան մէջ բազմաթիւ են հայրենարդձութեան երդիչները : Անոց մէկ մասը շնորհալի են. բայց առհասարակ զգացումներուն կու տան այնպիսի երանդ մը որ հարկադրաբար այդ զգացումները կը բանտարկուին շատ սեղմ պատմաշրջանի մը մէջ : Այս գրականութիւնը, ճշմարիտ ու հարազատ՝ բայց կը մնայ պարագայական : Առաջին երեսնամեակի մարդը ուրիշ է եւ անոր յորդող քսանամեակինը՝ ուրիշ, և տակաւին, նոր բացուող պատմաշրջանի երկտասարդութիւնը կը թուի նոր կերպարանք ստանալ :

Անկասկած հայեր են երեքն ալ, իրաւ հայեր : Հարազատներ են եւ իրերահարգող : Բայց շունին միեւնոյն կեանքը : Ձեն անցած միատեսակ փորձառութենէ : Ձեն ենթարկուած միեւնոյն հոգեփոխութիւններուն : Հետեւաբար՝ միեւնոյն մարդիկը չեն : Իսկ գրականութեան մէջ էականը մարդն է :

Նախորդ երեսնամեակի տիպարը

իր հարազատութեամբ, բայց նաև պարագայականութեանը մէջ շատ լուրջէն մատուցուած է մեղի: Կ'ըսենք՝ պարագայականութեանը մէջ, որովհետև եթէ ան ներկայացուած ըլլար նաև իր ընդհանուր մարդեղութեանը մէջ, այսօր մենք պիտի չկարենայինք դժեղ այս աստիճան անջատ դրացի: Անտարկոյս՝ նոր տիպարը ոտնկի պէս շրջուաւ: Վերջին քսանամեակին մէջ որպէս միտք ու փորձառութիւն անած մարդը ժառանգական կոպեր ունի նախորդին հետ: Բայց գրականութիւնը չի մատնէր այդ ազդակնութիւնը: Այդ գրականութեան առջև այսօրուայ երիտասարդը կրնայ միայն բացազանջել՝ ձկնաձուկի հայրընք:

Բայց ինք կը փնտէ ինքզինքը: Երէցին մէջ կ'ուզէ տեսնել իր սեփական տարրերը: Կարգ մը տեղեր կը փորձեն մատնանշել զայն: Բայց զոյց տրուածը իրտօնիշակ մըն է: Անձոտնի ու այլանդակ ծաղրանկար մը: Իսկ ծաղրանկար ինք չի կրնար ըլլալ:

Մեր հաստատումները լուսաբանիչ զարմնեղու համար օրինակ մը վերջիննք Փրանսիական գրասնութենէն: Բ. աշխարհամարտի փորձը գրողներու հսկայ փազանդի մը ներշնչման ազդիւրը եղաւ: Մտղկեցաւ վաւերական գրականութիւն մը (Վերքոր, Տօրթըլէս եւն.) որ մնաց պարագայական: Նոյն փորձէն ծնունդ առին Սարթըր եւ Քամիլ որոնք չզարժան պատմութեան կալանստորները, այլ՝ մասնաւորէն հանցին ընդհանուրը: Անոնց հանդէպ շփացող պատմութիւնը անզօր մնաց: Հետեւաբար, յաջորդ սերունդները կրցան նորը որոնել առանց հինէն կտրուելու:

Այս մերձեցումով, մեր անգլանիկ երեսնամեակի գրականութիւնը, որքան ալ հարազատ ու գեղեցիկ, չէ կրցած հետեւիլ յաւերժացնող շատախոյն: Ահա թէ ինչո՞ւ, նոյնիսկ վերջերս մշակուած գրականութիւնը որուն տիպարներն ու պատկերները կը վերցունեն ձեռն նախորդող շրջանէն, նոյնիսկ այս դրա-

կանութիւնը կը վերաբերի առանձնաբար նախորդ պատմաշրջանին:

Հիմա այլևս չպէղհնք մազադաթեայ լեռը եւ շփնոտեք բան մը, որ գոյութիւն չէ ունեցած երբեք: Այն քանը որ քսանամեակի գրականութեան պիտի կոչէինք:

Այդ, եթէ վերջին քսանամեակի դրականութեան մէջ գոյութիւն չունի նոյնինքն այդ պատմաշրջանը, ի՞նչը ըսենք սիխոքահայ գրողին:

Ըսենք՝ թէ ան պատասխանատու է եւ անմեղ՝ միանգամայն:

Պատասխանատու է:

Որովհետև, թէպէտ պայմաններու րեւումով, ծոյլ է ն դիւրինին կ'ապահինի: Գրողը գիտէ թէ տարիներու հեռաւորութեան մը վրայէն բերեղացած անցեալը դիտել հեշտ է ու ճիշդ չի պահանջեր: Մանաւանդ որ գէթ իր սեփական հոգիին մէջ այդ անցեալը ներկայ մըն է, բառին ամբողջական իմաստով:

Որովհետև կը տարուի անցեալ ճերկայրով ու կը մոռնայ անմիջական ներկան: Երբ գրողը կը վերապրի մանկութեան եւ պատանեկութեան շրջանը ամբողջովին կը կտրուի իր մամանակէն, իր նոր հանգամանքէն: Կը մոռնայ ինքզինքը զարձակ կեանքի կոչելու համար այդ միւս ինքը որ ատենօք եղած էր: Անմիջակ է որ այս միքամարդու գրական յաջողութեան դիտար դադարիքը կը հանդիսանայ: Բայց անցեալը բերեղացած նրա կէսն իսկ բաւարար է ցոյց ապու որ ան թերի է. կենսական բան մը կորսուած է անկէ: Առանց գիտական յատկութեան կը կարծենք թէ միեւնոյնը կը պատահի երբ սովորական, անքային շուրջ կը դառնայ թորեալ:

Որովհետև գրողէտը չի գիտեր կեանքը իր հոյովոյթին մէջ, այլ կը գիտէ անոր պատկերը՝ հայելիի մը մէջէն: Մարդկային յիշողութիւնը ահաւոր զտարան մըն է ուր բոլոր սպաւորութիւնները տակաւ առ տակաւ կը կորսնցնեն իրենց հոգին, այսինքն մանրամասնութիւնները, կմախք մը պահելու համար: Բայց նաեւ անմեղ է գրողը:

Չմոռնանք որ վերջին քսանամեակի գրողը նախորդ երեսնամեակի մանուկն է կամ պատանին, այսինքն մարդը: Ապագայ գրողէտը այն տարիքին, երբ պիտի ամբարշէր մտքին ու հողիին զարգացման անհրաժեշտ պաշարը, երբ պիտի կազմաւորուէր ու գինուէր ասպարէզի պայթարին համար, գտնուած է նախորդ երեսնամեակի մթնոլորտին մէջ, իր տեսլանկիւնը հաստատուած է հոն: Ի՞նչ կրնար ընել երբ օրերն ու պայմանները, սփիւռքի ճակատագիր՝ փոխուած են հիմնովին դեռ մարդը հասկնալ գրողի կոչումին արժապանդած: Անխուսափելի էր: Մարդը՝ դուք հասկցէք մանուկն ու պատանին, պիտի ըլլար գրողին առաջին ատաղձը: Եւրոյը դիտելէն առաջ ինքզինքը պիտի գնէր գրականութեան մէջ: պիտի փոխէր ամբողջ փորձառութիւնը, որպէսզի կարենար հասնիլ հոն ուր գրողն ու մարդը պիտի իր յանձնարին: Այս հանգրբըտելին վրայ գրողն ու մարդը պիտի դաշտանէին նոր փորձառութիւններ ու պեղէին նոր ընդերքեր:

Սփիւռքուհայ գրողը որուն համար գրականութիւնը եղած է կեանք բայց ոչ ապրուստի միջոց, գտնուեցաւ վտանգաւոր խաճերուկի մը վրայ: Ստիպուած՝ ներուժին ու կիրքին հզօրագոյն մասը յատկացնել հացի պայթարին, չըկրցաւ գտնել ժամանակն ու հնարաւորութիւնը նոր աստղաքայլում մը ունենալու: Զկրցաւ ճանչնալ նոր ընկերութիւնը, կարդալ նոր մարդու հողին: Վերջապէս չկրցաւ խորագննին թափանցել գարգացման նոր փուլին:

Ի՞նչ կը վերաբերի երիտասարդ գրողին, այս եւս միանգամայն պատասխանատու է եւ անմեղ:

Անմեղ է, որովհետեւ դեռ շատ երիտասարդ, փորձառութիւնը չէ հասցուցած իր լրումին: Այսինքն չէ հասցուցած: Կեանքին մէջ ապրած է սոսկ նապիւր, բայց չէ բնութագրած զանոնք, տեսած է պատկերներ, բայց չէ կալանած անոնց ոգին: Մնաց որ նախորդ սերունդին գրականութենէն ան չէ ստացած իր պահանջներուն գոհացումը:

Աւելորդ է յիշել որ երիտասարդ գրողը սկսած է թոթովել առանց սուսուցի, Այս պատճառով իսկ ան ընդունակ եղած է ժխտական տրամադրութիւններու: Այսօր իսկ ան տակաւին կը մտնուի դժգոհելով առանց երբեք յաջողելու դժգոհութիւններուն գրականութեան գեղեցիկ արտայայտութիւնը տալ:

Երիտասարդ գրողը պատասխանատու է սակայն, որովհետեւ կը գտնանայ նուազագոյնով: Տեսածները կը մատնանչ պատասա մը ցոյց տալու պէս ու կ'անցնի: Երբ գրէր կը բռնէ չզգենար ոչ վիրաբոյժի, ոչ հետազօտիչի եւ ոչ ալ տարբարութիւն հանգամանք: Այս գրողը չի կրճտիր, չի բռնիթանար, չ'ըմբոստանար: Այս գրողը կը վախնայ...:

Իրերու այս դրութեան մէջ անմեղ է ինք՝ սփիւռքահայ կեանքը զոր եթէ ճանչնար Փիլիպոսեւ, անկասկած պիտի գոչէր՝ Ահաւսիկ անձնաւորութիւն մը որ հեղինակ կը փնտռէ:

Եւ Փիլիպոսեւ իրաւունք պիտի ունենար: Գանի որ, մեր համեստ կարծիքով, աշխարհի երեսին ոչ մէկ ժողովուրդ կեանքի քառուր չէ ճանչցած այնպէս ինչպէս մենք:

Ի՞նչ է արդէն գրողէտին առաջելութիւնը, եթէ ոչ այդ քառուր բիրեղներ գուրս բերել:

Այսօր, երբ սփիւռքահայ գրականութիւնը բաւարար չափով տուած է կեանքը առաջին երեսնամեակին, երբ քսանամեակի կեանքը դեռ եւս կը մնայ մեծ թաշական, մենք կը գտնուինք վճարանգաւոր անկիւնադարձի մը վրայ: Խղճի քննութեան եւ կենաց ու մահու պահ մըն է սա:

Մահ՝ եթէ շարունակենք թմբիրի գրականութիւն մշակել:

Վերակենդանութիւն՝ եթէ երիտասարդները խորունկ ներհայեցողութեամբ մը ճանչնան իրենց հողին. տեսնեն իրենց ճակատագիրը, խորագննին իրենց պայմանները: Ապա անձնատուր ըլլան ներհուն թափանցողութեանը իրենց չըր-

Նապատին եւ վերջապէս դիտակցին թէ մեր կեանքը չորս հաւասար հանգամանքներ ունի :

Ա.— Հայ ենք : Այսինքն ծագումով, առհասարակ ժառանգութեամբ, բազմադարեան աւանդութեամբ, քաղաքակրթութեամբ, մշակութիւնով, զգայու եւ մշտածելու եղանակով կը պտտկանինք հայ ցեղին :

Բ.— Գաղութահայ ենք : Այսինքն, հայրենազուրկ՝ հիւրընկալ երկիրներու մէջ կ'ապրինք որպէս համայնք, որպէս ազգային հաւաքականութիւն : Հիռու ենք թափառաշրջիկ ու պատեհապաշտ ցեղախումբ մը ըլլալէ : Իրբեւ համայնք ամենուրեք իրաւունքն ու ազատութիւնը ունինք ըլլալու մենք զմեզ :

Գ.— Սփիւռքահայ ենք : Այսինքն, մէկ ազգ՝ բեկոր-բեկոր ցրել եկած ենք ի սփիւռս աշխարհի : Մեր իւրաքանչիւր բեկորը առանձնաբար չփճան մէջ կը գտնուի տարբեր քաղաքակրթութեան մը հետ, որով, բնութեան իսկ օրէնքով, ժամանակի ներգործոն դերը կը լարուի մեզի դէմ եթէ դերնական ըզզաստութեամբ եւ գերմարդկային ճիւղերով յարատեւ կապի եւ կազմակերպ վիճակի մէջ չպահենք փոքր ու մեծ բունըր գաղութները :

Դ.— Մարդ ենք : Այսինքն, ազգային ինքնուրոյնութեան առնիթեր, ընդունակ ենք մարդկային բոլոր ցեղերուն հետ եղբայրանալու եւ նոյնանալու : Ընդունակ ենք բարդադրեալ նոր բնութեամբ մը օժտուելու : Հետեւաբար մեզմէ կախում ունի ստացական տարբերք ի նըպաստ կամ ի վնաս մեր ազգային յարաբերութեան դարձնելը :

Այսօր մեր ժողովուրդը կ'ապրի այս չորս հանգամանքներով : Չ'ըլլար, իրաւ եւ մնայուն գրականութիւն չենք կրնար մշակել, եթէ մեր գրագէտները անտեսեն մէկն ու մէկը անոնցմէ : Բարդ կազմութիւն մըն է սա որ գրագէտը պիտի ունենայ իր գիտակիցին կամ ենթագիտակիցին մէջ : Վերկանքն ու թիւրիմացութիւնները կանխելու մտահոգութեամբ աւելցնենք միայն, որ գրականութիւնը չենք ըմբռներ որպէս նշատախտակ, վերնազրեբու ցոյցակ, պատկերահանի գործիք եւ ոչ ալ վարժարան : Պիտի չուզէինք որ գրականութիւնը մեզի սորվեցնէր մեր ընելիքն ու չընելիքը, ցոյց տար մեր ճամբան. այլ պիտի ուզէինք որ ան մեր գիտակցութեան յանձնէր մեր ճակատագիրը :

ՆԱԶԱՐԻԹ ՓԱԹԱՆԵԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

(1945-1965)

Դ.

Ի Տ Ա Լ Ի Ա

Առաջին եւ երկրորդ համաշխարհային պատերազմներու միջեւ, իտալիան ապրեցաւ տազնասպալի շրջան մը: Ճաշխաս տիքթաթուրան գրականութիւնը դատապարտեց կէս թմբիրի մը. կարելի չէր նոր գաղափարներ արտայայտել. հեղինակները ուրեմն ուժ տուին ոճին ու ձեւին, եւ ստեղծուեցան դեղարուետական արձակը, աշխատուած ու կոկոսած էջերը: Այդ շրջանը եղաւ մանաւանդ շրջան մը բանաստեղծներու, որոնք ազատօրէն կրնային իրենց երեւակայութեան անբացատրելի լարիւրինթոսներուն մէջ անհետացնել իրենց ըսելիքները: Այդ շրջանի մեծագոյն գրողները եղած են ձիուզէփփէ Ռենկարէթթի, Մորթալէ, Ռամպէթթօ Սապա եւ մանաւանդ Մալվաթարէ Գուզիմօտօ, նույնքան մրցանակաւոր:

Վիպասաններուն արդիւրուած ըլլալով գլխաղի քաղաքական, տնտեսական եւ ընկերային հարցերով, կը փորձէին ուձփմը քննադատել ժողովուրդին ապրելակերպը եւ կենցաղը նկարագրելով: 1915-ին կը փոխուի ամէն ինչ: Երկիրը որ զինուորապէս եւ տնտեսապէս քանդուած է, պէտք ունի վերակառուցումի: Եւ կը ծնի նոր բարոյական մը, նոր ոճ մը եւ նոր մշակոյթ մը:

Կենսագրի ՆՈՐ ՏԵՍԱԿԵՏ ՄԸ. ՍԵՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Կարգ մը վիպասաններ կը փորձեն մարդու վարուելակերպը բացատրել իր սեռային կարողութիւններուն եւ ալ-

րութիւններուն մղումներով: Վիքալիեօ Պրանֆարի, (1907-1954), նշանաւոր է իր Գիդեցիկ Անթոնիոն վէպով: Անթոնիոն անկարող Տօն ժուան մըն է, որ ինքզինքը կը զովարանէ իր սկարամիտ բարեկամներու շրջանակին մէջ, որոնք իրենց մտային եւ սեռային յաճախումներուն գոհացումը կը գտնեն անոր շինծու պատմութիւններուն մէջ: Վէպին թոնը թէեւ հեզնոզ եւ զուարթ է, բայց նպատակը շատ լուրջ է. Պրաքանթի կը դատապարտէ իտալիկ արուեստը, որոնք կը պարծենան իրենց աւնականութեամբ եւ սակայն պարզ տաքաղաղներ են, չեն գիտեր զոյգեր կազմել: Միւս երկու վէպերը, Տոն Փաւան Սիլիլիոյ մէջ, եւ Փաթոյի տեմպաֆները կը շուփեն նոյն հարցերը:

ՆՈՐ ԱՂՐԻԻՐՆԵՐ

Ալպերթօ Մորավիա, (ծնած1907-ին), մեծագոյնն է ապրող իտալացի վիպասաններուն: Իւ վէպերը կը պատասխանեն հետեւեալ հարցումներուն. ինչ են մեր արարքներուն իրական պատճառները: Եւ ինչ է մեր արարքներուն նպատակը:

Իր առաջին վէպը Անտարքթիկայի ունի գոյապաշտական երանդներ, եւ կը պատմէ սնանկութիւնը աւանդական արժէքներու, ընտանիք, սէր եւ աշխատանք: Կը նկարագրէ աղտոտ ու հասարակ միջավայր մը: Վէպին հերոսը, Միքաէլլօ, թոյլ կու տայ, որ մօրը հո-

ժանիւն զլինէ հանէ նաեւ իւր քորուր։ Զ'ընդիմանարս ինչո՞ւ պիտի ընդիմանայ։ Կացութիւնը զգուեի է, բայց ընթացիկ բարոյականը. ո՛չ մէկ յենակէտ կը տրուի մաշէ որպէսզի ինք կարենայ ըմբոստանալ եւ պայքարիլ։

Մորավիա կը ջանայ հասկնալ արարքներուն մղիչ ուժը, եւ հինցած սկզբունքներուն աւերակներէն գտնել հատ մը, որ ըլլա՞յ հաստատուն ու վըստահելի։ Վերլուծած է մարդկային յարաբերութեանց տեսակները. մօր մը եւ իր զաւկին յարաբերութիւնները Ակոսթիմօ եւ Աննազանգուօիւնը վէպերուն մէջ, մօր մը եւ իր աղջկան յարաբերութիւնները Գեդեցիկ Նոմուխիմ եւ Լա Չիռլիարա վէպերուն մէջ, մարդուն եւ կնոջ յարաբերութիւնները Բնտանեկան սէր եւ Արիստոփանէ վէպերուն մէջ։ Եւ այդ սովորական զգացումներուն տակ, թէ՛ զաւակ մը մօրը հանդէպ կը տածէ միայն որդիական սէր, թէ՛ մայրը իր զաւակներուն հանդէպ ունի մայրական սէր, թէ՛ ամուսնութիւնը հիմնուած է փոփոխարձ զգացումներու եւ ճաշակներու վրայ, Մորավիա գտած է միակ ու նոյն շարժումիւ՛ք՝ սեռային մակընթացութիւնը, որուն փոփոխութիւնները կ'որոշեն զգացական կեանքի պատահարները, սէրերը եւ ատելութիւնները, եռանդները եւ ծուրութիւնները։

Այս գիւտը նոր ուղղութիւն մը կ'ապրայ ապրելակերպին եւ հիմնակէտը հերոսներու արարքներուն։ Ակոսթիմօ, որ հերոսն է նոյնանուն վէպին, կը զբաւնուի այն տարիքին մէջ, երբ կ'արթնանան սեռային հետաքրքրութիւնները։ Ամառը կը գտնուի ծովեզերք եւ կը գիտնէ ինչպէս կը մերկանան մայրը, քորքերը՝ սուրի աղջիկներէ կա կը հասկնայ ամէն բան. կը տեսնէ այն ինչ որ կը պահէ իրմէ. եւ սիրոյ կեղծ կախարհազանքը կը ցնդի. երբ կը տեսնէ գեղեակցիկ կամ սգեղ մարմիններու մերկութիւնները։

Այս գիւտը, որ պէտք է ըսել բոլոր

բովին նոր չէ, բաւարար չէր Մորավիան դասելու դարուս մեծ գրողներու շարքին, եթէ չըլլար իր արուեստը։ Իր գործին համապատասխան ոճ ունի եւ բառամթերքը։ Զի բաւեր ըսել թէ Մորավիա մանրակրկիտ ձեւով կը նկարագրէ մարդկային մարմնի թաքուն մասերը, կը ծանրանայ մանաւանդ անոնց հասունութեան եւ ցցուն մասերուն վրայ, ինքնատիպ պատկերներով (սկզբնաբնութիւնը, ազաի գործարարներով նա մըն է)։ Մորավիա բնութեան մէջ կը տեսնէ ու կը նկարէ այն տարրականները, որոնք նմանութիւններ ունին սեռական անզամներու ձեւերուն հետ։ Մէկ խօսքով Մորավիայի արուեստը ունի տաք ու գիտնականորէր երանգ մը, որ կը ծանրանայ աշխարհի մարմնական եւ շօշափելի երեւոյթներուն վրայ։

ՍԵՋԱՐԷ ՓԱՎԷՑԷ

Երկար ժամանակ այս հեղինակը զստուած էր նոր իրապաշտներու դրոշմը ցնցիլ մէջ, իբր հարազատ նկարիչը ժամանակակից մարդկութեան։ Իրականութիւնը տարբեր էր սակայն։ Օգոստոսի գիշեր մը, 1950 թուականին, Փավէզէ անձնատպան կ'ըլլար թորինոյի պատգովներէն մէկուն սենեակին մէջ։ Յետ մահու հրատարակուած իր Օրագիրը ցոյց կու տար անձկագին հոգի մը, տառապող միտք մը, որ չէր կրնար համակերպիլ արդիական կեանքին եւ որուն ընդգրկած գրելու եղանակը կեանքէն խոտափելու միջոց մըն էր։

Մնած է 1908-ին, թորինոյի մօտերը։ Եւ մանկութենէն մնացած է իր յիշողութեան մէջ ծննդավայրին բնական ու վայրի տեսարանը. բլուրներ այրիներով ծածկուած, ցորենի դաշտեր, եւ կրկին բլուրներ ամայի բայց խաղաղ։ Եւ իր գործերուն մէջ Փավէզէ կը ջանայ վերլուծել բլուրներու եւ մանկութեան խորհուրդները։ Իւրաքանչիւր անձ բանտարկուած է ուրոյն աշխարհի մը մէջ,

զոր ժառանգած է իր մանկութենէն: Եւ իւրաքանչիւր շարժումը եւ արարքը որ կը կատարէ՝ կրկնումն է շատ հին արարողութեան մը: Կեանքին զանազանութիւնը եւ ճոխութիւնը, Փափէզէ կը փոխադրէ ներկայէն անցեալ եւ արտաքին աշխարհէն զէպի անձնական ներքին ոլորաները:

Բայց առանձին ապրել անկարելի է ներկայ աշխարհին մէջ: Փափէզէ իջաւ իր ամայի բլուրներէն զէպի քաղաքը, գիտնալով թէ ուրիշներէն կարելի չէր թան մը ակնկալել, բայց վստահ՝ որ միակ փրկութիւնը կը գտնուէր սիրոյ եւ բարեկամութեան մէջ: Այս առանձնութեան սիրահարը, որովհետեւ վիպասան էր, կը ջանար յարարութեան մէջ մտնել ուրիշներու հետ եւ ամէն անգամ կը փչրուէր անոնց անտարբերութեան առջեւ: Եւ այս ուրիշէ հետ հաղորդւելու անկարելիութիւնը կը պատկերացնէ վայրագ սիմպոլներով:— Կրակ, աբրուս, ալքոլ, կիզիչ արեւ, մերկ մարմին: Կան նաեւ մեղմ սիմպոլներ:— փողոցը, ծովափը, պարահանդէսը, սրճարանը: Բարեկամութիւնը կը պահէ իւրաքանչիւր անձը իր առանձնութեան մէջ: Իսկ վայրագ եւ մեղմ սիմպոլներուն միջեւ կայ կինը՝ վայրագ եւ մեղմ միանկամայն: Կինը՝ մարմինն է, մերկ մարմինը, առարկայ պայքարի եւ իւրացումի, բայց նոյն ատեն անմատչելի եւ զուլահեւ բարեկամուհին: Կինն է որ մարդու լքել կու տայ իր առանձնութիւնը, առանց զայն ձերբազատելու իր անձկութենէն:

Փափէզէ ունի միսթիք եւ հայեցողական բնութիւն մը, որ կը փորձէ նշանակել աշխարհը: Փափէզէի կարեւորութիւնը մեծ է արդի բանաստեղծութեան մէջ. սրովհետեւ ինք այն հազուագիտներէն է որոնք փորձած են խաղաղկել իրենց ներսիդին, հոն գտնելու համար իրենց փրկութիւնը եւ նոյն ատեն զուլսի աշխարհին մէջ փնտռել նոյն փրկութիւնը: Իր գործին մէջ նոյն կարեւորութիւնը տուած է ենթակայա-

կան հայեցողութեան եւ առարկայական գիտակցութեան: Իր ազգեցութիւնը աւելի կը տարածուի օտար երկիրներու մէջ քան իսաւրիս:

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԻՏԱԿՈՒ

Հիւսիսային Իտալիան իր ապրիլահերպով կը նմանի Եւրոպայի ճարտարաւեստական երկիրներուն, մինչ հարաւային մասը թշուառ ու աղքատ երկիր մըն է, հիմնուած երկրագործութեան վրայ, որ կը ճնշէ իրմէ ծնող արուեստագէտները:

Փորրատօ Ալվարօ խուսափելու համար այս ազգեցութենէն, ուզած է ճամբորդել եւ ծանօթանալ արդի մտածելակերպի մեծ հոսանքներուն հետ: Գրեթէ կեանք իր օրագիրը շոյ տեսած է 1950-ին: Ալվարօ չըջած է Եւրոպան, առանց սակայն մոռնալու իր ծննդավայրը, աշխատանքը, հողը եւ տանջանքը: Ուզած է հասկնալ ներկայ դարու քաղաքական վերիվայրումները, բացատրել Փաշիզմի եւ համայնավարութեան ընդթը:

Հարաւը ծնունդ տուած է Իտալական դրական մեծագոյն հոսանքին՝ նոր իրապաշտութեան: Ալվարօ բացառութիւն մըն է. միւսները կոնսկվարժուցած են Եւրոպական մշակոյթին եւ յենիով միայն Մարքսիստ գաղափարներուն վրայ եւ ընդգրկելով ամերիկեան վէպին թեքները, փորձած են ծնունդ տալ նոր մշակոյթի մը, որ աւելի իսալական ըլլայ քան տիեզերական:

Քարլօ Լեվի, (ծնած 1902-ին), ամէնէն ինքնատիպ գրողն է այդ չըջանին: Իր վէպերէն յայտնի են Ագուտաթեամ վախը, Փամացոյց եւ մանաւանդ Քրիստօ կանգ առաւ Եպօլիի մէջը: Այս վէպին մէջ Լեվի գիտող կ'ընէ նոր տեսակի մարդկութեան մը, որ ցարդ մուտք չէր գործած սրեւէ գրականութեան մէջ: Գիւղացիի նոր տիպար մը, Լուքանիոյ դաշտերուն մէջ ապրող, վերջին աստիճան թշուառ, բայց չըջապատուած հե-

քիսթային ու մոզական տիեզերքով մը: Լէվիի նպատակը մեզի տալ չէ միայն մարդկութեան նոր տիպար մը, այլ նոր լոյս սփռել մարդկային գոյութեան վրայ:

Այս է նաև նոր իրապաշտութեան նպատակը. ընթերցողին ցոյց տալ նոր տեսակի կենցաղ մը ո՛չ թէ անոր հետաքրքրութեան սնունդ մը ապուհ համար, այլ անոր պատկերացնելու համար մարդկային կենցաղին մէկ նոր երեսը: Այս վէպերուն անձերը աղքատ են, որովհետեւ աղքատութիւնը կը յայտնէ մարդէակին էութիւնը՝ մերկ ու անպաճոյճ: Գործաւորը եւ գիւղացին ազատ չեն գորդացնելու զգացումներ, որոնք չեն պատկանիր իրենց վիճակին. անոնք ժամանակ եւ կարողութիւն չունին մտածելու եւ ապրելու իրենց կացութեան օտար մը տածումներով եւ զգացումներով: Տասնընեակ մը դրողներ ընկերաբաններու մեթոտով ուսումնասիրած են հարաւի գիւղացութիւնը կամ գործաւոր դասակարգը, նոր լոյս սփռելով անոնց կացութեան վրայ եւ շանարով դարձան մը բերել, ազդել իրենց վէպերով մասսաներու վրայ:

Իշխան ձիուզիվիտ տի Լամփետուզա սակայն այս շարժումին հակոտնեայ դէրձ կը բռնէ: Յետմահու հրատարակուած էր Լեմառիւծը վէպին մէջ, որուն գէպերը տեղի կ'ունենան ժթ դարուն, Միկիլիոյ մէջ, կը նկարագրէ ծաղրական սճով մը, այդ շրջանին անտեսական անշարժութիւնը: Հակառակ այս դործին վայելած տիեզերական համբաւին, որովհետեւ հեղինակը մեծ վիպասանի շնորհ ունի, պէտք է ըսել որ բացառութիւն մը կը կազմէ, եւ յենելով յաւիտենական օրէնքներուն վրայ, բնական կը զսնէ ժողովուրդին թշուառութիւնը, աղքատութիւնը եւ տառապանքը: Ասիկա նաև նշան մը՝ որ նոր իրապաշտութեան եռանդը այլեւս տկարացած կը թուի, եւ ընթերցող հասարակութիւնն ալ կարծես կը տացած է անկէ:

Ելիօ Վիքթորիանի (ծնած 1908-ին,)

լուսագոյն ներկայացուցիչներէն է նոր իրապաշտ դպրոցին: Խօսակցութիւն Սիկիլիոյ մէջ-ի հեղինակը, կը ճամբորդէ մեծ կողմին մէջ եւ կը փնտռէ իր եսը, ես մը՝ նուաստացած, պատկեցած դարերու հետ թաւալող թշուառութեան մէջ: Ասիկա իր ներաշխարհին հիւսնդագին պրպտումը չէ, այլ տիեզերական խղճին վեհագոյն տուեալներուն փնտառքը, զգացնելու համար այդ խղճին ճգմումը եւ նաև մօտակայ յարութիւնը: Գիրքը կը լողայ ջինջ ու տառապակոծ լոյսի մը մէջ, ուր կը շրջին խորհուրդներ որ կ'աւետեն յարութիւնը սկզբնական ինքնութեան. օգը, ճերմակ պանիրը, կարմիր բոցը, պողպատին փայլը եւ ժայթքող ջուրը, որ պիտի լուսայ աշխարհին մեղքերը եւ մարդուն տայ իր կարանցուցած արժանապատուութիւնը:

Վիթորիանի իրապաշտութիւնը քննարկողական է: Սիմպոլներէ գառ, հեղինակը կը դործածէ կրկնութիւններ, բառ մը որ յանկերդի մը պէս կը յաճախէ ընթերցողին միտքը, զեղչումը որ բառերը իրարու կը զարնէ, բացականչութիւններ, որոնք յաճախ անէճեր են, եւ այս բոլորը շրջապատուած երաժշտութեամբ մը որ վէպը կը դարձնէ տեսակ մը օփերա:

Այս հեղինակները յաճախ գործօն դեր կատարած են համայնավար կուսակցութեան շարքերուն մէջ, եւ մտուած կը թուին իրենց քրիստոնէութիւնը, եւ սակայն ատիկա ժխտելով հանդերձ, կարելի չէ որ անտեսեն զիրենք շրջապատող ժողովուրդին հաւատքը: Եթէ ֆարլօ Լէվիի, Մաքսիա վէպին մէջ կը կարդանք հետեւեալ տողերը, — «Այս մութ երկրին վրայ առանց մեղքի եւ առանց փրկութեան, ուր շարք բարոյական դէպք մը չէ, այլ երկրաւոր տառապանք մը, որ կը գտնուի նոյնիսկ անշունչ առարկաներու մէջ, ֆրիստոս երբեք ոտք չէ դրած» — Ասիկա պարզ անտարբերութիւն մը չէ կրօնքին հանդէպ, այլ տեսակ մը քնն, ինչպէս կը պատահի դաւկի մը, իր հօրը հանդէպ:

ՏԱՐԲԵՐԻ ԱՇԽԱՐՀՆԵՐ,
ՆՈՐ ՃԱՄԲԱՆԵՐ

Այ՛ն Հեղձուցիչ է հարաւի գրական
մթնոլորտը, բայց գիւղացին սա՛հն տեղ
չէ ներկայացուած իբր փտրիա մը, եւ
զորձաւոր դասակարգը միշտ չ'ապրիր
տեսակ մը տեսական ընթացացումի մէջ:

Վաստօ Փրաթալունի, (ծնած 1913ին),
համեստ ընտանիքի մը մէջ, կը նկատ-
աւորէ միջակ մարդկութիւնը, բոլոր
բանք որ կեանքին մէջ կը խաղան երկ-
րորդական եւ երրորդական դերեր: Փը-
լորանս քաղաքի դասական. թաղերը, ի-
րենց մանր դէպքերով, մանր զգացում-
ներով նիւթ հայթայթեցին իր դործե-
րուն՝ թողը, Աղխաւ սիրահարներու
պատմութիւնը, ճակատագիր: Այն արժէք,
ները զորս կը պաշտպանէ Փրաթալունի՝
ազնուութիւն, միասնականութիւն, բու-
րեկամութիւն՝ հիմերն են րուս ընկեր-
վարութեանս Հին. սերունդը, կ'անտեսէր
այս յատկութիւնները: Փրաթալունի եւ
քանի մը ուրիշ նորեր վեր կ'անեն զս-
ննքս կը նախընտրեն առողջութիւնը
հիւանդութեան, երջանկութիւնը անձ-
կութեան:

Փրաթալունի վերջին վէպերէն մէկը
Մէթիօ փորձումն է, ընկերվարութեան
պատմութիւնը ընել Փլորանսի որմնու-
ղբրի մը կեանքը պատմելով: Իրմէ, ա-
ռաջ էմիլ Զոլա Արգասաւարութիւն, եւ
Կորթի Մայրը վէպերով փորձեցին նոյն
բանը ընել, սակայն. անոնք իբր հերոս
ընտրած էին միջակէն վեր տիպարներ:
Մէթիօ որմնաղբր մըն, է տասը հազար
որմնաղբրներէն. ճիշդ է որ ան տարբեր,
է իր ընկերներէն, բայց ոչ ընտեթեամբ
անոնցմէ ոչ աւելի է եւ. ոչ ալ պակաս:
Աշխատասր դասակարգին, որ մինչեւ
հիմա ինքզինքը տեսած էր դիպագնեթ-
զութիւններու մէջ, Փրաթալունի կու. տայ,
աշխարհ մը որ իրենց աշխարհն է, հա-
սարակ, բայց իրաւ. ու. յարեանական:

Նոր, իրապաշտութենէն դուրս, Ի-
տալիա ստուած է նաեւ մեծ գործեր. եւ
մեծ հեղինակներ, Անոնք չեն կրած հա-
րաւի ճնշող ազդեցութիւնը որովհետեւ

կամ հիւսիսի հեղինակներ եղած են եւ
կամ կրած են օտար ազդեցութիւններ:
Տիւօ Պուզարի, (ծնած 1906-ին),
Ալպեան լեռներու ստորոտը, Նշանաւոր
շարժաւ 1940-ին իր Թարթառներու առ-
նախար. վէպով, Անտանաւն անապատի
մը եզերքին, սպաներ կը դիտեն անդա-
դար հորիզոնը բերդի մը պարիսպներէն,
եւ պատրաստեն պատերազմի մը որ երե-
րեք տեղի պիտի չունենայ, Ունի նաեւ
պարտուածներու հաւաքածոներ: Աար-
սափ Սէալայի մէջ եւ Պալլալերմայի ամ-
կումը: Ասոնք կը պատկանին ֆանժաւ-
թիք պրակտիկան, ուր սակայն արա-
մարանութիւնը չի պակսիր - հակաց չեն-
քեր որ կը փլին, որովհետեւ քար մը կը
պակսի կը շինուի լայն պողոտաներ
որոնք կը կարուին: անապատներու ա-
ւազին մէջ: Հոս կը զգացուին ազդեցու-
թիւնները Բաֆթայի, Փոյի, Հոֆմանի,
եւ Կոկոլի. Պուզարի՝ աշխարհը կը նը-
մանցնէ հակայ զօրանցի, ուր կ'արժա-
կուին անհատկաւ հրամաններ, մինչ
պատերը կը ճեղքուին:

Կին գրողներու մէջ առաջին տեղը
կը զբաւէ Ալլա սէ Զեպիետու որ իր
Դալունի տնտրակը վէպին մէջ կը խօսի
կնոջ մը մասին որուն համար կը ըստ
ամուսնութիւնը, աշխարհաբար մը շունի
եւ իմաստ պիտի չունենայ երբեք աջի-
կապը որ, ունի սրիչ անձի մը, հետ:

Էլլա Միքանթի որ ստուած է նոր,
հարուստ եւ ազնուական զիրք մը Իտա-
լական գրականութեան իր Արթուրի կըզ-
զիմ վէպով: Այդ կըզին կը կոչուի Փրո-
լիտա եւ կը գտնուի. Նափոլիի դիմաց:
Արթուր տանը հինգ տարեկան տղայ
մըն է որ կը մեծնայ կէս վայրենի իր
հերոսական երեւակայութեան աշխարհ
հին մէջ: Ան կը բնակի մոզական պալատ
մը, ծովուն եզերքը: Իր ընկերները կը
կոչուին Փառք: Հպարտութիւն եւ Ար-
համարհանք: Իր հօրը եւ իր խորթ մօրը
միջեւ կը սորվի հիացումը, սէրը, տա-
սապանքը եւ ատելութիւնը: Անձերը
փոխանակ ապրելու, իրենց ներքին կեան-
քով եւ զգացումներով իրատեսած են տի-

քով և զգացումներով խառնուած են տիեզերքի անցուղարձններուն . եղանակ ծովուն ձեւափոխութիւնները, արեւը, իրէկուններու զովութիւնը, շուքերը եւ լոյսը : Այս գիրքը կը յիշեցնէ Հոմերոսը, Սթանտալը եւ Սթիվէնսընը : Այս գիրքը աւելի է քան հասարակ վէպ մը . բնութեան գիրքն է, գեղեցկութեան գիրքը : Ոչ մէկ սիմպոլ կայ անոր մէջ, եւ ոչ ալ դիւրին եւ հինցած վիզապարտական զեղումներ :

Իթալիո Քալվինօ, (ծնած 1923-ին,) նոր իրապաշտութիւնը կը քօղէ իր առաջ արեւակապութեամբ : Իր տառիկն զործերը, որոնց նիւթը-առնուած է պատերազմէն և ևս ապագային դիմադրութեանէն, կը կրեն արդիցութիւնը Փալմէզէի եւ Վիթթորիէի միայն զատ շուտ զոտու իր ինքնատպութիւնը : Գրեց թեթեւ և սրտմտտածով, օ վոյթիտական պատմութեան ճիշտութիւնը : Քալվինօն, թառած Պարսնը եւ Անգլո ասպետը : Աւելի մտքի մարդ է՝ քան սրտի, աւելի ծիծաղի՝ քան լացի : Կը տեսնէ աշխարհի թերութիւնները, մտքով օտարապանքը արայց շնորհուր :

Քարլօ Քասարա, կը պաշտպանէ հեղինակին անկողմնակալութիւնը : Նկարագրենք մարդը, մանրամասնօրէն, ապրեցնենք, ընթերցողին տաքերուն առջեւ, եւ զսահմանը ասով : Քասարայի ամէնէն նշանակալից վէպը կը կոչուի Փայտահատները անտառին մէջ, որ ատարկայանքն պատմութիւն մըն է : Սիրտ մը զործաւորներ պիտի անցնեն ամիսներ ատենի մը մէջ, անտառի մը ծառերը կը տրելու համար իրենց պետին ցուցմունքներուն համաձայն : Ոչ մէկ գէպը կը պատահէ, ոչ մէկ խօսք սանտնց ներքին զգացումներուն մասին : Կ'արթննան ատեն, կը ստանան գուռը, կը նային եր-

կնքին, եւ ծառերը կը կտրեն շարք շարք, կանգ կ'առնեն երբ կ'անձրեւէ : Իսկ իր գլուխը դարձոցը կը կոչուի Պապի-Յըա-նաձը որ սիրային մեծ վէպ մըն է, նկարագրուած հեռուէն, կիրքով լեցուն վէպ մը՝ առանց կերքի պատմուած :

Փիէր Փալօ Փագոլինի, իր սերունդին սարսփն է : Ամէն բան փորձած է . եղած է համայնավար եւ սեռած է անոր անկումը : Եւ դրած է վէպ մը այդ նիւթին վրայ . կրանայի մոխիրները : Ապրած է Հռոմի յատակները եւ անկէ բերած է զայն կեղեցուցիչ գիրք մը՝ Մանչերը անունով, եւ վայրագ կեանքը : Նոր իրապաշտութիւնը իրեն համար եղած է լեզուական հարց մը : Ուսած է Թոքանի բարբառին մէջ, որ Իտալիոյ պաշտօնական լեզուն է, ներմուծել ոճեր եւ բառեր, առնուած դասարարարտանքին : Այս փորձը նոր չէ, սակայն ինչ որ ուրիշներուն մօտ ձեւի հարց է, Փալօ զօլինոյի համար կենսական է : Տեսակ մը զինովութիւն՝ ապրելու նախնական կեանք մը :

Այսպէսով կարելի է ընդհանուր պատմութիւն մը ունենալ երիտասարդ իտալական գրականութեան ապագային մասին . անոր յատկութիւններուն եւ թերութիւններուն մասին : Իտալական գրականութիւնը մայրաքաղաք չունի եւ չի փորձուիր բացասական արկածախնդրութիւններու մէջ նետուիլ, այլ միշտ կ'օգտագործէ իրականութիւնը, կեանքէն անհէլ իր նիւթերը . սակայն գաւառական շէշտը որ իւրաքանչիւր հեղինակ կ'օւզէ դրոշմել իր դործին, զայն կը կտրէ . եւրոպական գրականութեան մեծ հասանքներէն :

Ն. ՉԱՐԿՈՒՅԵԱՆ

Բ. ՆՈՒՐԻԿԵԱՆ

Հ Ա Մ Ա Ս Տ Ե Ղ Ի Հ Ե Տ

(ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ)

«Բագին» իր Թ. տարին սկսաւ Համաստեղիմ ճուր-
բելով բացառիկ բիւ մը. ամօք գրական գործունէութեամ
յիստօմեակին եւ ծննդեան 70-ամեակին առիթով:

Այդ բացառիկին մէջ, խմբագրութիւնս յայտնած էր.
թէ 1906-ը իրեն համար Համաստեղի տարի է եւ ամագի-
ւոր արձագանգ պիտի հանդիսանայ յօրինարին նախնաւոր
հանցիտութիւններուն եւ առանձին գրութիւններուն:

Ստարեւ կաւ տանք Մոսկոյ աշխարհի ուրիշ մէկ
գիւշագիրին՝ Բնիմամին Նուրիկեանի վկայութիւնը, Հա-
մաստեղի անձին ու գրականութեան մասին:

Հ Ա Ն Ո Ւ Պ Ո Ւ Մ Ն Ե Ր

Թշկատինցիի դպրոցի աշակերտու-
թեան օրերուն էր, 1912-ին, Եղանակը՝
գարուն: Շարաթ առտու մը՝ մեր դա-
սընկերներէն Վարդաթիլցի Մինասը -
կարմիր-գլուխ եւ շատ համակրելի պա-
տանի մը - ըսաւ մեզի:

- Տղա՛ք, եկէք այս կէտօրէն հոգե
մեր դիւղն երթանք միասին: Մեր տան
հիւր կ'ըլլաք օր մը, յետոյ մէկտեղ կը
վերադառնանք:

Ձորո-հինդ հոգի ընդունեցինք Մի-
նասին հրաւէրը եւ ճամբայ ելանք շու-
տով: Երեք ժամէն հասած էինք Վար-
դաթիլ, ուրկէ կ'երեւէր Պոլսուն՝ Թըլ-
կատինցիի ծնած տեղը, շրջապատուած
կանաչ-կանաչ պարտէզներով, զիչ մը
անդին ալ՝ Փերչէնճ գիւղը, նոյնպէս
կանանչ-կանանչներու մէջ թաղուած:
Գիւղ մը, որ ո՞վ կրնար գուշակել թէ օր
մը, դալիք տարիններուն՝ մեր դաւառա-
կան դրականութեան մէջ իր յատուկ
տեղը պիտի գրաւէր - Թշկատինցիի քով,

իբր իսկ տաղանդաւոր զաւակներէն մէ-
կուն՝ Համաստեղին շնորհիւ:

Մինասնեց տունն ենք հիմա: Մինաս
մեզի կը ծանօթացնէ իր շատուօր տան
բոլոր անդամները, մեծով պզտիկով, եւ
ամէնէն յետոյ՝ անպէտ պատանի մը,
զիչ մը ամչկոտ եւ լուրջ երես յթով ու
խոշոր, արթուն աչքերով:

- Այս երիտասարդն ալ, կ'ըսէ Մի-
նաս, յարգանքի շեշտ մը տալով իր
ձայնին, պարօն Համբարձումն է, մեր
դիւղի դպրոցին վարժապետը:

Շատ չանցած՝ Մինասին եւ պ.
Համբարձումին հետ գեղը պտոյտի կ'ել-
լենք խումբով: Կ'ըսենք, կը կատակենք
բոլորս ալ, բացի պ. Համբարձումէն,
որ մտիկ կ'ընէ անձայն, - նորահաս
վարժապետի մը ծանր լըջութեամբ:

Յաջորդ օրը քաղաքն ենք, դպրոցը
նորէն:

Ճ.

Նիւ Ենրք, 1926: Լման տասնըչորս
տարի անցիւր է: Կ'աշխատիմ Հայ Կրթա-

կան Հիմնարկութեան եւ «Կոչնակ» շաբաթաթերթի միացեալ յարկին տակ: Դեռ նոր աւարտած եմ հաւաքումը վարպետին՝ թշուառներին ամբողջական գործերուն, զորս տպարան յանձնելէ առաջ պէտք կը զգամ մեր գաւառի կարգ մը բառերէն եւ ասացուածքներէն հասկցող մէկու մը, որ ինծի հետ աչքէ անցընէ բացատրական բառարան մը, զոր պատրաստած եմ:

— Հող մի՛ ընեք, Բենիամին, կ'ըսէ պ. Յովհ. Աւագեանը, «Կոչնակ»ի գրական խմբագիրը՝ իրեն յատուկ մտերմական շեշտով մը: Այսօր իսկ կը գրեմ Համաստեղին, որ երբ Նիւ-Եորք դայ, հոս ալ հանդիպի անպատճառ եւ քեզի հետ անգամ մը աչքէ անցընէ բառարանը:

Համաստեղին անունն ու պատմուածքները ծանօթ էին ինծի, նոր կարգացած էի իր «Գիւղը» եւ գիտէի թէ Փերլինճցի էր հեղինակը:

Շարաթ մը չանցած՝ պ. Աւագեանին հետ՝ խմբագրատան գոնէն ներս կը մտնէ երիտասարդ մը, որ լուրջ է դէմքով եւ համակերպի:

— Ահա՛, քեզի պ. Համաստեղը, — կ'ըսէ Աւագեան:

Կը ծանօթանանք: Վայրկեանը չ'անցներ:

— Ես քեզ երկրէն կը յիշեմ, Բենիամին, — կ'ըսէ Համաստեղ, ժպիտով մը, որ դէմքին լրջութիւնը կը փարատէ յանկարծ: Ձեռն յիշեք զիս, Վարդաթիլէն, Մինասենց գեղին վարժապետը՝ պ. Համարձուսն եմ:

Մեծ կ'ըլլայ զարմանքս եւ անչափելի՛ ուրախութիւնս: Գեղին երբեմնի լուռ եւ հանդարտ դէմքով Համարձուսն վարժապետը ինքը՝ Համաստեղն է հիմա, եւ «Գիւղը» հատորին ալ հեղինակը, այն ատեն, 1926-ին: Անկուշտ հաճոյքով մըն էր որ կարգացած էի «Գիւղը», ու գիտէի թէ իր գրական առջիններէն էր, եւ կը զգայի թէ վերջինն ալ պիտի չըլլար անկասկած:

Քառասուն տարի անցաւ: Ուզտերս կարաւանի մը պէս դանդաղ եւ ծանր,

ծանր եւ անձայն քայլերով, ատենօք Հայկական Խորհրդի գացող կարաւանի մը պէս, որ օճառով ու շաքարով բեռացուած՝ քաղաք կ'երթար մեր դիւղին դերեզմաններին քովէն, բոժոժներու մետաղեայ ձայներ փչրելով ու ցանելով իր ետեւէն, լեռն ի վեր մազլցող ճամբուն երկայնքին:

Եւ այս քառասուն տարուան ընթացքին Համաստեղի գրական վաստակը աւելի շէնցաւ նոր հատորներով, աւելի՛ հասուն եւ կշռաւոր:

1928-ը եղաւ 1965: Օր մըն ալ, դեռ վերջերս, մեր թերթերը գրեցին թէ Համաստեղը 70 տարեկան է հիմա, եւ այդ առիթը արժանի է հաւաքական յարգանքի եւ գնահատութեան, թէ՛ իր անձով եւ թէ՛ իր գրական ճոխ վաստակով: Կոչը խօսեցաւ իմ ալ դեղաքիլ սրտիս:

Եւ արձագանքը այս սրտարուի սողերուն մէջ ծրարուած է:

ԻՐ ՎԱՍՏԱԿԸ

Համաստեղի զործը նորէն եւ աւելի մտերմօրէն ճանչնալու համար՝ վերջերս ամբողջ երկու շաբաթ անցուցի իր գրական հունձքին հետ: Մասնաւորապէս իր պատմուածքներուն հետ, որոնք կ'ընդգրկեն քառասունըհինգ տարիներու իր արժէքաւոր, եւ պէտք էր ըսէի՝ անդի՛ն վաստակը, որ մէկտեղուած է երեք հատորներու մէջ — «Գիւղը», «Անձրեւ» եւ «Գեղը Նազար եւ 13 Պատմը-լածներ» անուններով:

Իր այս գործերուն ընթերցումը ըրի, տունիս մէկ անկիւնը, անձայն, երբեմն միայն ոտանաւորներ կարգալով բարձրաձայն, անոնցմէ ծորող երաժշտութիւնը վայելելու համար:

Այսպէս, գրեթէ միշտ ալ լուռ էի ընթերցումի պահերուս: Եւ զգացի թէ այս անգամ — աւելի քան՝ կէս դարու շրջանէ մը ետք, — Համաստեղ ինքն էր որ կը խօսէր, երբեմն ալ կը կատակէր իր դիւքերուն, իր պատմուածքներուն

աննման լիզուովը եւ ոճովը, միջոց հասկառակը՝ տարիներ առաջուան մեր հանդիպումին, երբ ես կը խօսէի, կը կատակէի միւս ընկերներու հետ, մինչ ինքը՝ պ. Համբարձումը, կը քաղէր մեզի հետ անձայն եւ անշուշտ, ո՛վ գիտէ ի՞նչ անցնելով իր գեղացիի պատանեկան միտքէն:

Համաստեղի պատմուածքն՝ բը,

Ասոնցմէ շատերը, - «Գիւղն» ու «Ամձրու»ը, առաջին անգամ կարդացած էի ծառայողական երեսուն տարի առաջ: Շատերն ալ միտքս էին: Եւ այս անգամ չորսմասայ, երբ նկատեցի որ տարիները չէին կրցած թանգի բիծ մ'անգամ փակցնել անոնց երեսին: Փամանակը իր փորձաքարը զարկած էր նորէն, եւ նորէն վաւերացուցած՝ թէ Համաստեղի արուեստը անողարտ եւ կենդանի պահած էր իր շնորհքը, իր ուժը եւ մանաւանդ իր հարազատութիւնը:

Իր պատմուածքներուն մէջ ինքն իսկ կ'ըսէ, կը շնչտէ թէ.

«Իմ սիրտն ալ, իմ բարի Անտոնիոս, բախտաւոր սիրահարներու պէս, շէն է իմ գիւղով»:

Եւ դաւառել այս արուեստագէտ գաւաղը՝ այդ շէնութիւնը, այդ ճոխութիւնն է որ կը ճմլէ, կը քամէ իր գեղացիի սիրտէն, հին, թանկագին գինիի պէս եւ կաթիլ-կաթիլ, - դուք հասկցէք բա՛ն առ բա՛ն - կը բաշխէ Մփուտքի մեր զբաղանութեան, հոս, Ամերիկայի մէջ, ուր մեր գիրքը նահանջի եւ վերջալուստի շրջան մը կ'անցընէ հիմա, հողի եւ մթնոլորտի տհաւոր պակասէն:

Հոս կ'արժէ անհարկներու շարք մը նետել Համաստեղի պատմուածքներուն եւ վիզակներուն վրայ:

Ահա՛ «Տափան Մարգար»ը, «Գիւղ»ը, «Տափան տիպարը, որ մեզի կը ներկայացուի նկարագրական ուժեղ եւ խորու գիծերով եւ գեղէն առուած գոյներով: Դաշտային շարքալ աշխատանքի նուիրուած գեղացի մը, - լծվարի պահու մը կ'իյնայ կայծակնահար, իր

վիթխարի գոմէշներու գոյգին հետ: Տեսարանը սարսափելի է եւ անձուանալի.

«Երկնքի վրայ ամպի կտորները շատցան եւ իրարու մօտ հեկայ փիղերու երամակ մը կազմեցին: Ամպերը մուրմնով գարնաւած պղինձի պէս հնչեցին: Յետոյ ցանաւեցան ջատ խոշոր անձրեւի մի քանի կաթիլներ: Դաշտի բանուորներէն ջատեր սուս շտայեցին: Թըրքուրները ճամբաներում վրայ, արդեր հողերն դուրս ելան: Յամկարծակի սկսաւ տարսի մը, յորդ ու միանաւոր՝ Ամպերը կը դրդային, կայծակը շղթի պէս սուր, երկնքի կտորէք կը պատռէր, դաշտերում մէջ շփոթ, իրարամոտ մը կար: Դաշտի անկեզու կենդանիները հոս-հոն կը վազվզէին օտար եւ ազալուր բառայներով... Թթեմներու ճամբան վրայ Տափան Մարգար կայծակէն գարնաւած էր... Գոմէշները, գոյգ քարայրներու մութ լերաններու ման սհաւոր, ինկած էին անկեղծացան»:

Այս հատուածը ինքնին սամրոզը հովուերգութիւն մը կ'արժէ, տարբերային պայթուցիկ յաղաճով մը հիւստած տուած մը, որ չի՛ մոռցուիր:

Գիւղի որբ բայց չարահաստ տղու մը պատմութիւնն է «Միջոն»: Տղացական սիրոյ մը նկարագրութիւնն է սա հատուածը, որուն նմանը հազուադիւրս է մեր թրականութեան մէջ.

«Միջո, Լուսիկին մէջ տեսաւ դաշտն ամբողջ, իր արշալոյսով ու վերջալոյսով: Անոր մէջ գտաւ մաս մը ազաւնիւն, մաս մը ազուկեւն, մաս մը նապատակեւն, մաս մը կոպեւն, ու մաս ալ երկնքէն: Հարթու մը աչքերուն գեղեցկութիւնը ունէին անոր աչքերը, ար իջած էին խաղաղութիւնն ու անհանգրստութիւնը դաշտերում: Անոր ձայնը անլի ճեճոյ էր, քան թէ քիւրումն ձայները վայրի ազանեակներու, երբ հովսիմ մէջէն կ'անցնէին ու Ս. Սարգսի լեռան գոթ ու լերկ ապառաճներուն վրայ կը թռտէին: Անոր յոճկերը անլի սեւ էին քան ձիւնի վրայ ինկած ագ-

աւսի մը փետարները: Անոր էնթերին մաշխուն էր իրենց կովին կանակին պէս: Միջո իր մէջ անծանօթ բան մը կը զգար ամէն անգամ երբ պարկէն փաթաթէս մը կը հանէր եւ իր ձեռքերը պարկին մէջ Լուսինին ձեռքերուն կը դաշէին...: Միջո անհանդարտ էր ինչպէս հոգի տակի ցորենի հունւը, երբ արեւ կը տեսնէ:

Լուսին Միջոյի արեւն էր:

Մարդիկ, կենդանիները եւ բնութիւնը գիտելու եւ անոնցմով յափշտակուելու եւ տղաւորուելու շնորհքը, Համաստեղի մէջ, շատ լայն է եւ խորունկ: Այս գեղացի գրագէտը՝ զբաղէս ըլլալէ առաջ եւ աւելի՛ մարդ է. եւ տեսիլքն ունի փողոցի շան մը՝ Չնուրոյին աչքերովը գիտելու գիւղին բաները, մարդերը եւ բնութիւնը. «Սայլերը, որ ծայլ աւ խորունկ կը բնանան, չեն արքննար, մինչեւ որ մարդիկ չգան, չընդունին, ախանջներ չանցնեն, եզները չընեն...»: Եւ «Արդեօք ժամկտիցին երամանակը չէ՞ր որ լուսնկան գիշերները գմբէթէն չէր հեռանար: Ժամնաչը եթէ ուզէ, Ասյիսկ մտավախա կիւրքի բոլոր միւսերը վար կ'առնէ ու շունեքուն կը բաշխէ: Ժամկտիցին գորտիւնը մեծ էր Չայլոյին համար»:

Իսկ «Լուսնիները» վիպակ մըն է, պատմութեան քննադատական հորիզոնով եւ խորքով, ուր հեղինակը կ'իջնէ միջին շրջանի մարդոց հոգիներուն: Հոն է որ կը գտնէ այն հինգստ, բայց գեռ կենդանի նախապաշարուած, որ կը հաւատայ, թէ աղուընիկ խաղցնել անէ՞ծ է. մտուածիւն մը որ կը մղէ աղուընիկ խաղցնող Մանոն՝ գողութիւն ընելու եւ նոյնիսկ սո՞րբ դարձելու եւ պատճառ դառնալու հողագործի մեծ տան մը ընտանիքի քայքայումին:

Այս վիպակը ողբերգութիւն մըն է, ուր այդ բարի եւ միամիտ թռչունը — որ սրբութեան մը խորհրդանիշը հղած է մեք ժամուն մէջ — իր բաժինը ունի: Ի՛նչ մը զոր կը կատարէ վերը, երկին-

քին կապուտիկ դրացնութեանը մէջ, թռիչքի կախարական խաղիւր սարքերով եւ սիրային փախուստներ հնարաւորելով: Եւ այդպէս գինովցնելով, խելքէ հանելով աղանձիներուն տէրերը, որոնք վարը, տանիքին վրայ կանգնած են, աչքերինն յառած երկինքի անասման բեմին...:

«Անձրի» վերնագրով հատորին — որ Համաստեղի պատմութեան քննարկութեան է — բոլոր կտորներն ալ կենսաբան լեզուն են եւ գեղեցիկ: Առաջինը՝ որմէ առնուած է գիրքին անունը, կը ներկայացնէ ամբողջ գիւղին համայնապատկերը. բնութիւնը իր կուսական հմայքով, դաշտը՝ իր անգիմազբելի ճրարարով, որ գեղացին իրեն կը քաշէ եւ կը կապէ տունով, առաւտրով, մարդոց հակասանքին եւ կոնսկիներէն քրտինք կը քսով, գոմէշներէն եւ եղներէն ալ՝ ծանր, ծանր լուծ կը պահանջէ. եւ կը ստանայ, որպէսզի տառա հասցով, թացանով վարձատրէ մարդերը եւ եմով՝ — կերով — չձկան անասունները:

Բնութիւնն ալ, իր կարգին՝ հողին ծոցէն վազող շուրթերու տառաութեամբ ու, մանաւանդ գարունը՝ անձրեւով կը հասնի գեղացիին օգնութեան: Այս վաճակն անոր գլխուն, եթէ ցորենները դեռ չհասած՝ անձրեւները ուշանային: Վախը կը նստէր գեղացիին սրտին վրայ: Երաշտը կը սպառնար անոր հացը խլել ընդհան, եւ պարտատէ՛րն ալ իր առնելիքը կու գար պահանջել:

Հսկում, աղոթք, տէրտէր ու «Տէր աղարմեա՛»: Աւ. վերջապէս՝ բնութիւնը վերջ կու տար իր վտանգաւոր ծառտութեանը: Արեւը մուծ ամպերու ետին կը կորսուէր յանկարծ: Որտաւա՞ եւ կայծակ: Եւ ահա անձրեւը, որ կը տեղարհա՛ կը տեղար: Գեղը խորունկ շունչ մը կը քաշէր: Պարտատէ՛րն ալ կը խեղճեար յանկարծ:

«Համբար» վերնագրով կտորն ալ վիպակ մըն է, որ յուզիչ է այնքան որ Աւր գիւղացին, ահագին չլիմադրութեան հետք, վաղ կ'անցնի այն հինգստ համո-

զումէն՝ թէ երիտասարդի մը՝ Մուրա-
տին համար՝ իր նշանածը համբուրիլը
ծանր մեղք է եղեր...:

«Զբոյց Եսմի մը հետ» կտորով
Համաստեղ տեսակ մը վերաքաղը կ'ընէ
իր հայրենի գեղի կեանքին, եւ յետոյ
վերադարձ մը, մտքով անշուշտ, անոր
աւերակներուն: Ու կ'երազէ վերածնուն-
դը երբեմնի իր շէն դեղին...:

«Քաջն Նագար եւ 13 Պատմուածք-
ները», Համաստեղի նորագոյն հաւաքա-
ծան է, ուր մէկտեղուած են գիւղական
կտորներէն վերջինները, ինչպէս նաեւ
ամերիկահայ եւ ամերիկեան միջավայրէ
թեւազրուած կտորներ, ինչպէս նաեւ
երաժշտական առամա մը՝ «Հայաստանի
Լեռներուն Սրնգահարը»:

Այս վերջինը, որուն գետինը Ամե-
րիկան է եւ գործող անձերը ամերիկա-
հայ՝ յայտնապէս հիւսուած է «Նրանոս
Ազար» պատմուածքին մէջ զետեղուած
Զուպան Ասատուրի եւ Քիւրա աղջկան մը՝
Ասլիին սիրային հեքիաթէն: Զուպան Աս-
տուրը իր սրինգին - զաւալին - հմայքովն
է որ իրեն կապած է Ասլին: Իսկ առա-
մային մէջ՝ սրնգահարը անծանօթ մէկն
է, Վարդան անունով, որ Մէյնի լեռնե-
րուն մէջ կը թափառի եւ իր սրինգովը
կը հմայէ ամերիկահայ աղջիկ մը՝ Սա-
թուն: Հոս կ'արժէ դոնէ Լրկու ասուն տալ
Վարդանի եւ Սաթոյի երգէն...:

Վ Ա Ր Գ Ի Ա Ն .-

Սիրտս է նման մեր հայրենի լեռներուն,
Գէլու բերան, բաւ ու բորան լեռներուն
Ուր կայ կռիւ եղնիկներու, գայլերու,
Մեր հայրենի, մեր վայրենի լեռներուն:

Ս Ա Թ Թ Թ .-

Մեր հայրենի լեռները ես կը սիրեմ,
Բուժ ու բորան սարերը ես կը սիրեմ,
Քաջ եղնիկի կռիւը ես կը սիրեմ,
Մեր հայրենի, մեր վայրենի լեռներուն:

Համաստեղի ոճը ունի բնական հը-
մայք մը, տրամութեամբ եւ երգիծան-
քով շքեղցած, որ իր պանդուխտի սրտէն
կը բխի եւ սիրտը լեցուն է գիւղով: Իր
ոճը ունի նաեւ բանաստեղծական կըրոյթ
մը եւ թափ մը: Իր նախադասութիւն-
ները երբեք չեն լճանար, այլ կ'ընթա-
նան յստակ հունի մը մէջէն, երբեմն ա-
րագ վազքով մը, երբեմն ալ հանդարտ,
հանդիստ գնացքով մը:

Համաստեղի նիւթերը, իրենց գեղը-
կական տարազով՝ հողին ու բնութեան
հետ շաղուած, նոյնացած մարդն է որ
կ'ապրեցնեն, կը վերստեղծեն: Իր գրա-
կանութեան մէջ տիրող շունչը մարդկա-
յի՛ն է եւ անկեղծ: Եւ Համաստեղ կը
պատկանի մեր զաւառական գրականու-
թեան այն գլխաւոր դպրոցին, որուն
հիմնադիրն եղած է Թլկատիցին, իր
մեծ աշակերտին՝ Ռուբէն Զարգարեանի
հետ: Եւ այդ գրականութեան արմատ-
ները կապուած են, եւ խորապէս՝ մեր
ժողովուրդի սրտին եւ հոգիին:

Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

Իրբեւ վերջաբան՝ հարցում մը եւ
անոր պատասխանը միայն:

- Ինչո՞ւ մենք՝ զաւառական գրա-
կանութեան պանդուխտ մշակներս մեր
նիւթերը քաղած ենք առաւելապէս մեր
ծնած տեղերէն, մեր զաւառէն, որ Մո-
փաց Աշխարհ կը կոչուէր ատենօք:

Պատասխանը.- Մենք մեր կեանքին
ամէնէն թարմ եւ առոյգ լըջանը - ման-
կութիւն ու պատանութիւն - ապրած
ենք մեր ծննդավայրին մէջ, անոր հողը,
լուրը, մթնոլորտը մաս կը կազմեն մեր
ծուծին եւ մեր արիւնին, մեր սրտին եւ
մեր հոգիին: Կարճ բառով՝ մեր արմա-
տին: Բնական է որ, իրբեւ պանդուխտ,
օտար հողի վրայ օռք դնելէ անմիջապէս
յետոյ, զգայինք եւ ապրէինք կարօտը
հայրենի տան, զիւղին եւ հողին, կա-
րօտ մը՝ որ կու գար յանկարծ բոյն դնել,
լեցնել ու տաքցնել մեր պանդուխտ
սրտերը:

Ո՞վ չի գիտեր թէ զգացումներուն ամէնէն խորունկը եւ ամէնէն ուժեղն է կարօտը, որուն կորիզը տարատունկ սէրն է հայրենի տան ու երկրին:

Ատեն մը, կարճ ատեն մը միայն, յուսացինք թէ օր մը՝ թերեւս, պիտի կրնայինք տուն դառնալ նորէն:

Բայց երբ պատերազմը եկաւ յանկարծ եւ իր կրակէ լեզուներով՝ մեր Հայրենի տուներուն հետ՝ այրեց, մոխիր դարձուց վերադարձի մեր յոյսերն ու երազները, զրացինք թէ այլեւս կարուած ենք մեր մայր արմատին: Արցունքը ճգմեցինք մեր աչքերուն մէջ, սեղմեցինք մեր սկզբները, եւ մեր պատանկան պանդուխտ հոգիներուն ապաւնը փընտեցինք ու գտանք մեր սրտերուն խորը, ուր կարօտը, զրկանքի ահաւոր ծանրութեան մը տակ՝ խտացած, բիւրեղացած էր աղամանդի պէս, եւ ուժի փոխուած: Եւ այդ պայթուցիկ ու տեւական ուժով է, որ մեր իսկ սրտերէն ամբողջ քառասուն տարի, քամեցինք մթնալորտը եւ հնարաւորեցինք հողը, բունծ առ բունծ, եւ ստեղծեցինք դաւառի գրականութեան ածուն՝ այս օտար գետիններուն վրայ: Աձո՛ւ մը, ուր պիտի ծաղկէր եւ պտղաւորէր ամերիկահայ գաւառական գրականութիւնը, ամբողջ 30-40 տարի:

Եւ այս պանդուխտ գրականութեան վառատակը, բնականաբար, պիտի բազմանար պատանկան թարմ ապաւորութիւններէ եւ ապրուած փորձառութիւններէ, զորս մեր հետ բերած էինք երկրէն եւ որուն հունտերը սկսած էին պայթիլ եւ աճիլ, նոյնիսկ օտար երկրնա-

քի մը տակ: Արդիւնքը պիտի ըլլար՝ անցեալէն փրկուած գրական հունձք մը, դաւառի հողին եւ արեւին ջուրմո՛ւնքը վրան: Հունձք մը, որուն ամէնէն վաւերական վկայութիւններէն են, անտարակո՛ւս, Համաստեղի գործերը:

Երկար տարիներէ ի վեր, սակայն, բնական հատնումով մը, սպառած են գաւառի նիւթերը: Սրտերը թեթեւցած, գրեթէ պարպուած են իրենց հին կարօտներէն, եւ մեր աչքերն ու միտքերը սեւեռուած են, բնականաբար, մեր դադութի կեանքին վրայ, որ ցաւապէս այլ լափոխութիւն մը կ'ապրէ, բնական այլ լափոխութիւն մը կ'ազմի՝ եւ բնո՛յթի:

Հոս՝ մեր անմահ լեզուն կ'այլափոխուի մեր լրբներուն վրայ, մեր թերթերուն ու զիրքերուն մէջ: Եւ մեր տուներէն դո՛ւրս կը նետուի կամ կը փախի սարսափահար, ամէն անգամ որ հիները կ'երթան «հանդիլի» օտար հողի տակ: Իսկ նորերը - մեղքը իրենցը չէ անշուշտ - հայ կը մնան անունով միայն, եւ ժամանակաւորապէս, հիներուն սիրոյն կամ յիշատակին համար:

Եւ մեր դաւառի գրականութեան ամերիկահայ գրիչներուն կը մնայ, իրենց մահէն առաջ, արուեստի նոր գործերով արձանադրել եւ ապրեցնել վերջալոյսի ողբերգական տարիները այս մեծ դադութին: Համաստեղ եւ իր խարբերուցի զրչեղբայրները, ինչպէս նաեւ ամերիկահայ ուրիշ գրողներ՝ այս պարտքն ալ կրնան շարկել, եւ պէտք է որ շարկեն՝ քանի գեռ ուշ չէ:

Բ. ՆՈՒՐԻԿԵԱՆ



ՄԻՒՍԼԻՄ ՏԱՐԲԵՐՈՒՆ ԴԺԳՈՀՈՒԹԻՒՆԸ

Ե Ի

ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՆՈՐ ՀՈՍԱՆՔՆԵՐՈՒ ԾԱԳՈՒՄԸ

Բայց խալիֆայական թուրքիոյ տիրապետութենէն զժգուհ տարրերը զբխտունեաները չէին միայն: Դժգուհ էին նաեւ ոչ-թուրք միւսլիմ զանգուածները, սրտեց զլիսաւորներն էին զբարեբերը եւ արարները (մնացած ոչ-թուրք միւսլիմ տարրերը զանցառելի փոքրամասնութիւններ էին): Ասոնք իրենց ծագումով, լեզուով, բարբէրով ու պատմութեամբ միւսլիմ ընդհանրութեան մէջ իրենց առանձնայատուկ ինքնութիւնը ունեցող ժողովուրդներ էին եւ չէին կրնար խառնուիլ թուրքին հետ, որուն անհարազատ իշխանութիւնն ալ հարկաւ խորթ էր իրենց համար: Բայց կար, մանաւանդ, զժգուհութեան աւելի անմիջական ու շօշափելի պատճառը: Հակառակ շէրիաթով իրենց տրուած արտօնեալ դիրքին՝ փաստորէն այս ժողովուրդները եւս կը կրէին վարչական ախտաւոր դրութեան մը հետեւանքները, մանաւանդ պաշտօնէութեան առօրեայ շահատակութիւնները: Մեծազոյն մասամբ ցեղային համախմբումներով ապրող այս ժողովուրդները հոս ու հոն ըմբոստ վրեժակի մէջ էին յաճախ՝ խուսափելով հարկային եւ զինուորական պարտաւորութիւններէ: Քիւրտերուն զժգուհութիւնը դեռ 19-րդ դարու կէսերուն աւելի գործնական արտայայտութիւն ստացաւ բաւական ծաւալուն գինեալ ապստամբութիւններով:

Բայց առանձին ցեղային բաժանումներով ապրող այս ժողովուրդը հետոս էր տակաւին համաբարտական առաջադրութիւններու շուրջ մնայուն կերպով համախմբուելու: Հոգեբանական պատրաստութենէն. իսկ պատահական ապստամբութիւնները երկար չէին կըրնար սխմանալ թուրքին պետական ուժին եւ միջնորդներուն առջեւ: Մնաց որ թուրք կառավարութիւնը, մանաւանդ Համիդեան շրջանին, մէկ թարով երկու թռչուն զարնելու թաղաքականութեամբ մը, պիտի գիտնար սիրաշահիլ զբարո ցեղերը՝ անոնց աւազակային հակումները բաւարարելով ի հաշիւ հայ ժողովուրդին (*):

*) Աւելի ծաւալ եւ յրդարեմ ունէին 1925-30-ի քրտական ապստամբութիւնները, որոնց աւելի յաջող ընթացք մը տալու համար՝ քիւրտ զեկավարները գիտեցին հայ յեղափոխական տարրերու գործակցութեանը: Կարելի օժանդակութիւնը չզլացուեցաւ անշուշտ՝ սակայն քիւրտերը ուշ մնացած էին անդրազանաւայու համար թուրքին դէմ հայեւիքար գործակցութեան անհրաժեշտութեանը: Ուշ մնացած էին անդրազանաւայու համար հայ ժողովուրդին վերաբերմամբ իրենց տխուր դիրքին: Իրենց քամկազիմ աշակիցը ըլլալու կոչուած բրգահայ զանգուածը գոյութիւն չունէր այլեւս, երբ թուրքին հարուածը, ըստ կարգի, իրենց գարած էր արդէն:

Աւելի ծաւար ու թափ ունէր արաբ ազատագրական շարժումը: Ինչպէս յարոնի է, իրենց կեդրոնացեալ խալիֆայութիւններու քայքայումէն վերջ տարաները դարձեալ վերածուած էին մեծ աւարտիկ աշխրեթական ուրոյն միութիւններու: Մակայն շատ աւելի զորաւոր էր արաբ ցեղերու հակաթուրք արամադրութիւնը: Այդ ցեղերէն շատեր ինտուրթին կէս անկախ կեանք մը կ'ապրէին Միջագետքի կամ արաբական թերակղզիի զանազան մասերուն մէջ: Մակայն թրքական ճշմունքներուն դէմ ապրատաժական շարժումները յաճախօքէն եղան մասնաւորաբար համիտեան դէմակարգութեան շրջանին: Այդ ապրատաժութիւնները տեղի կ'ունենային արաբական տարբեր շրջաններու, բայց մանաւանդ՝ Եմէնի մէջ, ուր ազատագրական շարժումը շատ աւելի բուռն էր ու հետևողական եւ որ թուրք բազմահազար զինուորներու գերեզմանը դարձաւ: Ապատաժական այս շարժումներուն յարոնի կամ գաղտնի կերպով լայն մասնակցութիւն ունէր արաբ մասաւորական զինամարտիւնը:

Արաբ ազատագրական շարժումը շարունակուեցաւ նաեւ առաջին համաշխարհային պատերազմի ընթացքին, որուն մասնակցեցան բազմաթիւ ցեղային միութիւններ, զանազան բանակներու կողքին, կրակ թափելու համար իռալիֆայի միւս լիւս քաճակի վրայ: Արաբական դատը ի վերջոյ պիտի յանգէր իր արդար լուծումին՝ արաբ երկիրներուն ազատագրութեամբը թուրքին դարաւոր բռնատիրութենէն:

Այսուհանդերձ մեր տեսութեան համար շահեկանը քիւրտ ու արաբ ժողովուրդներուն ազատագրական կռիւներուն տարողութիւնն ու յաղորդութիւնը չէ: Մենք ուզեցինք դիտել տալ միայն որ այդ ժողովուրդներուն անջատական շարժումները վճռական փաստեր են թէ, իրրեւ հետեւանք ապիկար ու անբարոյ վարչական դրութեան մը, թուրքիոյ քաղաքացիական կեանքի ճարձակութիւն մէջ չնչիլիօդ չէին գտնուել նաեւ միւսիմ

տարրերը եւ թէ, հետեւաբար, այս վերջինները չէին կրնար յենարան դառնալ իռալիֆայութեաններու համալսմական յաւակնութիւններուն:

Եւ, վերջապէս, երկրին վարչական ներքին դրութեան հետեւանքներէն գերծչեր նաեւ թուրք զանգուածը: Թուրքիոյ մէջ տիրող տարբը, իրապէս, զանազան կարգի եւ աստիճանի պաշտօնեաներու դասն էր, որ ոչ մէկ յարգանք ունէր իրեն մատահուած օրէնքին հանդէպ եւ արհամարհանք միայն ունէր այդ օրէնքին ապահինող քաղաքացիին հանդէպ: Հետեւաբար այս վերջինը, թուրք կամ ոչ-թուրք, ընդհանրապէս ենթակայ կը մնար անբարեխիղճ եւ անպարկեշտ պաշտօնեաներուն մը ամէն կարգի գեղձաբարութիւններուն: Մակայն վարչական եւ ընկերային յետամնաց պայմաններէն եւ սուլթանական միակետութեան ճշմունքներէն զիտակցօրէն զգուհ դատը նոր մտաւորականութիւնն էր, որ 19-րդ դարու կէսէն առջին, յայտնի կամ գաղտնի, գործունէութեամբ, հետամուտ էր ժողովրդավար կարգեր հաստատելու երկրին մէջ:

Խաղաղ հիւստիանի եւ թանդիմութի բարեկարգչական փորձերով ստեղծուած պայմաններուն մէջ մայրաքաղաքի քանի մը մասնակցողական վարժարանները այլևս բաւարարութիւն չէին կրնար տալ ամբողջ թուրք ուսանողութեան պահանջներուն: Հետեւաբար, օրուան թոյլտրուութիւններէն օգտուելով, թուրք երկտարարները իրենց ուսումը շարունակելու համար կ'երթային եւրոպական ուսանանքը, մասնաւորաբար Փարիզ (ինչպէս կ'ընէին մերիները): Արդ՝ եւրոպական ժողովուրդներու քաղաքակրթութեան եւ ընկերային առաջադրութիւններուն մօտէն ծանօթանալէ վերջ երկիր դարձող այս երիտասարդ թուրք մտաւորականները պիտի աշխատէին խօսքի ու գրի միջոցաւ հոն եւս տարածելու իրենց ազատական գաղափարները (անշուշտ ազատականութիւնը հետզհետէ պատշաճեցնելով թրքական նկարագրին եւ բարքերուն): Արդիական այդ գաղա-

փարհերուն Հետևորդ մտաւորական սե-
րունդն էր, որ Ֆրանսերէն վերադարձով
մը պիտի կոչուէր ծեօն քօւրքեր:

Մինչեւ նախորդ դարու 40-ական
թուականները թուրք ժողովուրդը տա-
կաւին չունէր ազգային ուրսն անհա-
տականութեան մը եւ սեփական Հայրե-
նիքի մը յատակ գիտակցութիւնն ու ըզ-
զացումը: Անոր ազգային գիտակցութիւ-
նը խնդրուած էր խալիֆա-սուլթաննե-
րուն կողմէ ներշնչուած Համալսմական
մտայնութեան մէջ, անոր Հայրենիքը
զտանցական տար-իւլ-էսլամն էր: Հա-
կառակ որ թուրքին դարաւոր տիրապե-
տութեան տակ, իբրեւ Հաւաքականու-
թիւն, քիւրտը մնացած էր քիւրտ, արա-
բը՝ արաբ, Եւփուզներու եւ Քանունի-
ներու յետորդները տակաւին կը շարու-
նակէին բովանդակ միւսլիմ գանդուածը
զաւանիլ մէկ ամբողջութիւն՝ խալիֆա-
յական իրենց կախարդական մականին
տակ Հաւաքուած: Անոնց Համար թուրք
ժողովուրդը ազգային ուրսն հաւաքա-
կանութիւն մը՝ միլլէթ չէր, այլ իմամէթ
ի Մուհամմէտ (Մուհամմէտի Համայնք):
Եւ թէեւ ճիշդ է որ խաղաք հիւմայունը
այդ իմամէթը հռչակելով միլլէթի հա-
քիմէ (տիրող ազգ)՝ առաջին զարկը կու
տար թուրքին ազգային գիտակցութեան,
բայց արտաքին ազդակներու Հարկա-
դրանքին Հպատակող եւ փաստօրէն ան-
գործադրելի մեալու սահմանուած Հրո-
վարտակները խալիֆա-սուլթաններու
կողմէ մտայնութեան փոփոխութեան մը
չէին Համապատասխաներ: Անոնք պիտի
շարունակէին Համալսմական իրենց ցը-
նորքին կառչած մնալ մինչեւ իրենց
միահեծան իշխանութեան անկումը
(1908-9):

Նոր թուրք մտաւորականութիւնը
դէմ չէր, Հարկաւ, միլլէթի հաքիմէի
գերազանցութեան տակ միւսլիմ ժողո-
վուրդներու կարելի Համազանչակցու-
թեան մը գաղափարին. առիկա, իրենց
Համար, օգտագործելի առաջադրութիւն
մըն էր միւս: Բայց պատրանքը չունէին
այդ ժողովուրդները միապաղաղ զան-
դուածի մը մէջ ձուլուած տեսնելու, բան

մը, որ խալիֆա-սուլթաններու գերազա-
տանական փառքին միայն կրնար ծառա-
յել եւ ո՛չ թէ մէջտեղէն անհետացող միլլ-
լէթի հաքիմէի դիրքին: Մինչդեռ թուր-
քը իր ազգային ուրսն ինքնութեամբ
տարբեր էր միւս միւսլիմ ժողովուրդնե-
րէն: Բայց միլլէթի հաքիմէ յորջորջու-
մը անոր քաղաքական դիրքին միայն
կ'ակնարկէր եւ ոչ թէ անոր պատմական
ծագումին: Հարկ էր, սակայն, որ թուր-
քը գիտակցէր իր գաւնծալիք ծագումին
ու պատմութեան եւ այդ գիտակցութիւ-
նը յիմարան դարձնէր իր ազգային Հը-
պարտութեան: Այդ Հպարտութեամբ է,
տհա, որ օրուան ամէնէն յայտնի բա-
նաստեղծը պիտի պարծենար. «Մենք, որ
կը սերինք օսմանեան ազնուագարմ տոհ-
մէն, աշիրէթէ մը աշխարհակալ պետու-
թիւն մը ստեղծեցինք»: Եւ թանգիմաթ-
եան թուրք սերունդին ազգային գիտակ-
ցութեան սա գարթօնքը իմամէթ ի Մու-
համմէտը կը վերածէր միլլէթ ի օսմա-
նիլէի:

Բայց եթէ իմամէթի Մուհամմէտին
զտանցական Հայրենիքը տար-իւլ-է-
սլամն էր, ո՞րն էր միլլէթի օսմանիլէին
իրական Հայրենիքը: «Մահման քաջաց
զէնն իւրեանց»ի սկզբունքով թուրքին
կողմէ աշխարհակալուած երկիրներուն
ամբողջութիւնը: Բայց մենք տեսանք
որ այդ սահմանները բաւական Հեռու
նահանջած էին նոր քաջերու զէնքին առ-
ջեւ եւ ընկրկած սահմաններն ալ քիչ մը
չատ անկալուն էին տակաւին: Այսու-
Հանդերձ, ինչպէս ալ ներկայացուին այդ
սահմանները, անոնք պետութեան քա-
ղաքական սահմաններն են եւ ոչ թէ ազ-
գի մը Հայրենական սահմանները: Ազգի
մը Հայրենիքը այն Հողամասն է, որ
այդ ազգը իր դարաւոր դրսութեան ըն-
թացքին իր ստեղծադործ ջրտինքն է նե-
տած, ուր նիւթին անշունչ ու անկեր-
պարան զանդուածին կեանքի խորհուրդն
է ներշնչած: Թուրքին կողմէ սուպատակ-
ուած ո՞ր մէկ երկրամասին վրայ անոր
ճակատէն, չենք ըսեր՝ Հոգիէն, կաթիլ
մը ջրտինք է ինկած, որպէսզի Հոն սե-
փականատէրի նուազագոյն բաժին մը

ունեցած ըլլայ: Առանց ալ ու ձախ իյնալու օսմ. կայսրութեան երբեմնի կալուածներուն վրայ՝ մտէք Անատօլու, այսինքն՝ Թուրանէն դուրս թուրքին մնալուն բնակավայրը, որ միանգամայն եղաւ անոր քաղաքական կեանքին օրրանը եւ աշխարհակալութեան մեկնակէտը, եւ ցոյց տուէք միակ մզկիթ մը, որ թուրք ճարտարագետի մը գեղարուեստական ձեւակերպը եղած ըլլայ:— Մի՛ յողնիք: Անցէք Պոլիս, Եւրօպայէն Արիս՝ աշխարհադրական կամուրջ նետած այդ քաղաքը, որ հինգ հարիւր տարի իբրև մայրաքաղաք ծառայեց օսմ. կայսրութեան ու նոյնը փնտոցէք նաև հոն:— Մի՛ խաբուիք, ձեր դատած մզկիթները նոր անուններով բիւզանդական հին եկեղեցիներ են. ձեր հիացումը դրաւոյ պալատները հայու կամ օտարի ձեռքով կանկնած ճարտարագետական կառուցումներ են: Ե՛տ դարձէք, զէպի Հայկեանի ֆարձրեան մէջէն անցնելով մտէք Վանի շրջանը: Դիտեցէք այդ լրմուղները, որոնք իրենց կիսաւեր վիճակին մէջ օգտազործելի կը մնան շրջանի թուրք բնակչութեան հայկաթիւրով՝ անոր տմէնէն կենսական պիտոյքը: Առոնք մեր ուրարտացի նախահայրերուն հրաշակերաններն են, որոնց խախտած քարերն իսկ վերգետեղելու ընդունակ չէ 20-րդ դարու թուրքը:

«Բամբասանք չէ, բանն ասանկ է» կ'ըսէ ժողովրդական ասոյթը: Թուրքը անընդունակ եղած է իր հայրենիքը ըստեղծելու, այսինքն՝ սեփական աշխատանքով արդատաւորուած, հոգեպէս տիրապետած հողեղէն հայրենիք: Եւ այս է պատճառը որ դիւրութեամբ ասպատակուած երկրամասերէն զաշուած է նոյնքան դիւրութեամբ, առանց նայելու իր ետեւը, ուր իբժէ իբրև յիշատակ աւերակներ միայն կային: Հարկաւ, անիկա շատ աւելի կապուած էր ու կապուած մնաց իր Անատօլիին. բայց ստիկա՝ դարաւոր բնակութեան մը ստեղծած առհասարակութեամբ, կենցաղային վարժութեամբը լոկ, որ յատուկ է նաև անս-

պատի պէտէվիին եւ Ափրիկէի վայրենիին՝ իր միջավայրին հանդէպ, եւ թերեւս ոչ միայն մարդ արարածին:

Բայց սա միջանկեալ խորհրդածութիւնները մեզ չեն մոլորեցնէր հարկաւ Թանգիմաթեան շրջանի թուրք մտաւորական դասին ազգային-քաղաքական մտածողութիւնը դէպի առաջ փոփոխութիւն մը երեւան կը բերէ՝ խղուելով խալիֆա-սուլթաններու համխալմական շինծու դաւանանքէն: Ազգութեան ըմբռնումը, զատուելով իսլամական միութեան ցնորքէն, պետութեան հիմնադիրն անունով (Օսման) կը կապուէր քաղաքական ծագումին. Հայրենիքի ըմբռնումը, հեռանալով տար-իւր-իսլամի գառանցանքէն, կը յարէր պետութեան աւելի շօշափելի դադափարին: Ասով ազդի եւ հայրենիքի ըմբռնումները տակաւին այնքան ալ զօրաւոր յենարաններ գտած չէին ըլլար անշուշտ, բայց եւ այնպէս կը կառչէին կրօնականէն նուազ անշուշտ փիլի ազգակներու:


Արդ՝ Թանգիմաթեան այս օսմանցի սերունդն էր որ, օգտուելով արտաքին ազդակներու հարկադրանքին տակ օրուան սուլթանին (Ապտ-իւլ-Ալիզ) դիմողութենէն, պիտի կրնար ընդունիլ տալ 1876-ի սահմանադրութիւնը: Տեսանք, սակայն, որ հակահարուածը շատ շուտ հասաւ եւ միամեայ սահմանադրութենէն ետք հաստատուեցաւ համիտետն դաժան բռնակալութիւնը: Սուլթան Ապտ-իւլ-Համիտ Բ. մոլիտանդ համխարսմական էր: Անոր ընկերային-քաղաքական դաւանանքին առանցքը Գուրանն էր, որուն աշխարհայեացքէն դուրս ծագում աւանդ որակէ առաջադրութեան, որեւէ նոր ձգտումի չէր հանդուրժեր: Հետեւաբար հալածանքը սկսաւ նոր դադափարներու եւ կարգերու կողմնակից ժէօն քուրբանուն զէմ, որոնց ղեկավար զէմքերը ըստ պատճառող վտանգէն փախչելով արտասահման ապաստանեցան: Առոնք արտասահմանի մէջ հիմնեցին զիթիւրատ վէթիւրազը Հիմիյէթիյն (Միութեան եւ յոռաշրջիմութեան կուսակցութիւն), որ երկրին մէջ ունեցաւ իր գաղտնի հետե-

ւորդները մտաւորական դասին մէջ եւ որ Հետզհետէ թափանցեց նստել բանակէն ներս: Այս կուսակցութիւնը ի վերջոյ Համաձայնութեան գալով նաեւ երկրի ոչ-թուրք տարրերուն քաղաքական կազմակերպութիւններուն հետ, որոնք իրենց կարգին կը պայքարէին սուլթանական միապետութեան դէմ, իրեն կողմնակից Բուճէլիի բանակին առաջնորդութեամբ 1908-ին մտաւ Պոլիս եւ Հոյակեց միապետական Թուրքիոյ վերջին սահմանազրուցիւնը՝ իսկ տարի մը ետք դաւընկէց ընելով Համիտը՝ տեղը նստեցուց երբայրը՝ Բէշաս, իրել գահին վրայ իսկ Հանգստեան կոչուած խալիֆա-սուլթան: Այդ օրէն մինչեւ Ա. Համալիտար-Հային պատերազմի վախճանը Իթթիհատը (յիշուած կուսակցութեան կրճատուած անունը) միահեծան իշխանութեամբ վարեց Թուրքիոյ պետական-քաղաքական կեանքը:

Բայց ազգային-քաղաքական ինչ նոր առաջադրութիւններով Հրապարակ կ'իջնէր Իթթիհատը եւ գործակցութեան ինչ պայմաններով կը մտնէր պետութեան ոչ-թուրք տարրերուն:

Իթթիհատականերու դաւանանքը օսմանցիւնը իրեն էր: Յասակօրէն չմեղադրուած, բայց մանաւանդ յատկօրէն՝ շարտայայտուած դաւանանք մը: Իրենց ծածծած տեսակէտին համաձայն՝ երկրին այլազան տարրերը, որոնք օժտուած պիտի ըլլային քաղաքացիական նոյն իրաւունքներով, պէտք էր որ նոյն իտէճով, նոյն շահագրգռութեամբ իրենք զիրենք օրկանապէս կապուած պահէին քաղաքական նոյն միութեան, որ օտմ պետութիւնն էր: Կ'ընդունէին անշուշտ՝ որ օտմ պետութեան այդ քաղկացուցիչ տարրերը իրենց ուրոյն ինքնութիւնը ունեցող ժողովուրդներ էին, բայց, կ'ըսէին, պատմական Հորդոյթով անոնք, պիտի մերժուէին պետական միակ ժողովուրդի մը, որ օսմանցիւնը քիւնը պիտի ըլլար: Իրենց տեսութիւնը համոզիչ դարձնող փաստական օրինակն աբուսէլէն անոնք, - Ամերիկան: Բայց դուք մի՛ Հարցնէք թէ՛ օսմանցիական այս

տեսութիւնը ո'րչափով աւելի իրատես էր Համիտականին: Մի՛ Հարցնէք, մտնաւանդ, թէ ինչ կաղապարի տակ տեղի պիտի ունենար Թուրքիոյ քաղաքական տարրերուն ձուլումը օսմանցի ազգը կազմելու համար: Ծրագրուած պետական Հարուածէն եւ իշխանութեան գրաւումէն առաջ, երբ պէտք ունէին ոչ-թուրք տարրերու գործակցութեան, իթթիհատականները շատ չէին խորանար զմանրամասնութիւններու մէջ, կը բաւէր որ այդ Հարցին «պարզուկ» լուծումը անոնք ունէին իրենց մտածողութեան մէջ, ինչպէս յետոյ կը տեսնենք, երբ կը խօսինք յետահամադրական իրենց գործունէութեան մասին: Առ այժմ Հարկ է ընդգծել միայն որ օսմանցիական գաղափարաբանութեամբ առաջին ճեղքը կը բացուէր համիտական վարդապետութեան վրայ, թէեւ իթթիհատականները եւս, ինչպէս վերը տեսանք, ջանային կողմնակի կերպով օգտագործել նստել իրաւական եղբայրութեան գաղափարը՝ ի նպաստ իրենց առաջադրութիւններուն:



Նախորդ դարու 90-ական թուականներէն թուրք մտաւորական տարրերէն ոմանց ազգային-քաղաքական աշխարհայեացքին մէջ ծայր կու տար գաղափարական նոր թեքում մը, որ այս անգամ թուրքին ազգային դիտակցութիւնը կը կապէր անոր ոչ թէ քաղաքական, այլ ցեղային ծագումին եւ այս նախադիտուէն մեկնելով կը ձգտէր օտմ. Թուրքիոյ կիսնքն ու գործունէութիւնը առաջնորդել նոր խոհանք մը: Օտմ. թուրքը - կ'ըսէին այս նոր պատգամախօսները - օսմանցի ըլլալէ՛ առաջ թուրանցի է, ինչպէս թուրանէն ներս թէ դուրս ապրող իր ցեղակիցները, որոնց Հետ ունի թէ՛ ճաշակեմ եւ լիզուի նոյնութիւն, թէ՛ պատմական անցեալի Հասարակաց յուշեր, թէ՛՝ նկարագրի եւ բարքերու Համանման գծեր եւ ի վերջոյ նաեւ մեծապոյն մասին Հետ, կրօնական դաւանանքի՝ ընդհանրութիւն: Այս Հասարակաց յատկանիշները գլխաւոր ազգակներն են:

ազգային ամբողջութեան մը կազմաւորման, կը բաւէ միայն այս ցեղակից հատուածները համախմբել միակ իտէալի մը շուրջ, որ պէտքի կազմուի թուրանեան ժողովուրդներու ազգային-քաղաքական մեծ միութիւնը՝ Մեծն թուրանիան:

Այս նոր դադափարարանութիւնը իր պատուաստը դուրսէն կը ստանար, ուսուսակատակ թուրանցի ժողովուրդներու մտաւորական ղեկավարներէն: Իրրեւ հակազդեցութիւն ձարական կառավարութեան ձուլումի քաղաքականութեան եւ անոր հետ կապուած ճշտումներուն ու հարածանքներուն՝ առեսական տիրապետութեան տակ ինկած թուրանական ժողովուրդներուն մէջ ինքնապահպանութեան բնագոյով Յնունդ կ'առնէր համաթուրանական միութեան մը դադափարը: Բայց չսկայ Թուրքիոյ դէմ նման առաջադրութեան մը քաղաքական պայքարը դուրս հանելու համար՝ հպատակ ժողովուրդի իրենց ոյժն ու միջոցները շատ անբաւարար էին հարկաւ: Թուրանական անկախ ու զօրաւոր պետութիւն մը միայն կրնար ստանձնել այսպիսի առաքելութեան մը յառաջապահի դերը, իսկ այդ պետութիւնը Օսմ. Թուրքիան կրնար ըլլալ: Եւ ահա, այս շրջանին, թուրք ութաթար հասարակական դործիչներ, Թուրքիոյ թէ արտասահմանի թուրք մշտաւորականութեան մէջ, սկսած էին համաթուրանական (կամ համաթրքական) այս դաւանանքին քարոզչութեան: Արդէն դիտենք սակայն որ համաթուրան ղեկավար տակ նոր դադափարներու համար ազատ ասպարէզ չկար: Իսկ արտասահման ապաստանած թուրք մտաւորականութիւնը, իր օսմանցիական դադափարարանութեամբ տարուած, շատ ալ

որամադիր չէր երեւեր մտիկ ընելու այս նոր պատգամաբաններուն քարոզը:

Յամենայն դէպս 19-րդ դարու 90-ական թուականներէն սաղին դադափարական երեք հոսանքներ բովանդակութիւն կու տային Թուրքիոյ կեանքին համալրամակամը, համօսմանցիակամը եւ համաթրքականը (կամ համաթուրանականը): Ասոնցմէ առաջինը, ըլլալով պետութեան պաշտօնական դաւանանքը, տարածման ազատ ասպարէզ չէր թողոր միւսերուն: Ըսած ենք արդէն որ Համաթուրանայ էր իսլամական միութեան դադափարէն շեղողներուն հանդէպ: Գիտենք սակայն որ օսմանցիականները (իթթիհատականները) դադափար դործունէութեամբ կրցած էին երկիրին մէջ ապահովել կողմնակիցներու բաւական կարելոր թիւ մը եւ մանաւանդ որակ մը, որով պիտի կրնային դիւրութեամբ գլուխ հանել իրենց ծրագրած սահմանադրական յեղաշրջումը: Ամէնէն տկարն էր տակաւին համաթրքական դադափարարանութիւնը, որ սակայն Թուրքիոյ հաշտոյն ըլլալով ամէնէն առողջն ու իրատեսը՝ Մահմանդարութեան յաջորդող ազատ դործունէութեան տարիներուն, շատ շուտ պիտի տիրապետէր երկրի բովանդակ ընկերային կեանքին, վարկ չձգելով այլեւս որեւէ այլ դաւանանքի:

Բայց մենք համօսմանցիական եւ համաթրքական դաւանանքներուն ուրուագծային բնորոշումը միայն տուինք: Ասկէ անդին պէտք է դիտենք անոնց դործնական արտայայտութիւնը Թուրքիոյ ազգային-քաղաքական կեանքին մէջ:

ԵՂ. ՏԱՄԵՐԱՅԵԱՆ

Արուեստագիտ. ներու հեղ

ՆԿԱՐՁԱՐՈՒԵՍԸ ՆՇԱՆ ՓԱՆԱՆՃԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ

Ուսումնական տարիներին հայտնիակն Նշան Փալանեան ճեմարանի ուսանողութիւնը, կատարեց նաեւ նկարչական արուեստի ուսման ներքին ներս տարած աշխատանքներուն ցուցադրութեամբ, Վասպուրական սրահին մէջ, որուն զոնիքը բաց մնացին, շուրջ երկու շաբաթ, որ ուկտառէր հասարակութեան մը առջեւ:

Առաջինը՝ մանկատարեցիկ աշակերտներուն առաջին արձուագներն էին, պիտեքու եւ զոյներու աշխարհէն ներս: Վաս ու արտաքուր զոյներու սքանչելի հրաժարութիւն մը կը շարունակէր սրահէն ներս մանուկն աչքերը: Հնազանդ աշակերտներու պէս զով-զովի տեղ գրաւած ձեռքոյն այլ տախտակներէն, անհասակն թէ հուսարկան, կը ցուցանանին կեանքն ու աշխարհը մանկական աչքով տեսնելու եւ մանկական հոգով դիտելու կարողութեանց իւրայատուկ արտիճանաւորութեանը: Երազ եւ իրականութիւն միախառնուած՝ կը բերէին անակնկալիմ վայելքը: Հուսարար պատրաստուած պատասաններուն մէջ կային այնպիսիներ, որոնց սակ առանց ամենալու կրնար ստորագրել անուանի արուեստագէտ մը: Ազատ դիտելու եւ ազատ արտայայտելու այս կերպը խորագէտ մանկավարժական՝ նպատակ կը բերէ նաեւ մասդաշ Հոգիներու ուրոյն անհասականութեան, որուն քաղաքական համար յոյժ զընահատելի է մանկավարտիզպանուէրին՝ Տիկին Մալիֆեանի եւ իր զործակիցներուն տարած աշխատանքը:

Երկրորդը՝ նախապատրաստական եւ նախաիրթական դասարաններու աշակերտութեան նկարչական վարժերու ցուցադրութիւնն էր, շուրջ հարիւր պատաստ, որոնց բոլորին մէջ կ'արտաբերար ճեմարանի նկարչութեան ուսուցիչին՝ յայտնի նկարիչ Տ. Կիւզնէրչիեանի մեղուական աշխատանքին արդիւնքը, աշակերտներու սրտին մէջ բոցավառելու արուեստի սէրը, դաստիարակութիւնները, օժանդակելու երեւակայութեան

Թոխչիկն եւ ճամբայ բանալու անհասական արուեստին եւ արտայայտութեան կերպին:

Ուսուցիչաշակերտի միացեալ խոյանքը հասած է տեղ մը, որ սքանչելի հեռանկարներու կրնայ հասնիլ, եթէ Նշան Փալանեան կրթական հաստատութենէն ներս նոր հարստութիւններ կու-

ՄՈՍԻ ՓՈՒՍԵՆԱՆԻ ԱՇԽԱԿԵՐՏՆԵՐՈՒՆ ՊԱՆԷԻ ՀԱՆՂԵՍԸ

Մոսկա Փոլատեան, տարիներէ ի վեր, կը բերէ իր պատուարեր մասնակցութիւնը Լիբանանի մէջ թաւալող գեղարուեստական կեանքին: Իր արուեստը կատարելագործելու համար ղեկի Մոսկոնա եւ Հայաստան կատարած ճամբորդութենէ վերադարձին, երբ հիմնեց պարարուեստի իր դպրոցը՝ շնորհալի մենագրուէրին, անձնակազմին առնթներ, ընդգծեց նաեւ այլանուէր զործուէրութեան ասպարէզը, եւ երկու տարուան իր ճիգերուն արգասիքը, դասական պարերու ուսուցման արդիւնքը, աշակերտներու պայէի հանդէսով մը, հրամցուց արուեստասէր հասարակութեան, անցնող ամսուան ընթացքին, Գալուստ Կիւլպէնկեան սրահին մէջ:

Աշակերտներ, բայց առաւել թիւով աշակերտուէրներ, հայ թէ օտար, եօթնէն մինչեւ քսան տարեկան, ցուցաբերեցին երաժշտութեամբ ու շարժումներով արտայայտուող արուեստը՝ պայէն թեմին վրայ իրազորելու սահմանուած իրենց ձեռքերն ու յատկութիւնները, Գարմէն (Պեղէի), Ձիմական (Չայքովսքիի), Թմբակահարներու պար (ժողովրդային), ճափնական պար (ժողովրդային), Անթիպարի պար (Կրիկի), Պարտիզպանը եւ Մաղիկները (Տելիպետի), սպանական պար, վարիտաթոն (Կուլոյի), զատական քայլեր (Տելիպետի), Մուրիթու պար (Ա. Խայատուրեանի), Փօքաթու, Լա Մետիթաթոն (Փերլզեի) զործերուն մէջ:

Լուսադոյն իրազորելու արժանազուակցաւ Մուրիթու պարին, որուն կը մասնակցէր ինքը՝ Մոսկա Փոլատեան, եւ Մետիթաթոնին մէջ:

Երկու տարին համեմատաբար կարճ ժամանակաշրջան մըն է արուեստի անդամանի մը ցանկէն լիազուժար հունձք մը ցաղելու համար: Ունինք վատահասակութիւնը թէ յաջող տարիներուն Մոսկա Փոլատեանի ճիգերը անելի՛ արդիւնքով պիտի մատուցուին հանրութեան: Թ. Գ.



Կղճարներ

«ԲԱՅՑ ՄՈՌԱՆՈՒՄ ԵՆՔ»...

«Սովետական Գրականութիւն» *ամսաթերթի անցեալ տարուայ Դեկտեմբերի Համարին մէջ, Ստեփան Ալաջալեան թարգմանական նոր գրականութեան մասին իր գրական ու բացասական կարծիքները հիմնաւորելէ ետք, մատը կը դնէ հետեւեալ վէրքին*—

«Ճառաստ է թարգմանել Գեորգ Բարխուդարեանը, եւ իր ժամանակին լաւ է զնահատել: Գնահատում եմք նրան, բայց մտածում եմք, որ յայտը թարգմանութիւն է մաքու նորը՝ Պարոյր Միքայէլեանի թարգմանութիւնը, եւ լռում եմք: Գնահատել եմք նախորդներին, բայց մտածել եմք, որ Վարոտ Յովակիմեանը լաւ է թարգմանել Լերմոնտովի «Իմանկտիանդէպը»: Շատ եմք գովում արժանատի Մասեհեանին, մտածում եմք Դաշտեանին: Հին թարգմանութիւնների գերազնահատումը եւ նոր թարգմանութիւնների թերագնահատումը մեզ կը հուսցնի սխալ եզրակացութիւնների, եւ դա մեր քննադատութեան մեղքով: Բայց մեր քննադատութեան մեղքը միայն դա չէ»:

Եթէ պահ մը դուրս գանք թարգմանական գրականութեան մարզէն ու մեր շուրջը նայինք, իրապէս պիտի նկատենք որ ամենուրեք ու միշտ մեր քննադատութեան մեղքով՝ կացութիւնը նոյնն է, — հիները կը զերպանահատուին ու նորերը կը թերագնահատուին: Արուեստի բոլոր կայրւածներուն մէջ Հայաստանի հիները ունին ապրեցուցիչ կայունութիւն մը, դարձած են անմերձեանի, անխոցելի, բացարձակ եւ ամէն ինչ կ'ընթանայ համաձայն այդ բացարձակապետութեան: Միջին սերունդը կը կրկնէ անոնց ըսածը, նորը միջինին մարտածը եւ այսպէս յաջորդաբար, առանց ստուգման նոր ճիշդի, առանց վերագնահատութեան փորձի, տազնապի, լոյսի: Ու մտքի այս կարգապահութիւնը, այս բարացած անախապաշտութիւնը առաջացուցած է այն վէրքը, որուն մասին կը խօսի Ալաջալեան:

Հիները գերագնահատելու եւ նորերը թերագնահատելու տկարութեանէն զերծ չեն նոյնիսկ ամէնէն օտուտած դատողները: Ահա նոյնը մը Հրանտ Թամրազեանի «Գրական Ուղիներում» հատորէն»—

«Ի հարկէ, մեմք այսօր չունենք գրական հսկաներ, Թումանեաններ եւ Իսահակեաններ, Չարեաններ, բայց ունենք լաւ, տաղանդաւոր գրողներ, որոնց ստեղծագործութիւնները միասին վերցրած ստեղծում են ժողովրդայնութեան լուրջ որակ»:

Այս «Հսկաներ»ուն երկու հրրորդին փոխարէն յիշուած ըլլար գոնէ Վարուժանը, Միամանթոն, Թէքէեանը, Մեծարեանը, որպէսզի մարդիկ համարձակութիւն չունենային, օրինակ, Պարոյր Սեւակը յիշել, Վահագն Դաւթեանը կամ Սիլվա Կապուտիկեանը: Իրենց բանաստեղծական յղացումներով եւ իրագործումներով ինչո՞վ էս կը մնան այս երիտասարդները Թամրազեանի «Հսկաներ»ու որակական կշիռէն: Անպայման հեքիա՞թ պէտք է պատմած ըլլայ բանաստեղծ մը, որպէսզի հսկայանայ: Ընդհանուր է Ալաջալեանի ախտաճանաչումը: Գերագնահատելու եւ թերագնահատելու պարագաները նոյնն են ամենուրեք: Ու ստիկա գրականութեան ուղիղ ճամբան չէ:

«ԵՍ Է՛Լ ԻՄ՝ ՏՈՂԵՐԻՍ ՄԷՋ...»

Հայաստանի դրահանութեան հետեւող մարդը դառնութիւն մը պատ-
 րաստած կ'ըլայ ինքն իրեն համար, եթէ սխալմամբ կամ յիշողութեան յի-
 մար սովորութեամբ ընթերցումներէն բաներ մը անցնի մտքին: Այդ մտ-
 ցածով կը յօրինէ դրողին ղէմքը, կը զուրգուրայ վրան, ու ահա ուրիշ օր
 մը, ուրիշ մը կու գայ եւ նոյնը կրկնելով՝ կը խաթարէ մէջը առաջինին
 ձգած պայծառ տպաւորութիւնը: Մշակոյթը քաղաքակրթութեան պոռնիկ
 մակարդակին իջնուցած՝ այս մարդերը կարծես հոս եւս իրենք զիրենք
 զհամայնական արտում-հանդում» կը կարծեն եւ սրտի անհուն խաղաղու-
 թեամբ կը յարձակին մէկը միւսին յղացումներուն ու ոճին վրայ: Այս կա-
 պակցութեամբ տանեակ էջեր ու հատուածներ ընդզոծած ենք մենք, բայց
 թուենք միայն նորը, նորագոյնը:

Բանաստեղծ Վահագն Դաւթեան դրած է պարզ ու վարակիչ ջեր-
 քուած մը աշխարհի ամէնէն աննշան թռչունը, նկատուող ճնճողակին մասին:
 Դաւթեան խորհրդանշանի մը վերածած է ճնճողակը, մարդուն մօտիկ ապ-
 րող, ձիւնին, բուքին ու դժուարութիւններուն տոկարով, մարդուն ու իր
 ընտրիին հաւատարիմ յամառ անհատականութեան մը, հակադրելով զայն
 շատ փառաբանուած այն եսամոլ գնչուին, որ ծիծեռնակ կը կոչուի: Գեր-
 թուածը կը սկսի սա տողերով.—

Ծիծեռնակների մասին այնքան
 Լաւ հրգեր կամ գրուած,
 Ես ինքս էլ եմ հազար անգամ
 Փառաբանել նրանց:

Այս տողերով սկսած է Դաւթեան եւ ապա նոյն պարզութեամբ կեն-
 սադրած է զիւմ հեզ, խիզախ քռչնակ»ը: Բանաստեղծութիւնը իր խորհրդա-
 նշական ուժին պատճառով պարտադրած էր ինքզինք մեր համարումին ու
 յիշողութեան: Վահագն Դաւթեանի այս ոճէն ուղած է օգտուիլ իրեն ան-
 ուսնակից-պաշտօնակից միւս Վահագնը, կարենցը, որ «Առլետտակամ Գրա-
 կանութիւն» ամսաթերթի այս տարուան Փետրուարի համարին մէջ իբր օտո-
 րագրած շարք մը ջերթուածներէն առաջինը կը սկսի սա տողերով.—

Բարդիների մասին գրուել են շատ հրգեր,
 Կործես ծառեր լինեն պօէզիայի-
 Ես էլ տղերիս մէջ նրանց շատ եմ գրկել
 Այնքան փոքրի սակ երազային:

Իրարու այսքան մօտենալէ եւ բանաստեղծական բարձր արբերքը այս-
 քան պարզացնելէ ետք, ի հարկէ, դժուար չէ ալլելու բանաստեղծութիւն
 սարքելը: Այս դիւրութիւնէն ուղեցիկնք օգտուել մենք ալ, ու մեր տողերուն
 մէջ զգրկել» բանաստեղծական բան մը. բայց ոչ ծիծեռնակը զիջեցաւ մտնել
 անոնց մէջ, ոչ բարտի մը եւ ոչ ալ աղջիկ մը: Դուրս եկաւ հետեւեալը.

Գրագողների մասին գրուել են այնքան
 Դառն խօսքեր սրտի,
 Ես ինքս էլ եմ հազար անգամ
 Դառնացել իսկի:

«ԵՍ ԱՆԳՐԱՆԻԿԻ ԶԻՆՈՒՈՐՆ ԵՄ»...

«Նաչիր աչքերիս. ես Անդրամիլի գիմուրն եմ.
վառ բան անես, գլուխդ կը կտրեմ»:

Հայաստանի երիտասարդ եւ ամէնէն տւելի ժառանգ արձակազիր-
ներէն մէկուն մէկ վիպակէն արտագրած ենք այս պարբերութիւնը: Պարզ
արտայայտութիւն մը, որ բնորոշ է սակայն, տրուած ըլլալով որ կու գայ
Արարատեան աշխարհէն:

Կը թուի թէ Հայաստանի մէջ, մարդիկ, սկսած են մերթ ընդ մերթ
բնականոն պայմաններու մէջ շնչել եւ հպարտութեան արդար պատճառնե-
րով հարստացնել իրենց լեզուն ու հոգին:

— « Ես Անդրամիլի գիմուրն եմ »...

Գիտենք, թէ ինչպէս, տառապազին ի՞նչ սպասումներէ ետք ընդուն-
ուեցաւ հերոսը հայրենիքի մէջ, հայրենիքի կողմէ: Ի՞նչ տհաւոր տաճարնե-
րու դուռ կը բանար անոր անունին յիշատակութիւնը երէկ եւ ողբերգական
ինչ վախճաններու կ'առաջնորդէր ենթական:

Մեր երեւակայութեան ուժ տալով չէ որ այս բաները քով-քովի կը
դնենք: Ի մտի ունինք արձանագրուած փաստերը, որոնց հիման վրայ, մար-
դիկ, մեր հայրենիքին մէջ, այդ հայրենիքին ամէնէն պանծալի անձերուն
յարգանք ընծայող ուրիշ պանծալի գէմքերը դատի կը քաշէին, արեւոտ
ու անվերաբեկի վճիռներ արձակելով անոնց դէմ:

Մանօթ էք հարկաւ հայ մտաւորականութեան երկրորդ Ապրիլ 24-ի
նախօրեակին խմբագրուած դատական թղթածրարներուն: Այսուհանդերձ
չահեկանութենէ զուրկ չ'ըլլար աչք մը եւս նետել հեռուէն հատուածին
վրայ —

— «Ինչո՞ւնի Բախուցը եւ ուրիշներ, իմնջեմնի ցուցումով, աշխա-
տում էին անցկացնել իրենց հակայեղափոխական դրաթիւնները: Նրանք
պահանջում էին, որպէսզի կիներն բանուորների եւ գիւղացիների յեղափո-
խական կռիւն արտայայտող կիներկարների փոխարին՝ ցուցադրի դաշնակ
աւանտիւրիստների յարձակումն Օտումանեան բանակի վրայ. առաջարկում
էին կիներկար պատրաստել հակայեղափոխական դաշնակ-խմբապետ Ան-
դրամիլի մասին»:

Այսպէս էր երէկ ու ահաւոր էր երէկ հակայեղափոխական դաշնակ-
խմբապետ Անդրամիլի» գործունէութիւնը գնահատելու կամ անոր անու-
նով երդում ընելու ամէն փորձ: Այդպէս չէ այսօր, բայց համայնապարա-
կան է դարձնալ Անդրամիլի արժեւորելու շարժումը: Այսինքն սառող չէ,
չահախնդրական է, մո՛ւթ: Պայմանագրական ուրացումները կրկնուեցան
հոս եւս, պատմական խեղաթիւրումներ եղան եւ անհեթեթութեան վրայ
հիմնուած անհեթեթ հրապարակագրութիւն մը հեղեղեց եւ տակաւին կը
չարունակէ հեղեղել Հայաստանի եւ ուղեկից թերթերուն սիւնակները:

Քառասուն տարի շարունակ իրենց ուրացումներուն եւ երեսուն տա-
րի առաջ կառարած հաստատումներուն տրամագծօրէն հակառակ բաներ
կ'ըսուին հի՞մա: «Հակայեղափոխական դաշնակ-խմբապետ Անդրամիլի»
հրաչիւք իմն փոխուած է այսօր ու կը ներկայացուի իրրեւ հակադաշնակ-
ցական մարդ, Իսահակցութենէն երես դարձուցած մարդ, Ռուսաստանի
ուղղութեան կողմնակից, սուսասէ՛ր քիչ կը մնայ կոմունիստ...

Մարդ մը իր մթնոլորտէն դուրս բերելէ ետք դայն արժեւորելու նոր շափանիչ մը կայ հիմա, որ դարձեալ մեր հայրենիքին վրայ ճնշող բերտ ուժին նուէրը եղաւ մեզի: Դէմքի մը դիմագիծը կազմող հարազատ գիծերը խորտակելէ ետք՝ կ'ուզուի, որ անոր փակցուած դիմակը իբրեւ ճըշմարտութիւն ընդունինք: Այսպէս եղաւ նաեւ Անդրանիկի պարագային: Իր անդրանկութենէն անջատելէ ետք միայն մարդիկ սկսան հորովել իր անունը:

Ատնք անհասկնալի երեւոյթներ չեն սակայն: Ժամանակակից կեանքի իրողութիւնները խարդախողներ միշտ պիտի գտնուին: Մէկը սնանկութիւն մը դարձանելու համար, ուրիշ մը՝ փայլ մը ստանալու համար, երբորք մը՝ ուրիշ բան, շորտորդ մը՝ ոչինչ ստացած ըլլալու վրէժը լուծելու քննախնդրութեամբ: Պիտի գտնուին: Ճշմարտութիւնը չի կրնար արդիւլէ այս կարգի ապականութիւններուն դործունէութիւնը: Այսուհանդերձ ըսենք, որ առանց Անդրանիկի Դաշնակցութիւնը կար, եղաւ, կա՛յ, բայց առանց Դաշնակցութեան անկարելի պիտի ըլլար Անդրանիկի մը ծնունդը: Դաշնակցութեան ստեղծած ոգիին, մթնոլորտին, պատրաստած ասրի այրերուն՝ ու հայթայթած անհուն միջոցներուն շնորհիւ էր, որ Անդրանիկ կրցաւ զբեւոյրել իր հերոսական խառնուածքը եւ անդրանկանալ: Հանցէք Անդրանիկը այս մթնոլորտէն դուրս ու արդէն Անդրանիկ չի մնար: Կը մնայ սոսկական անձ մը: Կը մնան սոսկական անձի մը անշահական վերեւ-վայրումները:

— Ես Անդրանիկի զինուորն եմ»...

Ո՞ր Անդրանիկին, Դաշնակցութենէն երես դարձուցած Անդրանիկին, թէ անոր, որ Դաշնակցութեան փամփուշտները խաչկալ կապած ու Փետայիներու հետ թեւ թեւի իբրեւ արծիւ կը սաւառնէր լեռ ու դաշտ: Ծիծաղելի է անշուշտ նման հարցում մը ընել, որովհետեւ ըսինք, որ Անդրանիկը Անդրանիկ էր իր զէնքով, սուրով, Փետայիներով, բանակով, Դաշնակցութեան մարտիկը եղած պահերուն. այդ շրջանին կաաարած իր խոյանքներով դարձած էր զէմք, հպարտութիւն ներշնչող անուն, խորհրդանշան: Այս է: Այնուհետեւ ոչինչ աւելցուց իր անունին վրայ որովհետեւ դործ չունէր, իր մթնոլորտին մէջ չէր, իբրեւ արծիւ սաւառնելու պատճառները չկային:

Ճշմարտութիւնը այս է, մնացեալը՝ հրապարակազրական որո՞մ:

Ու երբ ճշմարտութենէն վախ չունինք ու պատմութիւնը գլխիվայր դարձնող ուժի մը կարելիութիւնը հաստատուած չէ տակաւին, մեզի կը մնայ սպասել ժամանակի արդարութեան: Քառասուն տարի արժեք մեզի, մինչեւ որ հասկնան, որ Անդրանիկ հակայեղափոխական աւանտուրիստ մը չէ ու այդքան երկար սպասելու հարկ պիտի չըլլայ, կը խորհինք, որպէսզի մարդիկ ջնջեն խաթարիչ վարդապետութենէ մը ժառանգ մնացած իրենց տխմարութեան միւս կէտը ու մարդանան:

Մենք կրնանք մոռնալ այս բոլորը ու վերադառնալ երիտասարդ արձակազրի հերոսին, կարեւորին.

— «Ես Անդրանիկի զինուորն եմ»...

Իսկանը զրական հերոսին այս հպարտութիւնն է, վիպագրին մէջ ստեղծուած խանդավառութիւնը, ընթերցողը հարազատ ապրումի մը հարողակից դարձնելու պարագան: Հին կարօտները կը յաղենուն նման արտայայտութիւններով եւ նոր նկարագիրները կը կերտուին այս կարգի ոճերու մէջ: Կը բաւէ, որ Հայաստանի մէջ կան մարդիկ, որոնք լենինը եւ Ստալինը մոռցած՝ Անդրանիկի անունով երգում կ'ընեն: Իսկանը այս է:

ԱՄԱՉԵՑ ԱՅՆՊԷՍ

«Գարնանային նուագներ» անուն գրքով էն առնուած է զեմ հայրենիքը խորազրուած քովի միւսակի նուագը: Ինչ ախորժալուր հուսազ, նուագածուի ինչ ախորժուի: Աւ մասնէլ, որ 1906-ին Հրատարակուած «Գարնանային նուագներ»-ը երիտասարդ բանաստեղծի մը անդրանիկ դործն է: Երիտասարդ տրամկազրի մը առթած ուրախութիւնը հազիւ հաշակած՝ ահաւասիկ մեզի բանաստեղծի մը «Հայրենիքը», որ դառնութիւն կը պատճառէ միայն: Ըստ երեւութիւն, բանաստեղծ Եւտույնկոյի կուտած «Ստալինի մասնագործներ»-էն ո՛րանք Հայաստանի մէջ կը թնակին, որոնց մեռնասուններէն մէկը ըլլալ կը թուի ինչպէսքը անպարփակ Հայրենիքի մը, կամ բողոքաբան Հայրենիքներու տէր յայտարարող այս փոքրիկ բանաստեղծը: Այլապէս ըմբռնել չէ որդէն Հայրենիքի սահմանները այսքան ընդարձակելու այս անհեթեթութիւնը: Բողոքի Գողոթնի «օր ու Ստալինի օրով» արգրած տեղերուն չքովի չքովի «հասկնալի էր նման բռնութիւնները ինչպէս, զի թիւրապէս «հայ» արձաններու խորտակումէն ու զգաստուանդաններու թեթեւացումէն» ետք, մարդ խորազէս կը ջաւի: Երբ երիտասարդ բանաստեղծի մը զերբին մէջ կը մտնէ եւ նոր խառնուածքի մը յուսատու խմորումին փոխադրէ՝ կը գտնէ ինչ ուսմունքի մը ախորժիւն հետքերը:

Կարգացէք բանաստեղծութիւնը անգամ մը եւս ու եթէ կրնաք զսպիտէք ձեր դառնութիւնը այս անգամ բանաստեղծութիւն ըստանին Հայրենիք: Այս մեռով մասնուղ, մասնակու այս կլանակէն յիմարող մարդուն տողերը, ի հարկէ, պիտի պարզէին բանաստեղծական այս թշուառութիւնը: Այսքան Հայրենիք ու բան Հարազատ հաշակող մարդը կրնա՞ր միթէ ոնէ մէկուն հանդէպ կարողատ ու մասնաւոր ապրում մը տաքցնել, խորացնել, անհասակահացնել: Մնաց որ, բանաստեղծութիւնը մշտնջեն է մասնաւոր ապրումին, մասնաւորին:

Կը մեայ տակաւին հեղիւն պարագան, որ

«ամաչեց այնպէս»: Ամաչեց արդեօք իր տուած հարցումի՞ն պատճառով, թէ ստացած պատասխանին համար: Տխուր են ու մասնորէլ այս վերապրուկները:

ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Երիտի ախի՞ն եւ ծանօթացայ Մի հեղիլի հետ քուլ ու ժպտերես, Մե՞նք ծանօթացանք, եւ նա կամեցաւ իմանալ ո՞վ եմ, ի՞նչ ազգից եմ ես:

Հայ եմ, առցի, ու նա կարցրեց Ե՞րբ եւ մեկնեցաւ քն հայրենիքը, Թուաց, քէ մէկը ուժգին ապտակեց Աւ գլխիս փութեց կապոյտ երկիմբը:

Նայցի՞ն նրան եւ կարտաւքեմք՝ Իմ հայրենիքը լիտվան է առի, Իմ հայրենիքը Ռուսիան է անմայկ Եւ սեգ լեռները անբող կովկասի:

Իմ հայրենիքը, առցի նրան, Զգուում է չեմայ իմ Հայաստանից, Միմչիւ Մալտալիա, միմչիւ Մազազան, Ուր մեռներ կան ցուրտ ու խառայից:

Իմ հայրենիքը մեծ ու անգործ չազն է կարագատ մեր սովորական, Ուր հայ, վրացի, լատիչ եւ ուզրեկ Սիրում են իրար սիրով խկալան:

Առցի նրան, ու նա ժպտազիմ Գլուխը կախեց, ամաչեց այնպէս, Եւ յետայ մի պտի մայցի իմ ղէմքիմ Ու մեռաւ սեղմեց կարագատի պէս:

ԲԱՏՄԻԿ ՊՕՂՈՍԵԱՆ

ԱՆՀԵՏԱՑՈՂ ԴԷՄՔԵՐ



ՍՍԱ-ՎԱՆԻ

Նոր գոյժ մը, Աքեմէն, կը հազարդէ մեզի մահը ծանօթ գրագետ-գաղտնիարակ Սոս-Վանիի - կարապետ Յովհաննէսեան -, որ վերջին տարիներում ապրեցաւ առողջական ճայտայտած վիճակ մը: Մահը տեղի ունեցած է Մայիս 28-ի օրը:

Յուզարկաւորութեան ներկայ եզած են Ազգային կեդրոնական վարչութիւնը, «Ազատ օր» խմբագրութիւնը եւ բազմաթիւ միութիւններու ներկայացուցիչներ: Դամբանական խօսած են քեմալական առաջնորդ Սահակ Եպս- Ավագեան, վերապատուելի Գրիգոր Տէմիրճեան եւ ազգային կեդրոնական վարչութեան անհապառ՝ Ներսէս Յակոբեան: Բոլոր խօսողներն ալ անգրեզարժած են ողբացեալ գրագետին յիսուն տարուան կրթական, համարային ու գրական արդիւնաշատ գործունէութեան վրայ՝ սկսեալ իբ ծը-

նընդավայր Շատախէն մինչեւ Ատափագար, Պանաքըմա, Պոլիս եւ հուսկ ուրեմն Յունաստանի գաղազան քաղաքներուն եւ Աքեմէի մէջ:

Մնած է վաճառ Շատախ գաւառի Թագ գիւղաքաղաքին մէջ 1897: Աշակերտած է Ազքամարի ժառանգաւորացիո, Վանի կեդրոնական վարժարանին, ապա՝ Ատափագարի կեդրոնականին, ուրկէ վկայուած է 1913-ին: 1914-ին, երբէ ամիս կը նետելի Պոլսոյ Հարպէէ գիւնարական վարժարանի դասընթացներում, իբր ենթաստղապատրաստուելու համար: 1915-ին կը բանասերկուի Ատափագարի մէջ ու կ'ենթարկուի չարչարաններու:

Սոս-Վանի եղած է հայրենազաշտ մեր գըրագէտներին: Իր հոգիով, ներքին ապրումներով ու երեսակայութեամբ՝ ան տուարար դեղերեցաւ հայկական կեանքախորհիւն մէջ, որում խորունկ պաշտամունքը ունէր: Հայ գիւզն ու հայ գաւառը իրեն համար ամեն բան էին: Իր գրականութեան մէջ կամ հայաշխարհի բարեքրը, աւանդութիւններն ու տոնիկ կենդանութիւնը:

Սոս-Վանիի ճակով հայ աւանդութիւնը, կենդանութիւնը, եւ հայրենի բնութիւնը կարանցուցին իրենց ամենէն ճարտար ու բազմազատակ արտայայտիչներն մէկը:

Յիսուն տարի շարունակ գրիչ շարժեց, մեր ժողովուրդին անցեալը վերակենդանացնելու համար:

Սոս-Վանի աշխատակցած է Սփիւռքի բազմաթիւ հայ քերթերու եւ պարբերականներու, յատկապէս Աքեմէի «Ազատ օր»-ին: Ունի Անտիպոնիստական կատարելի վաստակ մը: Իր գործերէն կարելի է յիշել «Վահագնածնունդ» (1931), «Անահատականը» (1935), «Մամ քիւն ծովը ընկաւ» եւ «Ճաննաճէ մեր հայրենիքը»:

ԳՐԻԳՈՐ ՃԻԶՄԷՃԵԱՆ

Մայիսի 12-ին, իր սպարած պանդոկին մէջ լսնկարծածակ հղած է բանաստեղծ Գրիգոր ձիգմէնեան:

Գրիգոր ձիգմէնեան ենած է 17 Հոկտեմբեր 1904-ին, Սկիւտարի բարձունքին, Ինասիէ Զիֆ-րէ Պազալ Թաղամասին մէջ, Եւուարլ Միտաքեանի, Սիւմանթոյի, Վահան Թէգէնեանի եւ Միլթոն Կիւրճեանի ընկերաներուն առնթք:

Նահնական ուսումը ստացած է Ներսիսեան Վարժարանի, իսկ երկրորդական՝ Պէրպլէնեան Վարժարանի մէջ, զոր աւարտած է 1924-ին:

Ուսանողական լըջանին իսկ զբաղած մեծ ընդունակութիւն ցոյց տուած է եւ բազմաթիւ աւիթներով իր բանաստեղծութիւնները լոյս տեսած են չճանկատամարտի կիւրակերեայ թիւերուն մէջ, դժուարահաճ Շ. Միտաքեանի խմբագրողութեան օրով:

Ճիգմէնեանին հայրը զինք զրկած է Փարիզ իր հակառակորդն համապատասխան մասնագիտութեան մը հետեւելու համար: Փարիզի համալսարանին մէջ Գրիգոր հետեւած է քաղաքական եւ իմաստասիրութեան դիւտութեանց ու չժողովարարութեան դասընթացքին եւ զայն աւարտած լիւսանիւ է և կէրը ախողարամ:

Ճիգմէնեան, իտլալեա երեսուսուրդ, ի միճակի շեղու ազգային գրական կեանքը ուղիւով անհատական դիրքի մը տիրանալ եւ ինքնաբաւ դասնալ: Ձկրցաւ նաեւ առեւարտական սակարկելն հետ հաշտուիլ: Գիւնը-ցերեկ շարաւար աշխատելով Փիլիթապէս քաղաքուեցաւ:

Գրիգոր ձիգմէնեան սփիւռքի առաջին սերունդի մէջնէն պատրաստուած մտաւորական ուսերէն կարելի է համարել: Ունի բանաստեղծութիւններ եւ ընկերային-իմաստասիրական կեցողով աշխատասիրութիւններ, մեծ մասամբ ցրուած մեր պարբերականներուն մէջ:

Իր գեճօրը ամբողջացնելու համար կու տանք հատուած մը իրեն հետ տարիներու մանրամասնութիւն ունեցող եւ զինք մօտէն ճանչցող գրողէս Զ. Որբանիկի խոսած զամբանականէն:

Գրիգոր ձիգմէնեան հմանեցաւ Պրոմթեոսին, որ կովկասի լեռան վրայ իր լեռաբլէ կու տաք անգրին: Անգրը կը կշտանար անոր լեռաբլէ ալ կը գնդեցկանար օր ըստ օրէ, մինչդեռ Պրոմթեոս կը մահանար ամէն օր ինչ մը անելի:

Այսպէս է հուրիբալներուն հակասագիրքը: Բայց մարդկային ո՛ր հակասագիրք այնքան երբանիկ է որքան այս: Ակոմատես ըլլալ օրէ օր որ տուած կեանքը կը հասնի իր նպատակին – ցեղեցկացնել անյագուրդ անգրը, որ մտրկուութիւնն է: Ըսել որ հսկայ մարդկութիւնը իր գեղեցկութիւնը կը պարտի այն մեծուար, առանձին ամներուն, որոնք բանաստեղծներն են, որ անսակարկ ալ գերագոյն ուրախութեամբ իրենց լեռաբլէ կը հուրիբն, քէկուզ անհուն սիրտութիւն մը հզած ըլլայ իրենց կեանքը, ճիշդ այնպէս ինչպէս եղաւ սա դագաղին վեջ պառկող մարդը, որ բանաստեղծ Գրիգոր ձիգմէնեանն է:

Արգարիս ի՞նչ անուր տառապամբ, ի՞նչ աքնիկ սամբամբ մը եղաւ Գրիգորին կեանքը, փռուած վերքին երեսունհինգ տարիներու տարածքին վրայ: Եւ օսկայն ամ եղաւ այն բացառիկներէն որ կը խրոչին հրապարակ մետի իրենց անհասական ցուերը, բայց ինչ որ ալ ըլլայ արուեստը, ապրող էակին հասկան արտայայտութիւնն է մայի եւ առաջ: Կեճատեր, մարդկայնաւոր մարդը Գրիգորին մօտ կըցաւ տալ այնպիսի նիւտամբ մը իր հեքթաւածներուն հետ պատմութեամբներուն ժողովրդանց ու համահայեար, յամալի շեճուղ ալ ստուերներու խաղերով յօրինուած, որոնք կը խրոչեցնեն հասարակ ընթերցողը եւ խորամիկ կարեկցութեամբ ու զոգով մը կը համակեն իրագիկ ընթերցողը: Ռոպկետե իրապէս, Գրիգորին գրակառութիւնը կը հմանի ազամանդին որ միայն կը փայլի մութին մէջ: Հոն, հերքուածին ծոցը, արտին մքուրեամ մէջ կը գտնուի մտնաւար հոգածութեամբ մը պանուրտած ազամանը, որ բանաստեղծին տառապանքն է, եւ ինչպէս ազամանը՝ կը կազմուի հոգին մութ ընդերքներուն մէջ: Հոգի՛ն՝ որքան վրայէն անցնողը կ'ամոզիտանայ ձերսի երաշքը:

չբաշխեալ մը չէ՞ Յանուշի շերտը, որ կեանքը կ'ամ-
 ցընէ իր մեռածի սրտը զազազը կիսով քակու-
 լաւ ու մեռնելու համար ամար մէջ: Կ'ըսեն քէ
 Գրիգորին քերթուածները համեմատելիք են, կա-
 ռոս՝ մասնաւոր բանալիի, ընդունելութեան
 արժանանալու համար: Վասնզի ի սեր շերտին
 երաշխի, կեանքի երաշխի ինքնազան շերտին,
 այսինքն հոս քերթուածին առեղծուածը շողա-
 ղուն մեռածին մերթ ժպտուած շերտին դիակն
 է, ուրիշ խօսքով՝ տեսպահնը բանաստեղծին,
 որ միայն երաշխ է ուզած յանձնել իր գեանքե-
 րուն:

Այսպէս, այս բանաստեղծ մտքը, քր ան-
 հատ մարդը կը բանաձևէ ու կը տանձնէ իր մ-
 բուած մարդոց համայնքով, հակառակ անկէ
 ստացած տուայտանքին, կը հաւատար որ հա-
 մայնքը, ժողովուրդը մայրն է ամենտիմ, մեա-
 յուն իրականութիւնը, որով կը յաւերժանան իր
 կորնչելի գաւակները, իսկ քրո՞նք են այն մօր
 ամենավայել գաւակները քրէ ոչ բանաստեղծ-
 ները որոնք իրենց կորնչելիութիւնը գնդեցկու-
 քին ըրած ու տուած են, որպէսզի իրենց ժո-
 ղովուրդը փառքով ու անկորնչելիութիւնով մեր-
 կայ ըլլայ մարդկութեան ընտանիքին մէջ:

ԵՐՈՒԱՆԻ ԲԱԶԷՆ

*Մայիս 23-ին, Թեհրանի մէջ էր մանկանա-
 ցուն կնքած է պարսկական ծանօթ բանաստեղծ
 Երուանը Բազէն (խակական անունով Երուանը
 Միզդանյան): Մեծ էր թաւրիչ 1889-ին: Աշ-
 խատակցած էր շատ մը թերթերու ու հրատա-
 րակած՝ մէկ քանի գիրքեր: Նմանապէս իմրու-
 ցրած էր երգիծական շարթաթերթ մը ու հրա-
 տարակած գեղարուեստական ու գրական թղթն-
 քակութեամբ որոշոյց մը:*

ՎԱՀՐԱՄ ԱՎԱԶԱՆ

Մնած է վամ: Նախակրթութիւնը ստացած
 է ծննդավայրին մէջ: 1915-ին գաղթած է կով-
 կաս: Զբաղած է գրաշարութեամբ ու կոշկակա-
 ըութեամբ: Տուած է շուրջ քանի քերթուածներ
 ու բանաստեղծական գործեր, որոնցմէ կարեւ-
 րագոյնները կը Ակատիւն «Աշխատանքային»,
 «Ճանապարհին», «Երգեր կառուցման եւ յաղ-
 բանակի», «Վարսունքորդ հորիզոն», «Գը-
 ղին» ու այլն:

Մեծ դեր ունեցած է արեւմտեայ գրական
 վաստակը վերիշատարակելու ու տարածելու
 գործին մէջ, Վազարշակ Նոթենցի հետ:

ԱՇՈՏ ԱՍԼԸՆ

Մայիսի 14-ին, Թեհրանի մէջ էր մանկանա-
 ցուն կնքած է պարսկական բանաստեղծ Աշոտ
 Ասլըն: Յուզարկատրութիւնը տեղի առնեցած է
 15 Մայիսին: Յուզարկատրութեան մասնակցած
 են բազմաթիւ եայ ու պարսիկ սգակիրներ, ո-
 ղոնք ուղեկցած են դագաղին մինչև Դուլափի
 հայոց գերեզմանատունը:

Իրանահայ Գրողներու Միութեան կարգա-
 դրութեամբ կատարուած է կրօնական համդի-
 սաւոր արարողութիւն: Դաւրանական խօսած է
 Իլանահայերու Առաջնորդ Արտակ Արք. Եզա-
 Մանուկեան, հակիրճ տողերու մէջ տալով բա-
 նաստեղծին կենսագրականը: Ապա յաջորդաբար
 իրենց սրտայայտ խօսքը ըսած են Արեւրթ Մե-
 րանեանը, Իրանահայ գրողներու միութեան
 կողմէ, «Նոր էջ» գրական խմբակցութեան կազ-
 մէ Գալուստ հաննընը ու բանաստեղծին գրչա-
 կիցներուն անունով՝ վաստակաւոր բանաստեղծ
 Աքամ Գառնէ:

ԹԵՔԵՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

**Հ Ա Յ Կ Ա Շ Է Ն ՈՒՋՈՒՆԵԱՆ
ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ**

Թէքէեան Մշակութային Միութեան Հիմնադիրներու Մարմինը ուրախութեամբ կը յայտարարէ, թէ հիմնադիրներէն Պր. Հայկաշէն Ուզունեան հաստատած է գրական մրցանակ մը, որ պիտի ըլլայ տեսական:

Սփիւռփակայ մեր պայմաններում տակ, երբ արուեստագէտ գրողներ, բանասէրներ կամ պատմաբաններ ,տարիներու իրենց վաստակէն ետք, նիւթական ծանր գոհադուքիւններով հրապարակ կը համեն իրենց միտքին արգասիքը, տխուր անտարբերութիւնն է որ ընդհանրապէս կը դիմաորէ զիրենք:

Այդ հերոսական այլ ապերախտ աշխատանքին նուիրեալները ձեռով մը գնահատած ու քաջալերած ըլլալու համար, Թէքէեան Մշակութային Միութեան Հիմնադիրներու Մարմինը եւ անոր մտաւորական անդամներէն Հայկաշէն Ուզունեան պարտք գրացած են հաստատելու այս մրցանակը, որ պիտի կրէ «Թէքէեան Մշակութային Միութեան ՀԱՅԿԱՇԷՆ ՈՒՋՈՒՆԵԱՆ ՄՐՑԱՆԱԿ» անունը:

Մրցանակը պիտի ըլլայ տրամադրելի ամէն տարի, պայմանաւ որ մրցանակի արժանի գործ մը հրատարակուած ըլլայ այդ տարուան ընթացքին:

Մրցանակը պիտի յատկացուի լոյս տեսած գիրքերու հեղինակներուն՝ նկատի ունենալով գործին բովանդակութիւնը եւ գեղարուեստական կամ գիտական արժանիքները:

Պիտի յատկացուի տարեկան *ժէջ* մրցանակ միայն, 1000 (հազար) ամերիկեան տոյար, վերոյիշեալ բնօրէնով՝ լուսագոյն նկատուած երկի հեղինակին: Մրցանակի արժանի համարուած գործը կրնայ տարի մը ըլլալ գեղարուեստական (վէպ, պատմաւեպներու հաւաքածոյ, բանաստեղծութիւն, քատերախօսք եւ այլն), ուրիշ տարի մը՝ պատմաբանասիրական:

Կազմուած է գնահատիչ յանձնախումբ մը, որ կը բաղկանայ Պր. Պր. Հայկաշէն Ուզունեանէ, Վահէ-Վահեանէ, Բենիտմին Նուրիկեանէ եւ Գերսամ Ահարոնեանէ:

Այն պարագային, երբ դատական կազմի անդամներէն մէկը կամ միւսը հրատարակէ մրցանակի թեկնածու գործ մը, այդ անդամը կը փոխարինուի մտաւորական ուրիշ զէմբով մը:

Գնահատման առիթով նկատի պիտի առնուին այն գործերը, որոնք երբ օրինակով զրկուած են յիշեալ յանձնախումբին:

Ուստի կը խնդրուի որ բոլոր գիրք հրատարակողները երեքտեան օրինակ զրկեն ստորեւ տրուած հասցէին:

Գիրքերը պէտք է յանձնախումբին հասցնել մինչեւ տրուած տարեշրջանին յաջորդող Յունուարի վերջը:

Արդիւնքը, ամէն տարի, պիտի յայտարարուի Ջատկի օրը, հաղորդագրութեամբ մը:

Առաջին յատկացումին համար, բացառաբար, նկատի պիտի առնուին 1965 եւ 1966 տարիներու ընթացքին լոյս տեսած գործերը միասնաբար՝ իսկ 1967էն սկսեալ՝ իւրաքանչիւր տարուան ընթացքին լոյս տեսած գործերը:

Առաջին մրցանակը պիտի տրուի 1967ի Ս. Զատիկի օրը:

ԹԵՔԵՅԱՆ ՄՇԱԿ. ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԳԻՒՆԵՐՈՒ ՄԱՐՄԻՆ

Հասցէ

Tekeyan Cultural Association
Hatgashen Ouzounian Prize Committee
P. O. Box 617 Beirut - Lebanon



ՄԱՄԼՈՅ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ապրիլեան Եղեռնի Յիսնամեակի աւարտին, խումբ մը հայ երիտասարդներ, մղուած Յիսնամեակի առիքով յայտնուած հայ վերածննդեան գեղեցիկ ոգիէն, յղացած էին գաղափարը արժանավայել կոթողով մը յանբժացնելու յիսնամեայ յիշատակը հայ նահատակներուն եւ միանգամայն արտայայտելու Հայ ժողովուրդի երախտագիտական սէրն ու նուիրումը Լիբանանեան Հայրենիքին, անոր հողին վրայ բարձրացնելով գեղակերտ արձան մը:

Հայ Ժամդակագործ արուեստագէտներէն Զաւէն Խըտըշեան պատրաստած էր նախագիծ-տիպարը բարձրացուելիք Յուշարձանին: Արուեստագէտն ու իրեն հետ գործակցող հայ երիտասարդները յարմարացոյն վայր ընտրած էին Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Պիֆֆայայի հազարաւոր վրայ գտնուող ժայռի մը բարձունքը որ խոճալ դիրքն էր նման արձանի մը: Արձանը պիտի ունենար 10-12 մեթր բարձրութիւն, ներկայացնելով դէպի երկինք, դէպի անմահութիւն ձգտող հայ ժողովուրդի վերածնութեան անխաբար կեանքը:

Այս մտածումով, ահա, անոնք դիմեցին Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Խարէն Ա. Կաթողիկոսին, պարզելով անոր իրենց առաջադրութիւնը: Վեհափառ Հայրապետը սիրով ընդունաբեց իրենց փափաքին՝ Յուշարձանը Պիֆֆայայի բարձրահայեաց ժայռին վրայ բարձրացնելու համար: Ջերմօրէն գնահատելով իրենց գաղափարը, Ապրիլ 24-ին սրտայոյզ կոչ մը ուղղեց հայ ժողովուրդին իր գործոն քաժիճը բերելու առաջադրուած ազնիւ նպատակին իրագործման համար:

Անոնք իրենց ծրագիրը ներկայացուցին նաեւ Հայ Կաթողիկէ Կաթողիկէի պետ՝ Երբիմ Ամենապատուութիւն Գերբրգանիկ Հագեւոր Տիրոջ՝ Տ. Իգնատիոս-Պետրոս ԺԶ. Պաթանեան Պատրիարքին, որ հայրաբար զօրավիզ հանդիսացաւ առաջադրուած ծրագրին եւ օրհնելով գործը, խոստացաւ Հայ Կաթողիկէ Կաթողիկէի ամբողջական եւ անվերապահ մասնակցութիւնը:

Նայնպէս անոնք իրենց ծրագիրը պարզեցին Հայ Աւետարանական Կաթողիկէի պետ՝ Վերապատուելի Յովհաննէս Աւարանեանին, որ մեծապէս գնահատելով գաղափարն ու առաջադրութիւնը, յայտնեց որ Հայ Աւետարանական Կաթողիկէն ալ պիտի բերէ իր գործոն մասնակցութիւնը համագործակցութեամբ:

Կազմուեցաւ Կեդրոնական Յանձնախումբ մը, որ ունեցաւ հետեւեալ դիւանը:—

Ատենապետուհի	Տիկին Նինա ձիՏէձեան
Ատենադպիր	ՊՐՆ. ՊՕՂՈՍ ՏՈՒՉՅԵԱՆ
Գանձապահ	ՊՐՆ. ԱՐԱ ԵՐԵՒԱՆԵԱՆ
Հաշուապահ	ՊՐՆ. ԿԱՐԱՊԵՏ ԳԱՂԱՅՅԵԱՆ

Յանձնախումբի անդամներն են՝

Կերշ. Տ. Գարեգին Եսս. Սարգիսեան, Տիկին Նինա շիւտենեան, Տիկին Շաֆէ Գանիալեան, Օրիորդ Իվան Գասարեան, Օրիորդ Անի Ամասեան, Տիար Շաւարշ Թորիկեան, Տիար Նշան Խոջափեան, Տիար Արա Երեւանեան, Տիար Պօղոս Տուգենեան, Մեթր Կուպար Թուրսարգիսեան, Տաքթ. Ռոբովք Չորպանեան, Տիար Կարապետ Գալայեան, Տիար Երուանդ Փամպուլեան, Տիար Յովհաննէս Թիլեան, Տիար Գուրգէն Գասապեան, Տիար Առաքել Մինասեան եւ Տիար Գեորգ Գարանդեան :

Յանձնախումբը կազմեց նաեւ յատուկ մարմին մը՝ բաղկացած Պրն. Վառէ Սէքեանէ, Պրն. Փասքալ Փապուճեանէ, Պրն. Ժ. Կիւլէրշիմեանէ, Պրն. Ժ. Կիւլտէրէ եւ Պրն. Գուրգէն Գասապեանէ, որպէս խորհրդակցաներ զրազելու համար Յուշարձանի գեղարդիտական կազմերով :

Յաջորդական միստերու ընթացքին, տրուեցան հետեւեալ կարեւոր որոշումները՝

Ա. Կարեւորեան սահմաններում մէջ սպառնալի բոլոր հայ մարդերու մասնակցութիւնը, մասնաւորաբար երիտասարդ սերունդին, դպրոցական ուսանողութեան, առանց դաւանական, գաղափարական եւ ռելիգիոզ կարգի խտրութեան :

Բ. Դիմել բոլոր հայ կազմակերպութիւններում, իրենց գործում մասնակցութիւնը բերելու նուիրատուութեանց հաւաքման աշխատանքին :

Գ. Պատրաստել չորս կարգի մասնակցութեան ճարտեր՝ 1, 5, 10 եւ 25 Լիբանանեան ոսկիի արժէքով, բոլոր հայ խաւերէն, ըստ իրաւաբանական հայ մարդու սրտի փոփոխիւն ձեռք բերելու բոլորիմ մասնակցութիւնը :


Ուստի, կոչ կ'ուղղենք իւրաքանչիւր հայ մարդու, ինչ դաւանանքի, գաղափարի, դասակարգի եւ միութեան ալ պատկանի ան, սրտովիմ մասնակցելու այս համագային նուիրական գործին եւ իր սրտի չափով բերելու իր նիւթական բաժինը՝ զմեզով մասնակցութեան ճարտեր, որոնք հրատարակ կը շրջուին այսօրու ընդ սկսեալ :

Վստահելով մեր ազնուական ժողովուրդին գիտակից եւ սիրազգական աջակցութեան, սեա մենք կը ձեռնարկենք այս նուիրական գործին, հաւատքով, յայտով եւ սիրով :

ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂՆՈՆԻ
ՅԻՍՏԱՄԵԱԿԻ ՅԱՆՁՆԱՅՈՒՄԲ

20 Յունիս, 1966

Պէյրուք



ՇԱՐԼ ԱՋՆԱԽՈՒՐ ՊՐԱՋԵԼԻՈՅ ՄԷՋ

Աշխուրհանգիստի ղեկավար, երգահան և երգիչ Շարլ Աճառյանը, Պրաջեկիոյ Թեմակոմիտեի քննադատի կողմէ հրահրուած է Ռիօ Ծանէյրօ և Սան Փաւլօ, չորս երգահանդէս տալու համար:

Հայազգի արուեստագէտը իր նուագախումբով Ռիօ Ծանէյրօյի մէջ տուած է երկու երգահանդէս՝ աննախընթաց խանդավառութիւն ստեղծելով:

Երկու երգահանդէս ալ տուած է Սան Փաւլօյի մէջ:

Տոմսերու դիմերը եղած են 3 և 5 առլար: Թերթերը դրած են՝ թէ Շարլ Աճառյանը աստիճանաբար երգիչն է, որուն երգահանդէսներու տոմսերուն դիմերը այսօրէն բարձր գինով կը ծախուին:

Երկու քաղաքներուն մէջ ալ, հեղայ արահները լեցուած են ծայրէ ծայր և հազարաւոր արուեստասէրներ շին կրցած տեղ ապահովել:

Շարլ Աճառյանի մասին մեծ գովեստով արասայտուած են պրաջեկիական թերթերը և յիշատակած՝ թէ ան հայ է ծագումով:

Աճառյանը չբազրոյններուն յայտնած է թէ դրած է հինգ հարիւր երգեր և իր մաշնագծակներէն սպասած են քսան միլիոն օրինակ:

ԱՆԻ ԿԱՄԵՐԻ ՆՈՒԱԳԱՀԱՆԴՍՆԵՐԸ

Յրանսական Մշակութային Միութեան երաւելրով, Անգարայի մէջ, պոլստայ զաւմակտեորուի Ամի Կասէր տուած է զաշնակի երկու ժուագահանդէս:

Երիտասարդ հայուիինն ձեռք բերած մուսուսները մեծապէս գնահատուած են երաժշտական ֆինադանսմիրտ և արուեստատր հասարակութեամ կողմէ:

Ամի Կասէր արժանացած է խանդավառ ծափերու:

ԱՇՈՑ ՄԱԼԱՔԵԱՆԻ ՆՈՐ ԺԱՊԱԻՆԸ

Յրանսական անուանի բեմադրիչ Ալտա Մալաքեան (Անրի Վերնէօյ), վերջերս սկսած է զարմեւել Վերիկէ Կիրակիանի «25-րդ ժամը»: Ժապահէնին զանազան մասերը պիտի զարմուին Ետիտալիա, Հունգարիա և Մոնաքօ:

ՆԿԱՐՁՈՒՂԻ ԱՐՓԻՆԷ ԹԵՐԼԵՍԵԱՅԱՆԻ

Նիւ-Եորքի մէջ վերերս ցուցադրուած են նկարչուի Արփինէ Թերլեւեցեանի չորս գործերը: «Արեւամուտ», «Ընտանիքիս հետ», «Մադիկներ» և «Սիւսմայ լիճք»՝ ներշնչուած՝ վախտանց Ամանեանի «Սիւսմի Ափիմ» վեպէն:

Արեւամուտը արժանացած է առաջին մըրցանակի ու պիտի ցուցադրուի Նիւ-Եորքի քանազարանի մէջ:

«Ընտանիքիս հետ» նկարին գորդները ներկայացած են, բայց նկարչուին չէ աւագ ծախել գայն:

Արփինէ Թերլեւեցեան առանձին ցուցահանդէս մը պիտի կազմակերպուի Նիւ-Եորքի մէջ:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԶՈՒԹԱԿԱՀԱՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՏԵԼԵԱՆ

Հունուանի մաշնագիտի կայանին կողմէ վերջերս կազմակերպուած է ջուլիանի մեծ մրցում մը, որուն մասնակցած է նաև Լոնտանի Երաժշտութեան Արջայական Անդանիի կիպրահայ երիտասարդ ուսանող Յարութիւն Պետելեան, որ յաջող կերպով նուագած է Պրահայի դաւաարպոյն քուլերթին՝ ընկերակցութեամբ Պի Պի Սի Մըթիլի Սեմֆունի Օրգեսթրային: Երիտասարդ հայ արուեստագէտը արժանացած է առաջին մրցանակի - 300 անգլիական ֆլլորսով (25 հազար արաբիկ): Երկու նուագողներ ալ շահած են երկրորդ և երրորդ մրցանակները և

ստացած՝ 200 եւ 100 սակի (18 հազար 800 եւ 8400 արտոժի) :

Յարութիւն Պետէլեան ներկայիս 20 տարեկան է եւ փայլուն ազգայն էր խոստանայ: Զաւակն է կերպրահայ վաստակաւոր երաժիշտ եւ շուքակի ուսուցիչ Պր. Վահան Պետէլեանի:

Յարութիւն փոքր տարիքէն արտակարգ ձերբ ցոյց տուած եւ ստալ տարի ուշակերտած է հոբել:

1900-ին ժամանկեան է Լոնտոնի Երաժշտութեան Արքայական վարժարանին կողմէ կազմակերպուած Միջերկրականեան մրցումին եւ շահած կրթութիւնով ժը՝ երեք տարի ուսանելու համար Երաժշտութեան Արքայական Ակադեմիին մէջ, որուն շրջանը յաջողութեամբ աւարտած է 1903-ին Հաստուարի աստիճանից սիւզուտով, որ բարձրագոյն սիւզուտն է:

Վերայիշեալ վկայականը ստանալէ ետք, ժամանկեան է Արթուր Գրիբոյժի (Մեծն Բրիտանիոյ Արտեստի Կոմպոզիտորի) կազմակերպած մրցման եւ ստացած կրթութիւնով եւ 250 սակի նուէր ժը (20 հազար արտոժի) :

Յաջորդ տարին (1904) ժամանկեան է ուրիշ մրցումի ժը եւ կրկին ստացած 250 սակի նուէր ժը:

Յարութիւն Պետէլեան վերջին երկու տարիներուն աշակերտած է հայկաւոր շուքակահար Մանուկ Բարիբեանին:

ՊՈՍԹԸՆԻ ԼԱՅ ԱՅՊԱՅԻՆ ԵՐԳՉԱՆՈՒՄԻ 30-ԱՄԵԱԿԸ

Պարքնի Հայ Ազգային Երգչախումբը, վերջերս, փայլուն երգահանգիտով մը ստեղծ է իր հիմնադրութեան 30-ամեակը:

Երգահանդիտին ներկայ եղած է երաժշտասերներու մեծ բազմաթիւն մը, որ խանգավառութեամբ հետեւած է յայտագրի գործադրութեան եւ չնրմօրէն ծափահարած երգչախումբն ու իր աջանդ ու նուիրեալ զինավորը՝ Տիկին Անահիտ Քէշիշեանը:

Յայտագրին մաս կազմած են՝ հայկական տաղերի երգեր եւ իկեղեցական շարականներ:

Լարսյիմ Բաղդակ մը մեծ յարգութեամբ մուտքած է մեկ քանի հայկական դասական կըտարներ:

Հայ Ազգային Երգչախումբը Միացեալ Նահանգներու հայկական ամենէն հին երգչախումբն էր մեկն է: Աւարին խմբավորը՝ այժմու խմբավար Տիկին Քէշիշեանի ղեկավարը՝ Սիլվանա Տէր Մանուկեանն էր, որ միմյուս իր իկերական մասը՝ հմտութեամբ ու նուիրումով վարած էր երգչախումբը:

Հայ Ազգային Երգչախումբը Պարքնի հայ եւ օտար մշակութային կնիքներուն մէջ տըւած է բազմաթիւ համերգներ եւ արժանացած՝ երաժշտագետներու բարձր գնահատումին:

Երգչախումբի բազմաթիւ երգերը առնուած են ժողովրդական վրայ եւ տարածուած ամերիկեան շատ մը բազմաթիւ մէջ:

Ամերիկահայ յայտնի երգահան Ալան Յովհաննէս գրած է. «Այս խումբը այն հազարագոյն խումբն է, որոնք կրնան նշգրտօրէն մեկնաբանել Կոմիտաս վարդապետի երաժշտի մեղեդիները, առանց արուեստագետի մը մակերեսային պարզաբանութեան: Անոր խումբ մըն է, իր բազմաթիւ երգերով»:


ԱՊԱՏԱՆԻ ՀԳՈՒՍԱՆՆ ԵՐԳՉԱՆՈՒՄԻ ԼԱՄԵՐԳԸ

Ազատանի (Պարսկաստան) Հայ Մշակութային Միութեան Հիմնադրութեան Երգչախումբը, վերջերս, յաջող երգահանգէն մը տուած է Պր. Ժոսա Միսաեանի ղեկավարութեամբ եւ նուագախումբի ու պարախումբի ժամանակցութեամբ:

Համերգէն ետք տեղի ունեցած է թէյսեղան-պարահանգէն:

ԵՆԱՆԻՑ ՄՐՑԱՆԱԿ

1906-ի Հմնախիտ Գրական Մրցանակը աըւուած է Պարսն Վահրաւ Մովսեանին, իր Հայալու Ռեկորմերը հատարին համար:



«ԲԱԳԻՆ»ի այս տարուան երկրորդ բացառիկը նուիրուած
պիտի ըլլայ

Ա.Ի.ԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆԻ

ծննդեան 100-ամեակին :

Հայ գրականութեան «Թուխ Արամազդ»ին նուիրուած այս
բացառիկին իրենց մասնակցութիւնը կը բերեն բազմաթիւ հին և
նոր գրողներ :

Բացառիկը լոյս կը տեսնէ Օգոստոսի վերջերը :

ՄՏԱՑՈՒԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ


- 1.- ՇՈՂԵՐ (ֆունկցիներ) - Լեւոն Շահանի - 1966, Պէյրուք
- 2.- ԽԻՆԻ ԵՒ ԱՐՑՈՒՆՔ (պատմութիւններ) - Գ. Գուլամ - 1965, Թեհրան
- 3.- ԳՐՈՒԱԳՆԵՐ ՆԿԱՐՉԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՍ - Արմիս - 1965, Հալէպ
- 4.- ՍԵՒ ԱՊՐԻԼ 24 (1915), ՆՈՐ ԱՊՐԻԼ 24-Ը 1965 - Հրանդ Արեղեան -
1965, Փարիզ
- 5.- ԵՐԳԵՐ ՈՒ ԽՈՂԵՐ - Խմբագրեց՝ Հայկ Անէմեան - 1965, Թեհրան
- 6.- ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ
ԵՒ ԱՆՈՐ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆԸ (1966), տպուած Պէյրուք
- 7.- ՆԱՄԱԿ՝ ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ - Յ. Նարանի 1966, Պէյրուք
- 8.- ՋԱՀԵՐԹ - հոգեւոր պարբերագիրք - Յունիս 1966 - Պէյրուք
- 9.- ԱՀԵԿԱՆ (պարբերագրք) - Խմբագիր՝ Գ. Շահինեան - Պէյրուք 1966

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻԲԱՆԱՆ 20 Լ. ՈՍԿԻ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 7 ՏՈՂԱՐ

ՀԱՏԱՎԱՅՄՈՒ 2 Լ. ՈՍԿԻ



Վարչութեան հասցէ.—

G. SASSOUNI

Rue Sélim Boustani, Beyrouth - Liban

digitised by A.R.A.R.@